



# Հայաստանի պետական գրողական միունիություն

ԵՐԵՎԱՆ · 1993

# **ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ**

**(Անհայտ զրողի օրագիրը)**



ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱԾՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ  
«ԴԵՎԻ ԵՐԿԻՐ» ՄԱՏԵՆԱՉԱՐ  
թիվ 9

Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի վերջին օրերը  
(Կազմ. Իեղ.՝ Ա. Հարությունյան.) -Եր.: Մ. Վարանդյան, 1992- էջ  
Աշխատությունը ներկայացնում է 1920-ի ռազմական անցույարձը, Հայաստանի  
տնտեսական, բարամտական իրավիճակը: Պատկերված են զորական ու բարամտական  
գործիքների դիմանկարները, փոփերական արժեք ներկայացնող ռազմական նշանակու-  
րյան պաշտոնական գրություններ, զարտնի ձեռագրերի ու հեռախոսագրույցների  
գրառումներ: Օրագրի բոլոր էջերից հատնում է հայրենանք գրողի կերպարը, Ազատ,  
Անկախ ու Միացյալ Հայաստանի գույափախությունը:

Գիրքը նովառտեսում է պատմաբանների, ինչպես նաև բնիքբացուների լոյն շրր-  
ումներ համար:

Ա 05030209013  
784(02)-92

ԳՄԴ 63.3 (2Հ)52

ԶԵՆՈՎԻՅ Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ Ի ԻՐԱՏԱՐԱԿՄԱՆ  
պատրաստեց Սարգիս Հարությունյանը:

ՀՅՈՒՅ ԱՐԱՐԱԿ

(C) «Մ. Վարանդյան» ԻՐԱՏԱՐԱԿՀՈՒԹՅՈՒՆ: 1992

## ՆՎԻՐՈՒՄ Եմ

Անահիտին՝

Նորածին իմ դուստրին,

Երջանկահիշատակ մորս,

Աքսորների ճանապարհներին կյանք մաշած  
ուսուցչուհուս,

Ծննդաբերության, հույսի եւ պոեզիայի,

Ու նաեւ ռազմի աստվածուհուն,  
Բոլոր սերունդներին ի մի բերող  
Ազգի հավերժության խորհրդանիշ

ԱՆԱՀԻՏԻՆ

## ԱՌԱՋԱԲԱՆ

«Ռուսաստանը կընկնի իր խելագար պայքարի մեջ, եւ մենք պետք ենք լինենք, որ նրա անկման ժամանակ էլ ն ա հ ա տ ա կ չդառնանք»:

Այսպիսի խոսքեր այսօր հաճախ են հնչում ոչ միայն հանրաժողովներում հրապարակներում, այլեւ գրավոր խոսքի ձեւով, եւ հատկապես ոչ պաշտոնական բազմապիսի հրատարակություններում: Եվ դժվար է հավատալ, որ այս մարգարեական խոսքերը գրված են 70 տարի առաջ՝ մինչեւ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելը: Դժվար է հավատալ նաեւ ամբողջ օրագրին, որ Ներկայացվում է ընթերցողին: Թվում է, թե, եթե զանց առնենք փաստագրական նյութը, ապա օրագրի հեղինակի խոհերն ու մտքերը պարզապես մեր ժամանակակցին են պատկանում եւ արհեստականորեն դրված են պատմական օրագրի հեղինակի բերանում: «Ես չեմ հավատում այդ սոցիալիստական հեղափոխությանը, որ զալիս է տգետ Ռուսաստանից եւ նպատակ ունի անցնելու լուսավոր Եվրոպան:

Մարդկության այն ծանր լուծը, որ իր ուսերի վրա է վերցրել ֆիզիկապես, մտավորապես տկար, թույլ, անկազմակերպ Ռուսաստանը՝ անկարող է տանել եւ կընկրկի կես ճանապարհին՝ մեծ հիասթափություն պատճառելով համայն մարդկությանը եւ հուսահատության դուռը բանալով բոլոր նր-

րանց համար, ովքեր խելոք եւ հաստատուն ճամփով գնում էին դեպի այդ բարձրագույն իդեալը՝ նրան հասնելու եւ նրանից օգտվելու»:

Այս ամենը հիմք ընդունելով հեղինակն իրավացիորեն գտնում է, որ հայրս պետք է զգույշ լինենք, որ ռուսական կայսրության անկման ժամանակ նահատակ չդառնանք: 1920 թ. հուլիսի 10-ի սույն գրառումների առիթ էր հանդիսացել Ղարաբաղի հայկական զորամասերի հրամանատար Դրոյի՝ Ղարաբաղը լքելու որոշումը, մի հանգամանք, որը շատերը հակված էին բացատրել Հայաստանից ծշմարիտ տեղեկատվության բացակայությամբ: Մինչդեռ օրագրի հեղինակը այդպիսի վարքի դրդապատճառը համարում է հայ զորավարի այլասերված ռուսասիրությունը. «Ստույգ տեղեկություններ կան, որ Դրոն ասել է. «Ռուսների դեմ գնդակ արձակած չկամ»: Եթե մի գիտակից զորավար այսպես է տրամաբանում, ապա էլ ինչո՞ւ մեղադրել հասարակ գինվորին: Սուտ է, որ ասում են, թե պատմությունը մեզ միշտ դավաճանել է, ընդհակառակը՝ պատմությունը շարունակ մեզ հետ է եղել եւ միշտ էլ նպաստավոր հանգամանքներով: Մենք ինքներս ենք, որ մեզ ստոր կերպով գիտակցաբար, թե անգիտակցաբար դավաճանել ենք»:

Ստորաքարշության եւ ստրկամտության հասնող ռուսասիրության դեմ հեղինակի ընդվզումը գոյացել է ոչ թե կույր ռուսատյացությունից, (հարկ է նշել, որ չորրորդ բրիգադայում նա եղել է ռուսաց լեզվի ամենահմուտ գինվորականը եւ թարգմանիչը), այլեւ պատմական իրերի խոր ըմբռնումից: «Հիմա մենք ճիշտ ենք ըմբռնում իրերի դրությունը, իսկական դրությունը: Ոչ ոքի չապավինել, այլ մեր հույսը դնել մեզ վրա...»

Անհրաժեշտ է նշել, որ հայ ժողովուրդը այս զաղափարին հասավ արցախյան շարժման երկու տարվա պայքարից հետո՝ 1989 թ. Վերջերին:

Այս առումով, կարելի է խորապես ափսոսալ, որ ծանոթ չինելով սույն օրագրին, մենք տառապանքով ու մեծագույն ուժերի գնով նվաճեցինք այն, ինչ տակավին 1920 թ. եղել է ժողովրդի սեփականությունը, ներկայացվել հայ մտավորականի կողմից հիմնավորապես փաստարկված, իբրև պատմության դասերի թելադրանք: Այս տեսակետից, սույն օրագիրը բացառիկ արժեք է ներկայացնում ոչ միայն իր փաստական նյութերով, այլեւ որպես զաղափարախոսություն՝ հայեցի մտածող մարդու ազգային զաղափարախոսություն: Արժե ավելացնել՝ նաեւ մի մարդու, որ քաջատեղյակ է Եվրոպական քաղաքակրթության նվաճումներին, այլ խոսքով, ոչ միայն գեղարվեստական զրականությանը, այլեւ հասարակական-քաղաքական ուսմունքներին, այդ թվում նաեւ մարքսիստական վարդապետությանը: Եվ ամենեւին էլ զարմանալի չէ, որ մեզ համար այսօր անհայտ հեղինակը իր ժամանակին ճանաչված ու հարգված անոնք եղել, չնայած իր երիտասարդ հասակին: Ներկայումս մենք կարող ենք համարձակորեն պնդել, որ նա որպես անձնավորություն՝ իր առաքելության գիտակցումով ու գործին ցու-

ցաբերած նվիրումով եւ նամանավանդ կատարած աշխատանքով, ապահովաբար իր պատվավոր տեղն ունի հայոց պատմագրության մեջ: Այդպէս պնդելու մեր հանդգնությունը խարսխվում է այն ըմբռնման վրա, որ Ներկայացվող ժամանակահատվածը, 1920 թ. վերջին կեսը՝ բացառիկ դրամատիզմով եւ ողբերգականությամբ հազեցած մի ժամանակ, թերեւս նոր պատմության ամենամութ հատվածներից է, եթե չասենք նաև արհեստականորեն ամենամշուշապատը: Վերոհիշյալ ժամանակահատվածի մասին փաստագրական հարուստ նյութ է Ներկայացված սույն օրագրում: Եվ այդ նյութը լույս է սփռում մեր նորագույն պատմության առեղծվածային դրվագի՝ Կարսի անկման խորհրդավորության վրա: Այսօր չկա մեր պատմությամբ հետաքրքրվող որեւէ հայ մարդ, որին խորապես չհուզի այդ հարցը: Հարկ է նշել, որ բացառվում են այն թյուր կարծիքները, թե իբր Հայաստանի զորական եւ այլ պետական մարմինները անհրաժեշտ ուշադրություն չեն ցուցաբերել Կարսի պաշտպանության խնդրին: Հոկտեմբերի 1-ի գրառումից պարզվում է, որ այդ օրերին Հայաստանը արդեն գտնվում էր զինվորական դրության մեջ եւ ձեռք էին առնվել խստագույն միջոցներ հանցավորներին նույնիսկ զինվորական դաշտային դատարանի միջոցով պատժելու, իսկ երկրագործության նախարար Ս. Վրացյանը եւ խնամատարության նախարար Բաբայանը Կարս են գործուղվել բարձրագույն լիազորություններով: Հոկտեմբերի 2-ին հեղինակը գրում է, որ դեռեւս Ղարսի ուղղությամբ ամեն ինչ խաղաղ է, բացի տեղական բնույթ կրող առաջապահների թեթև ընդհարումներից: «Մենք դեռ Ղարսում ուժեր ենք կենտրոնացնում ընդհանուր հարձակման անցնելու համար. հայկական զորամասերը նույն օրը հարձակման են անցել եւ նրանց հաջողվել է վերագրավել Նովո-Սելիմ գյուղը, շուտով ռազմագիտական նկատառումներով այդ դիրքերից ետ են քաշվել»: Հեղինակի համոզմամբ, դրանք եղել են ռազմական խորամանկ քայլեր՝ թշնամուն կուրացնելու, նրա ուժերը Ղարսի տակ կենտրոնացնելու եւ ապա, ընդհանուր հարձակում ձեռնարկելով, վերջնականապես ջախջախնելու թշնամու ուժը: «Մենք պետք ենք հաղթենք թշնամուն Ղարսի պատերի տակ, ինչ գնով էլ լինի: Հայ երկիրը ոտքի է կանգնած, նա այժմ Ներկայացնում է մի ընդարձակ ռազմաճակատ, ուր մարդ թե կին, ծեր թե մանուկ, գիտուն թե տգետ, շինական ու քաղաքացի, որպես մի մարդ ոտքի են ելել կամ մեռնելու կամ ապրելու՝ վեցնականապես մեռցնելու այն գազանին, որ իր հոգեվարդի մեջ ուզում է մեզ էլ իր հետ տանել»: Հարկ է նշել, որ սա միայն հեղինակի սուբյեկտիվ կարծիքը չէ: Հոկտեմբերի 3-ին վարչապետ Օհանջանյանից ստացված հեռագրում եւս ընդգծվում է, որ Ղարսում մեր դրությունը ամուր է, կտրուկ միջոցներ են ձեռք առնված լիկվիդացիայի ենթարկելու տաճկական ավանտյուրան: Հայաստանի չորս ծայրերից կամավորներ են գնում դեպի Ալեքսով ու Ղարս: Իսկ նախարար Գյուլիսանդարյանը Դիլի-

շանի դաշնակցական ընկերների ընդհանուր ժողովում հայտարարել է, որ կառավարությունը որոշել է Ղարսը պահել այնքան ժամանակ, քանի դեռ այդ ճակատը պաշտպանող զորամասի 3/4 մասը չի ջարդվել: Բացի դրանից, Ղարսի ճակատ մեկնող բարձրաստիճան զորականներից սկսած մինչեւ ետին սպան անձնական պատասխանատվության են ենթարկվելու՝ եթե առանց հրահանգի իրենց հանձնված ճակատը կամ դիրքը թողնեն, եւ դա այն դեպքում, եթե անզամ անկարելի լինի դիրքերը պահել: Ուրիշ խոսքով, նահանջել բառը իսպառ վերացված է մեջտեղից:

Հոկտեմբերի 10-12-ի գրառումից պարզվում է, որ Ղարս -Սարիղամիշ ճակատի գլխավոր շտաբը գեներալ Միլիկյանի ղեկավարությամբ գտնվում է Ալեքպոյում եւ հիմնականում զբաղված է զինվորների նորահավաքով, զգեստավորելով ու խմբավորելով. «Քանի մոտենում ենք Ղարսին, այնքան դրությունը լուրջ ենք գտնում: Ղարսի անկումը մազից է կախված եղել, բայց հրաշքով, թե մի աներեվույթ ուժով փրկված է եղել»:

Անսահման լավատեսորեն տրամադրված հեղինակի խոսքի մեջ առաջին հուսահատական հնչերանգն է իրեն զզացնել տալիս: Այնուամենայնիվ նա մնում է անդրդվելիորեն տոկուն, եւ համոզված է, որ ամբողջ Հայաստանը մի կատարյալ ռազմադաշտ է իրենից ներկայացնում տղամարդիկ զորահավաքի են ենթարկված, ամենքը մի նպատակի են գնում կռվելու թշնամու դեմ վճռականությամբ: Սակայն կա մի հանգամանք, որը կարող է ճակատագրական լինել. «Զարմանալի է հայ ժողովրդի հոգեբանությունն ու բնազդը, նա չի հավատում հայ բանակի քիչ թե շատ անուն հանած զորավարներին, սպայությանը...»: Այսպիսի անորոշ դրության մեջ հրամանատարությունը որոշում է հոկտեմբերի 14-ին ընդհանուր հարձակման անցնել բոլոր ճակատներով: 25 հազարանոց հայկական զորամասերը կռվի մեջ մտան թվով գերազանց թուրք կանոնավոր բանակի եւ խուժան թշնամու հետ: Նրա համառ դիմադրությունը կոտրելով, հայկական բանակը 5 վերստ խոյացավ դեպի հակառակորդի դիրքերը, սակայն շուտով, չհասցնելով վերախմբավորվել, ստիպված էր նահանջել նախկին դիրքերը: Թշնամին նոյնիսկ որոշ կետերում խորացավ մեր թիկունքը: Այդ փոքրիկ անհաջողությունից հետո ժողովրդի մեջ մասնավոր խուժապ է սկսվում: Այստեղ առաջին անգամ հեղինակի խոսքի մեջ նկատվում է հուսահատական նշաններ: «Այդ կռվից պարզ երեւաց, որ մեր զինվորները չեն կռվում... չկռվելուվ հանդերձ՝ խմբովին դասալքություն կար, այնպես որ չորս կողմից ինքնապաշտպանության խմբակները, որ մեկ-մեկ պահապան հրեշտակներ էին բերդաբաղաքի համար մասնավորապես, իսկ Հայաստանում ընդհանրապես, տասնյակներով դասալիքներ էին բերում գիշեր թե ցերեկ:

Մարդ ուղղակի ապշարությունը մնում է մեր բանակը հրաշալիորեն հագնված է Անզիայից նոր ստացված հազուստներով, սպառազինված է լավ, ինչպես եւ պարենավորված: Ապա ինչո՞ւ չեն կռվում, ի՞նչ է պատճառը: Ա-

ուազ մենք բոլորս էլ հավատացած էինք, որ եթե տաճկական ճակատում ունենանք մի տասհագարանոց բանակ, առանց այլեւայլության կզրավենք Տաճկահայաստանը, բայց այժմ կրկնակի են մեր ուժերը, եւ թշնամին 15-16 Վերստի վրա է»: Կարս են ժամանում Հայաստանի բանակի ընդհանուր հրամանատար Նազարբեկյանը զորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հետ միասին: Ընդհանուր հրամանատարությունը հոգ էր տանում ոչ միայն Բերդաքաղաքի, այլեւ նրա թեւերի պաշտպանության ուղղությամբ: Մերտենեկի զորամասի պարտականությունն էր ապահովել Ղարսի զորամասի աջ թեւը, իսկ ձախ թեւում՝ Սամավատ գյուղում գտնվում էր մաներային պահեստի ուժը: Հոկտեմբերի 28-ին զրառման մեջ նշվում է, որ թշնամին նեղել է մեր ուժերին Սարիղամիշի, Սամավաթի եւ Անիի ուղղություններով եւ սպառնում է Ղարսին: Ծրագրված է կորիվներ մղել Բերդաքաղաքի պարիսպների տակ: Դրությունը ճգնաժամային է, բայց ոչ բոլորովին անհուսալի: Այսպես է հեղինակի ընդհանուր գնահատականը: Նույն օրը զրանցված է օրագրում. «Մեզ համար տխուր գիշեր է, մեր սրտից արյուն է կաթում. առանց թշնամու կողմից ուժեղ ճնշում լինելու Մերտենեկի զորամասը պարտված է առանց մի գնդակ արձակելու»: Սա, ասես Ղարսի անկման նախերգանքը լինի:

Հոկտեմբերի 30. հայ ժողովրդի համար առեղծվածային թնջուկի սկիզբ: Օրագրում կարդում ենք. «Այսօր ցերեկվա ժամը 12-ին թուրքերը խուժել են Բերդաքաղաք: Խուժապը մեծ է եղել, եւ շատերը չեն կարողացել փախչել: Քաղաքի զրավումը հանկարծակի է եղել, որով եւ անհնար է եղել մեր շտաբների ծառայողներին, ժողովրդի մեծ մասին եւ օ՝, խայտառակություն, այնտեղ են մնացել նաեւ Ղարսի ճակատի ընդհանուր շտաբի պետ, գնդապետ Վերիլովը, խնամատարության նախարար Բաբայանը, զինվորական նախկին նախարար զորավար Արարատյանը, զորավար Փիրումյանը եւ ուրիշ շատ ու շատ զինվորականներ, հասարակական զործիչներ... Մանրամասնություններ չկան, եկողները ահաբեկված տալիս են հակասական տեղեկություններ, բայց մի բան պարզ է, որ այդ պոռնիկ Բերդաքաղաքը չի կարողացել դիմանալ նույնիսկ մի բանի ժամ»:

Հարկ է նշել, որ կարսի աղետից առաջ հայկական բանակը ունեցել է շուրջ 47 հազար զինվոր, Կարսի բերդում տեղադրված էին 300 թնդանոթ, որոնցից միայն 2-ը տասը վայրկյանի շափ կրակ են բացել ու լոել: Թուրքական բանակը, որ շուրջ 7800 զինվորներ ուներ, բերդի զրավումով տասնմեկ հազար գերիներ է վերցնում: Հինգ օր հետո թուրքերը նույնպիսի հեշտությամբ զրավում են Ալեքպոյն ու նրա բերդը, շիանդիպելով ոչ զորքի եւ ոչ էլ բնակչության դիմադրությանը: Գրաված զինանոցներից ձեռք բերած զինամթերքով Կարաբերիրը այնպես է զինում իր բանակը, որ այն դառնում է թուրքական բանակի առավել լավ զինված եւ տեխնիկապես հագեցած մասը:

Նոյեմբերի 5-ին՝ հենց Ալեքպոյի անկման օրը ընդհատվում է օրագիրը: Ինչո՞ւ է ընդհատվել, գուցե հեղինակը գոհվե՞լ է Ալեքպոյի տակ կոհվներում: Այդ մասին պատմությունը լրում է, բայց ինչպե՞ս է օրագիրը հայտնրվել Ախլջիսայում, շենքերից մեկի միջնապատում, կարմիր լաթի մեջ փաթաթած տետրի ձեւով: <Եղինակի անձը պարզելու ուղղությամբ մեր բոլոր պրատումներն արդյունք չտվեցին: Օրագրի մեջ կան ակնարկներ այն մասին, որ հեղինակը կապված է Վրաստանի հետ: Մի առիթով նշում է, որ ընտանիքը Գուղառութայում է, Աբխազիայում: Մեկ ուրիշ անգամ հցեվանի գեղատեսիլ ճանապարհները նրան հիշեցնում են Վրաստանը եւ Աբխազիան: Ռուսական լեզվի լավիմացությունը ենթադրել է տալիս, որ նա արեւելահայ է, սակայն նրա համակրանքը մշտապես արեւմտահայերի կողմն է: Լեզուն կիրք արեւելահայերեն է եւ միայն մեկ տեղ, նոյեմբերի 4-ի գրառման մեջ, արեւմտահայերենի հետք կա. «Տեր Աստված, փախչում է եւ ձիավոր, եւ հետեւակ, եւ մեծ եւ փոքր, բոլորն այ փախչում են: Սրիկաներ»:

Ախլջիսացիները արեւմտահայեր են, որ զաղթել են Էրզրումից 1830 թ. եւ ապա դարձել ռուսահպատակ եւ արեւելահայ: Գուցեեւ հեղինակի լեզվական սիմբիոզը հետեւանք է այս հանգամանքին:

Օրագրի մեջ հիշատակված կա մի անձնավորություն՝ Աշոտ Հովհաննիսյան, իր ժամանակին լեզրանի հանձնախմբի քարտուղարը: Պատմաբան Սուրեն Հակոբյանի միջոցով տեղեկանալով իր անձի հետ կապված օրագրային դրվագի բովանդակությանը, նա հիշել էր այդ դեպքի մանրամասնությունները եւ խեղբել կարծ ժամանակով ձեռագիրն իրեն տրամադրել: Սակայն հարմար չգտանք այդ քայլին դիմելու, քանի որ ինքը ներկայացված էր ոչ նպաստավոր ձեւով: Իմ զգուշավորությունը պայմանավորված էր նաև երջանկահիշատակ պատմաբան Նիկոլայ Կարապետյանի աշխատություններում առկա Աշոտ Հովհաննիսյանի անձի ոչ նպաստավոր զնահատականով: Մեր չափազանց զգուշավորությունը բխում էր պատասխանատվության զգացումից, այն գիտակցումից, որ սույն օրագիրը բացառիկ արժեք է ներկայացնում եւ այն պետք է պահել, պահպանել մի գեղեցիկ օր հանրությանը հանձնելու: Այդ բաղձալի օրը հորիզոնում չէր երեւում: Իշխում էին բրեժնեւյան բռնակալության դժողակ տարիները, երբ հիմնական թիրախը այլախոհությունն էր, եւ մարդիկ նույնիսկ հալածվում ու բանտարկվում էին գիրք կարդալու կամ այն պարզապես պահելու համար: Այդ շրջանում զգուշավորության նկատառումներով, մանավանդ ուրիշներին վնասած շինելու նպատակով, ոչնչացրել եմ շատ գրական նյութեր, այդ թվում նաև Արցախյան շարժման մեծ երախտավոր ՀՀ. Հովհաննեսբեկովի ինձ հասցեագրած նամակները: Բայց այս մեկին, սույն օրագրին ոչ միայն ձեռք չեմ տվել, այլեւ, պահել, պահպանել եմ իբրեւ մասունք, ավելին. մի քանի օրինակ պատճենահանված լուսանկարների ձեւով. (այն տարիներին դեռեւս

չկային պատճենման սարքեր) թաքցրել տարբեր տեղերում, զգուշանալով պատահական դիպվածներից: Իսկ դրանք բացառված չեն, քանի որ հետապնդումներն ու հալածանքները պաշտոնական բացարձակ բնույթ են ստացել, որոնք հասցրին 1975 թ. համալսարանից, դասախոսական աշխատանքից ինձ հեռացնելուն:

Այդ ծանր օրերին օրագրի ընթերցումները ինձ համար լուսավոր պահեր են եղել եւ ներարկել են լավատեսություն: Հաղորդակցվելով օրագրի հեղինակի պայծառ կերպարին, անհնարին է պատմական լավատեսությամբ շվարակվել: Թվում է, թե սա պարականոն է ինչում, քանի որ ներկայացված ժամանակաշրջանը հայոց նորագույն պատմության ամենաողբերգական փուլն է եւ հետեւապես պետք է հուսաբեկիչ լինի՝ ընթերցողը պետք է կոտըրվի. հատկապես ահավոր է օրագրում ներկայացված վերջին շաբաթվա արտասովոր պարզկա գիշերներին հայոց զորքի նահանջի եւ ժողովրդի զաղթի տեսարանը՝ ի տես մեր դարավոր թշնամիների: Սակայն օրագրի ամբողջական տպավորությունը ընթերցողին պահում է հայրենասիրական բարձր զգացմունքների, լավատեսության ոլորտներում: Հնարավոր չէ չընկատել որ օրագրում «Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստան» արտահայտության բոլոր բառերը մեծատառով են գրվում, իսկ այդ բառերը առաջին անգամ գործածվելիս ներկայացվել են փոքրատառով, եւ հեղինակը վրայից ուղղել, դարձրել է գլխատառով: Այս պարզ փաստի մեջ դրսեւորվում է հեղինակի վերաբերմունքը ոչ միայն հայրենիքի, այլեւ ազատության, անկախության եւ միասնության բարոյական ըմբռնման նկատմամբ: Հայրենիքի եւ ազատության զաղափարը, անկախ անձնավորության իդեալը հեղինակի համար անբաժանելի հասկացություններ են: Չի կարելի շրջանցել այն փաստը, որ բարոյապես վեհացման իր ճանապարհին նա մշտապես ներշնչվել է զորավար Սեպուհի կերպարով:

Սույն օրագրի գոյության համար մենք պարտական ենք ոչ միայն հեղինակին, այլեւ զորավար Սեպուհին, որը սերունդների եւ մանավանդ մշակույթի հանդեպ գերագույն պատասխանատվության ներքին թելադրանքով, պայմաններ է ստեղծել, որ հայ գրողն ազատ լինի բոլոր տեսակի հոգսերից եւ գրի առնի կենդանի պատմությունը: Տաղտկալի թիկունքից դեպի գործող ռազմաճակատ ձգտող երիտասարդին տեղում պահելու համար զորավարը նույնիսկ փորձել է սիրաշահել, նրան այդ օրերին շատ դժվար ճարվող նժոյզ նվիրելով: Մեկ ուրիշը, մանավանդ բարձրաստիճան գինվորականը, թերեւս վիրավորվեր, որ այս բոլորով հանդերձ երիտասարդ գրողը ցանկություն է դրսեւորել լրել զորամասը եւ հրետանավոր Կլիշի հետ մեկնել այլ՝ ռազմական վայր: Սակայն զորավար Սեպուհը բարձր է մուս անձնական կեղծ պատվախնդությունից, առաջնորդվելով սերունդներին պատմական իրադարձությունների ճշմարիտ պատկերը գրավոր թողնելու

ՎԵՒ ՆԱՊԱՏԱԿՈՎ: Նա գրողին թույլատրում է օգտվել նույնիսկ գաղտնի գեկուցագրերից եւ հեռախոսագրույցներից: Սա բացառիկ երեւութ է մեր պատմության մեջ, առավել եւս զորականների կյանքում: Ուստի օրագրից հառնում է ոչ միայն հայ գրող-մտավորականի, այլեւ զորական մտավորականի՝ գիրու զրականություն գնահատող պետական-գինվորական գործչի բացառիկ կերպարը:

Հայ ժողովրդի ազգային ինքնազիտակցության զարթոնքի այս օրերին, երբ վերստին մեր պատմության մեջ իրենց արժանի տեղը գրավեցին ազատագրական պայքարի բեռն իրենց ուսերին կրած մարտիկները, առնը-վազն տարօրինակ է, որ Անդրանիկի, Գետրդ Չառւշի, Նժեհի եւ մյուս նվիրյալների կողքին չի հիշատակվում զորավար Սեպուհի անունը: Ամո-թալի փաստ է, որ հայկական հանրագիտարանում նույնիսկ մեկ պարբերությամբ չի հիշատակված Սեպուհի վաստակը, ուստի հուսով ենք որ օրագրի հրապարակումը ինչ-որ չափով կլրացնի այդ բացը:

Արցախյան շարժման այս բուռն օրերին, երբ մենք ակամայից ականա-տես դարձանք ոչ միայն սրընթաց դեպքերի, այլեւ պատկերացումների վե-րանայման, սույն օրագիրը թերեւս խթան հանդիսանա, որպեսզի նրա հե-ղինակի օրինակին հետեւելով գտնվեն մարդիկ, ովքեր նոյն նվիրումով արձանագրեն ոչ միայն պատմական դեպքերը, այլեւ պատկերացումների անսպասելի շրջադարձը: Մերունդների համար դա չափազանց կարեւոր է: Ազգը պահում են ոչ միայն ռազմի դաշտում կռվող մարտիկները, այլեւ հոգեւոր պայքարի նվիրյալները: Մեր երիտասարդությանն այսօր, առավել քան երբեւէ, պետք են ազգի մարտնչող ոգին բարձրացնող կենդանի եւ հա-րազատ կերպարները:

ԶԵՌԱԳՐԻ ՎԵՐՁԱՆՄԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ իրենց մասնակցությունն են բերել ֆիզիկոս Համլետ Չաքարյանը եւ բանասեր Ալվարդ Թուրքանդարյանը:

Սարգիս Հարությունյան  
24. 05. 90 թ.

Երկար դադարից հետո նորից գրիչս վերցնում եմ այն ժամանակ, երբ Հայաստանի մանուկ հանրապետությունը ապրում է իր ամենավտանգավոր եւ ամենավճռական վայրկյանը: Ներքին խռովությունները մի կողմից, Հյուսիսի եւ Հարավի վտանգը մյուս կողմից, Սան-Ռեմոյում մեր բարդ հարցի վերջնական լուծումը՝ երրորդ կողմից, խճճվել են իրար եւ ալեկոծում են հայ պետական բովանդակ կյանքը:

Ես նորագույն հայ գրականության ամենաբախտավոր եւ միաժամանակ ամենադժբախտ երիտասարդ գրողներից մեկն եմ, որին վերապահվել է անաշառ կերպով գրի առնելու այն բոլոր անցքերը, որոնք ներկայումս տեղի են ունենում մեր պետական կյանքում ընդհանրապես եւ ռազմաճակատներում մասնավորապես:

Ես այժմ Հայաստանի հանրապետության 4-րդ Բրիգադայի սուկական գինվոր եմ: Մեր իրամանատարը հայ գինվորական հայտնի հերոս Սեպուհն է: Լինելով գինվորական՝ այս մարդը միաժամանակ գրականության սիրահար է, մի բան, որ պակասում է մեր մյուս հերոսներին:

Մրանից ուղիղ երկու ամիս առաջ՝ իմ անփութության պատճռով, նեցուկների օրենքից օգտվելու պատճառ վկայական շունենալուս համար՝ զորահավաքի ատյանը ինձ ձերբակալեց, որպես դասալիք եւ խսկական դասալիքների հետ երեւանից քշեց մինչեւ Իգդիր, ուր ճակատ էր բռնած 4-րդ Բրիգադան եւ ուր նշանակված էի ծառայելու: Իհարկե, ինձ, որպես գիտակից քաղաքացու, ցավ էր պատճռում այն, որ ինձ քշում են որպես դասալիք:

Սակայն ինձ միսիթարում էր այն հանգամանքը, որ զորական եւ մյուս նախարարներից սկսած մինչեւ ինձ անձամբ ճանաչող քաղաքիները լավ գիտեն, որ ես նեցուկի օրենքով ազատված եմ զորակոչից: Սակայն փաստը մնում է փաստ, որ ես համապատասխան վկայական շունեի՝ շնայած կառավարության երիցս նախազգուշացման, հետեւաբար, ես դասալիք էի բարիս բովանդակ իմաստով: Այս խստությունները ինձ ուրախացնում էին: Երբ իրամանատար Սեպուհը ինձ տեսավ զարմանքից գոշեց. «Վերջապես կառավարությունը խելքի է եկել եւ մտավորականները բանակ է ուղարկում»:

Երբ գլխիս եկածը պատմեցի, նա Ժպտաց եւ ասաց. «Էլի անձար-

Ներն են տուժում, մինչ ունետրների որդիները եւ մտավորական կոչված ճարպիկ սրիկաները, որոնց թիվը բանակների է հասնում, նեցուկի զանազան կեղծ վկայականներով ազատվում են զորակոչից: Պետք է վերացնել նեցուկների օրենքը, որ ներկա վայրկյանին պատուեաս է մեր երկրին»:

Երեկոյան թեյին Սեպուիի մոտ էի, սեղանին մասնակցում էին շտաբի պետ եւ իմ մտերիմ ընկեր տաճկահայ սպա Գրիգոր Ամիրյանը, հրամանատարի թիկնապահ եւ խորհրդակից Ստեփան Շաղիկյանը եւ կարնետ Պետո Կատունյանը: Վերջինս բոլշեվիկների կողմից Սեւ ծով ածված դենիկինյան բանակից նոր էր եկել ծառայելու հայկական բանակում: Վերջապես նրան հաջողվել էր Ռազմավիրական ճանապարհով իր մտերիմ ձին Վրաստանի սահմաններից անց կացնել եւ բերել մինչեւ Իգդիր, մի բան, որ մեր Բրիգադայի համար ահազին նշանակություն ուներ, որովհետեւ հեծելազորի կողմից Բրիգադան շատ թույլ էր: Այս բանը գուցե ժպիտ խլե մեր ապագա ընթերցող սերունդից, բայց այդ այդպես է:

Խոսք բացվեց մեր հանրապետության ամրապնդման մասին եւ զորահավաքի հարցի շուրջ: Բոլորս էլ եկանք այն միակ եզրակացության, որ առաջին հերթին, եթե չցրվի պառամենտը եւ նրա անդամները ինարավորություն չունենան ժողովրդի մեջ եւ ռազմաճակատներում լինելու եւ եթե զորահավաքի գործը շարունակի այսպես թույլ ընթանալ, մենք չպիտի կարողանանք մեր ազատությունը եւ անկախությունը պահպանել: Այս եզրակացությունից հետո, Պետոյից եւ ինձանից զատ մյուսները խորհրդավոր կերպով իրար նայեցին եւ ժպտացին: Հետո միայն բանից պարզվեց, որ Սեպուիի ու իր շտաբը որպիսի բան մտածել են ամիսներ առաջ եւ ուզեցել են իրականացնել գենքի ուժով, նույնիսկ այդ ուղղությամբ Սեպուիի կողմից վերջնազրի ձեւով մի քանի անգամ առաջարկներ են եղել կառավարությանը, որ մինչեւ իիմա էլ շատ ծածուկ է պահվել: Շաղիկյանի ասելով այդ էր պատճառը, որ կառավարությունը վերցերս միայն սկսել էր ամենախիստ զորահավաք, որի առաջին լախտի հարվածը, ի թիվս շատերի, եւ իմ զլխին իջավ:

Իսկապես, վերն ասացի, ձիերի կողմից մեր Բրիգադան շատ ըլքավոր էր, որա համար էլ Սեպուիի ամեն շանք գործ էր դնում այդ պակասը լրացնելու: Կառավարությունը անկարող էր բավարարել մեր պահանջը, որովհետեւ Ղարաբաղի եւ Զանգեզուրի գոյամարտը

լանել էր նրա ամբողջ ուշադրությունը, եւ պետական նոր ու ահ-ռելի ծախսերի դուռ էր բաց արել:

Վերջնականապես կտրելով իր հույսը կառավարության օգնությունից՝ Սեպուհին միտք իղացավ կարնետ Պետոյին ու ինձ ուղարկել Թիֆլիս, Բաթում եւ Սուխումի շրջանը հանգանակություններ անելու եւ Բաթումում ձիեր գնելու: Համենայն դեպս, ասաց Սեպուհը, վերջին անգամ, երբ մեզ համապատասխան վկայականներ տվեց, եթե Զեր միսիան անհաջող անցնի, Բաթումի ժողովուրդը մեր Բրիգադայի համար մի ավտոմոբիլ պարտավոր է առնել, որովհետեւ նա ինձ շատ խոստումներ է արել, բայց մինչեւ օրս ոչ մի գործնական քայլի չի դիմել: Մեզ տրված էր մի ամիս ժամանակամիջոց, որից հետո մենք պարտավոր էինք շուտ վերադառնալ: Ես եւ Պետոն ապրիլի 7-ին հգդիրից դուրս եկանք, Զատիկի հետեւյալ օրը հասանք Թիֆլիս: Ամիս ու կես ժամանակվա ընթացքում մենք մեզ վրա դրված պարտականությունը կատարեցինք եւ վերադարձանք Շիլիցան, ուր Սեպուհը եկել էր Ներքին խռովությունները ճնշելու: Մենք Վրաստանում լսեցինք մեր Ներքին խռովությունների մասին եւ շատ ցավ զգացինք, որովհետեւ, եթե այդ խռովությունները հաջողությամբ պսակվեին, մենք շատ բան կկորցնեինք: Ականատեսները պատմում եին, որ եթե Սեպուհի գորամասերը չիինեին, մեր պետական կյանքը անդառնալիորեն կորած էր: Բոլշեվիկյան ապստամբությունը ճնշելու գործում մեծ դեր են խաղացել գյուղացիները եւ արեւմտահայ զանգվածը: Այս ցույց է տալիս, որ այնքան էլ հեշտ չէ մի ազատ, անկախ ժողովրդի ձեռքից իշխանությունը խլել եւ նրա վիզը փաթաթել մի այլ թեկուզ ծայրահեղ սովետական կարգերը: Ինձ թվում է, որ ես շեղվեցի իմ օրագրից՝ անդրադառնալով բոլշեվիկյան ապստամբությանը:

## Շիլիցան, 14 հունիսի

Այս շրջանում համարյա թե հանգիստ է, Սեպուհը կարողացավ այս վտանգավոր շրջանը եւս մաքրել մեր անկախության թշնամի տարրերից: Մեր եւ Ադրբեյջանի սահմանամերձ մի քանի թաթար եւ հայ գյուղեր թեեւ դեռ դիմադրություն են ցույց տալիս, բայց նրանք եւս շուտով գենքը վայր կդնեն, որովհետեւ մեր զորքը եւ ժողովրդական կամավորական գնդերը վճռել են ինչ էլ որ լինի, այս երկու օ-

րում, նրանց վերջնական հարված տալ: Եղանակները անձրեւային են եւ հնարավորություն չեն տալիս մեր զորամասերին առաջ շարժվել: Խռովարար գյուղերի դիրքը անառիկ է, եւ մեր զորամասերը մազլցելով են հարձակման դիմում: Առանձնապես ուժեղ դիմադրություն է ցույց տալիս Ղարաղայլեի ձորը, մենք կորուստներ չունենք: Երեկոյան լուր ստացվեց, որ հայ գյուղացիները խմբերով զալիս հանձնվում են եւ խոստովանում, որ իրենք խաբված են: Թաթար գյուղերին նույնպես առաջարկված է անձնատուր լինել, բայց նրանք վախենալով վրեժինդրական ցասումից եւ շիաշտվելով այն բանի հետ, որ «ստրուկ գավառները» իրենց պիտի իշխեն՝ չեն հանձնվում:

## Դիլիջան, 15 հունիսի

Ղարաղայլեի ձորը, որ բացառապես թաթար գյուղեր էին, վերջապես մաքրվեց: Թաթարները փախել էին, թողնելով քսանիինգ ըսպանված եւ մոտ հազար զլուխ տավար, ոչխար, ձի, ահազին քանակությամբ հացահատիկ, ալյուր, յուղ, պանիր, զորգեր եւ տնային կահ-կարասիք: Շրջակա հայ գյուղացիները գողունի կարողացել են այդ ավարի մի մասը թալանել, իսկ մնացած մեծագույն մասը անցել է կառավարությանը:

Սեպուհը, իր հիվանդության պատճառով, մի ամիս արձակուրդ է ստացել, իսկ իշխանությունը հանձնել է գեներալ Խանկալամովին:

Այստեղ է եկել պառլամենտի անդամ Արշակ Հովհաննիսյանը հողային հարցը կանոնավորելու: Այս նշան է, որ կառավարությունը սկսել է լուրջ ուշադրություն դարձնել այս շրջանի վրա: Տեղափոխության անկանոնության պատճառով մի քանի օր է, որ շրջանս ալյուր չի ստացել եւ ժողովրդի մեջ մի որոշ դժկամություն է սկսվել: Այսօր պառլամենտի անդամ Ա. Հովհաննիսյանը հեռագրով հաղորդեց Երեւան, որ անմիջապես այլուր ուղարկեն, որ իսկույն կարգադրվել է:

Առավոտյան զորական նախարարից մի ընդարձակ հեռագիր ստացվեց Սեպուհի անունով, որի մեջ նախարարն ուզում է իմանալ Սեպուհի կարծիքը Զանգիբասարի եւ Կողբի աղահանքերի մոտակառագմական գործողությունների մասին, որոնք ներկայումս անհրաժեշտություն են մեր տնտեսությունը եւ թիկունքը ապահովելու: Այդ

հեռագրի ամենանշանավոր կետն այն է, որ Վրացիները ուզում են շարժվել Օլթի Վրա՝ կտրելով մեր Սել ծով դուրս զալու հնարավորությունը: Այդտեղ եւս մի նոր կարեւոր ճակատ է սկսվում: Վրացիները պարզապես ուզում են շնչախեղդ անել մեզ, նրանք լավ են գիտակցում, որ եթե մեզ հաջողվի Սել ծով դուրս զալ, նրանց Բաթումը, որպես առեւտրական կենտրոն՝ կդառնա մի երկրորդ Փոթի: Բայց թող լավ իմանան Վրացի աշխարհակալները, որ մենք նրանց այնտեղ եւս կշարդենք, ինչպես այդ պատահեց 1918թ., եւ այս անզամվա պատերազմը երբեք չի նմանվի առաջվան:

Հրամանատար Սեպուհը մի պատասխան-հեռագրում այն կարծիքը հայտնեց, որ այդ երբեք ճակատներում միաժամանակ ռազմական գործողություններ սկսելը աննպատակահարմար է, նրա կարծիքով պետք է նախ մեկը սկսել եւ վերջացնել եւ ապա մյուսները, մանավանդ, որ դեռ Դիլիջանի եւ Շամշադինի շրջաններից անմիտքար լուրեր են հասնում: Պառլամենտի անդամ Հովհաննիսյանը ամեն շանք գործ է դնում, որ Սեպուհը մնա այստեղ, իսկ կառավարությունը հարմար է գտնում նրան տեղափոխել Սուրմալուի շրջանը: Անշուշտ այս պատասխանը Զորական նախարարին եւս ուրախություն պիտի պատճառի: Խանկալամովը լինելով նախկին ռուս բանակի գեներալ՝ սրտացավ վերաբերմունք ցույց չի տալիս յուր պաշտոնին, հենց որ ժողովուրդը լսեց, որ իշխանության գլուխ անցել է այդ փալաս մարդը, անկարգությունները նորից սկսեցին ձեռ տալ:

Խոսակցության ժամանակ Ծաղիկյանը նույնպես չի ուզում, որ Սեպուհը այստեղ մնա եւ նա վախ է հայտնում, որ Զանգիբասարը եւս կարող է մեր գլխին Բեյութ-Վեդի դառնալ: Իսկ Կողբը մաքրելու համար նա գտնում է, որ առանց Սեպուհի ոչինչ գլուխ չի զա, որովհետեւ այդտեղի քրդերը սոսկում են նախկին հեղափոխականից, եւ նրա անունն ու համբավը ծանոթ է նրանց: Դեռ բանակցությունները շարունակվում են կառավարության հետ, տեսնենք ինչ դուրս կզա: Ես եւս ուզում եմ, որ մենք լինենք մեր ռազմաճակատում, թեեւ իգդիրը սարսափելի շոգ է ու ջերմ եւ տենդի վայր է: Ավելի լավ է զըրկվենք ամառանոցի հաճույքը վայելելուց, քան թե նոր ձեռնարկված մեր ռազմաճակատներում անհաջողություններ կրենք: Սակայն, ցավալին այն է, որ այս կերպ չեն մտածում մեր ռուսահայ սպաներից շատերը, որոնց հաճույքը միշտ գերադասելի է մեր անկախության նույնիսկ ամենամեծ հաճույքից: Այլասերված սրիկաներ են դրանք:

Զորական նախարարի այս հեռագրից հետո՝ այստեղ կարծես թե ինձ համար դժոխք է, եւ ես իոզով ցանկանում եմ լինել Զանգիբասարի կոհիվներին կամ Կողբի ու Օլթիի գործողություններին։ Այս էր պատճառը, որ երեկ երեկոյան հանդիպելով մեր հանրապետության առանձին թնդանոթախմբի կապիտան Կիհչին, որ հանրածանոթ էր քաջությամբ եւ իրետանային արվեստի կատարելությամբ, նրան խնդրեցի, որ ինձ վերցնի իր մոտ, որպես արտիլերիստ։ Նա շատ ուրախացավ, որ ես լավ հայերեն գիտեմ եւ ինքս եմ ցանկանում նրա մոտ լինել։ Դուք ինձ հայերեն կսովորեցնեք, ասաց նա, իսկ ես Ձեզ վեց ամսվա ընթացքում կդարձնեմ հրաշալի արտիլերիստ։ Ուրախությունս ավելի մեծ եղավ, երբ իմացա, որ նա մեկնում է Երեւան խնդրելու, որ իր թնդանոթախումբը տեղափոխեն Զանգեզուր<sup>1</sup>։ Ասում է, որ իր թնդանոթները այնպիսի գործ չեն տեսնի Դիլիջանի անտառապատ լեռներում, ինչպես Արարատի տափարակ դաշտավայրում։ Նա ել ձանձրացել էր պարապ մնալուց։ Այսօր զորական նախարարից վերցնականապես պատասխան ստացվեց, որ Խանկալամովը մնում է այս շրջանը, իսկ Սեպուհը պետք է հանգստանա եւ կազդուրվի։ Այս շատ լավ եղավ՝ իմ եւ Ծաղիկյանի ցանկությունը կատարվեց։

Անկանկած, որ Զանգեզուրի, Կողբի եւ Օլթիի գործողություններին մենք եւս մաս ու բաժին պիտի ունենանք։ Սեպուհի Դիլիջանի շրջան շթողնելը, երկու պատճառ ունի։ Նախ այն, որ նա համաձայնում էր մնալ այստեղ այն դեպքում, եթե Իգդիրի մեր զորամասերը շտաբով հանդերձ տեղափոխվեն այստեղ եւ երկրորդ այն, որ Նազարբեկյանի գլխավոր շտաբի պետ Վեքիլովը այստեղ կուղարկեն։ Հրամանատարի երկու առաջարկն էլ մերժվեցին կարեւոր պատճառաբանություններով, այն է, Վեքիլովը պիտի դեկավարի Զանգիբասարի գործողությունները, իսկ Իգդիրի մեր զորամասը պիտի պաշտպանի իր բռնած դիրքերը, որպեսզի թուրքերը չանցնեն մեր քամակը։ Երեւան գալուց առաջ՝ կապիտան Կիհչը իմ խնդրի համաձայն միջնորդեց հրամանատար Սեպուհին, որ վերցինս ինձ ազատի իր բրիգադայից եւ թույլ տա, որ ես ծառայեմ Կիհչի կազմի մեջ։ Բացարձակ

1 Հավանաբար վրիպում է՝ պետք է լինի Զանգիբասար (Հ.Ս.):

մերժումն ստացավ խեղճ Կլիշը, եւ ես ել տխրեցի, որովհետեւ կազատվեի պարապությունից եւ լայն ազատության մեջ կլինեի:

Շտաբներում գրագրություն անել չեմ սիրում, բայց իմ չար բախտից, ինչ կյանքի մեջ էլ որ ընկնեմ, ինչ շրջան էլ որ սկսվի ինձ համար, միշտ եւ միշտ գրելու գործը ինձ են հանձնում: Ուղղակի վիրավորական է. մեզ՝ գրողներիս եւ մտավորականներիս. այն գինվորականները միայն կարծում են, որ կարող ենք շատ-շատ հեռախոսող, հեռագրից եւ գրասենյակի ծառայող լինել:

## 17 հունիսի

Շամշադինից տխուր լուրեր են հասնում, պարզվում է, որ մեր հանրապետության թշնամի տարրերը կաշառքի ստոր միջոցով գրավում են ժողովրդին իրենց կողմը եւ կռվի են հանում մեր դեմ: Այդ շրջանից միայն մի քանի գյուղեր կան մեր ձեռքում, իսկ մեծամասնությունը հիմարացած եղբայրասպան կռվի է ելել:

Պաշտոնական տեղեկություններ ունենք, որ այդ շրջանի գյուղացիները բոլշեվիկներից հաց եւ փող են ստանում եւ բոլշեվիկ դառնում: Ինձ զարմացնում է մի հանգամանք, որ «կոմունիստները» այնքան միամիտ են, որ կարծում են, թե հայ գյուղացիները սոցիալիստ կղառնան: Բայց չի կարելի չխոստովանել, որ ռուս «կոմունիստները» իսկական աշխատանք են թափում սոցիալիստական հեղափոխությունը պատվաստելու կովկասի փոքր ժողովուրդներին: Նրանք գրականության եւ քարոզչության վրա շատ լուրջ ուշադրություն են դարձնում, կարողանում են մասսաներին հեղաշրջել: Բացի լավ խոսքերից, նրանք աշխատավոր ժողովրդին գործնական օժանդակություն են ցույց տալիս: Այսպես, օրինակ, նրանք Շամշադինի եւ Ղազախի հայ գյուղացիությանը ալյուր են բաժանում, եւ մեր փողերը, որ արժեքով այնքան ընկած են համեմատած կովկասի բոնիրին, հավասար կուրսով են ընդունում: Անշուշտ, այսպիսի գործնական քայլերը մեծապես ազդում են գյուղացիության վրա: Մեր պետական հազար ու մի հոգսերը թույլ չեն տալիս, որ ամեն մի շրջանի կարող լինենք բավարարել եւ հետեւանքը լինում է այն, որ հայ ժողովուրդի սոված մասը ձգտում է դեպի բոլշեվիզմը:

Շամշադինի շրջանի մասին ես մոռացա ժամանակին մի կարեւոր դոկումենտի մասին խոսել: Ամսի 15-ին գիշերվա ժամը 3-ին

պառլամենտի անդամ Արշակ Հովհաննիսյանը ուղիղ թելով խոսել է զորական նախարարի հետ՝ ընդարձակ գեկուցում տալով վերջինիս: Զեկուցման մեջ նա առանձնապես կանգ է առել մի քանի անհետաձգելի խնդիրների շուրջը եւ նոր զորք ուղարկել, ի նկատի ունենալով, որ տեղիս ուժերը թե քիչ են, եւ թե անհուսալի, երկրորդը՝ հացի խնդիրն է, որ ալեկոծում է սոված ժողովուրդը: Զորական նախարարը խոստացավ Արշակ Հովհաննիսյանի առաջարկները իսկույն եւեթքավարարել: Իմիցի այլոց զորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը հաղորդում է, որ Քամիլ փաշայի Մոսկվայի պատվիրակները Հայաստանի ջնջման քաղաքականության մեջ անհաջողության են հանդիպել: Մոսկվան ճանաչել է մեր անկախությունը եւ քեմալիստներին ասել, որ Նրանք որեւէ զործողություն սկսել Հայաստանի դեմ չեն կարող: Եվ այդ բանը պատճառաբանում են Նրանով, որ Հայաստանը սոված է, եւ իրենք չեն կարող Նրան բավարարել: Այստեղից կարելի է եզրակացնել այն, որ Նրանք քեմալիստների հետ, ձեռք-ձեռքի տված, չեն արշավում մեր վրա, ոչ թե Նրա համար, որ ուզում են Հայաստանը ազատ ու անկախ լինի, այլ Նրա համար, որ կարող են իրենց համարումը կորցնել: Եթե սոված չլինենք, ուրեմն սովետականները մեր երկիրը նույնպես կդարձնեն քաղաքական կռվի ասպարեզ, որից միայն մեր դարավոր թշնամին՝ թուրք-թաթար այդ հակահեղափոխական զանգվածները պիտի օգտվեին: Չեմ կարող տանել, երբ այսքան երկար պիտի մնանք այս այլասերված շրջանը: Զարմանալի բան, այսպիսի զորքը, որի վրա այնքան մեծ հույսեր կան, անհուսալի է: Մեպուիը կարծում է, որ մեր զորքը կռվում է միմիայն թուրքի դեմ, իսկ ռուսին ուրախությամբ է ընդունում: Մեր ռուսասիրության պատճառով ես վախենում եմ, մեր ազատությունը ձեռքից թողնենք, հետո զղջանք, երբ ուշ կլինի արդեն:

Իմ կարծիքով, ոսի դեմ, ինչ լոգունզով էլ, որ նա զալու լինի՝ պիտի կռվել, որովհետեւ մեր անկախության տեսանկյունից նա ավելի վտանգավոր է, քան թե տնտեսապես շատ ավելի քայլայված եւ խավարի ու տգիտության մեջ խարխափող թուրք-թաթարականությունը:

Այսօր բավական է զրեմ, զնամ մի քիչ ման զամ: Գլուխս պտույտ է զալիս, դա Նրանից է, որ սնունդ չեմ ստանում: Ֆունտ ու կես սեւ ցամաք հացից ինչ սնունդ կարելի է ստանալ: Իմ եւ Շաղիկյանի ձիով պտույտը ուրախ անցավ: Զի շատ չեմ նստել, դրա համար

Ել խամությունս իսկույն երեւան եկավ: Չնայած, որ հայտնի Բեքազն էր տակս, բայց չեի կարող քշել: Զիերն էլ զիտեն, թե ո՞վ է նստողը, սանձը միակերպ չպահելուս համար՝ Բեքազն անհանգիստ էր եւ զլուխը մի կողմի վրա էր պահում: Թեեւ Ծաղիկյանը գտնում էր, որ իր նախկին ձին լավերից է, բայց դրա ձի լինելը շտեսանք՝ էշի նման էր քայլում, ստիպված եղա մտրակի դիմել: Ծաղիկյանը ամեն բանում ինձ էր մեղադրում, բայց ինձ այնպես է թվում, որ նա չի ուզում Բեքազի համարումը ձգել: Միասին զնացինք քաղաքից դուրս, Ծաղիկյանը նույնպես ուրիշ ձի էր նստել, որին շատ էր հավանում: Առաքական ձիերի չափ գեղեցիկ ոտքեր ուներ, լայն ռնգածակեր եւ բարակ մեջք ուներ, ափսոս, որ քուռակով էր:

Ծանապարհին հանդիպում էինք տաճկահայ գեղջկուհիների, որոնք շալակով զանազան տեսակի բանցարեղեն էին բերում ուտելու համար: Նրանք բոբիկ էին, ցնցոտիներով, նիհար, արեւակեզ դեմքերով: Չգիտեմ ինչ կարող էին զգալ, երբ ձիով անցնում էինք, սակայն, հոգեբան մարդը իսկույն նրանց վրա միմիայն անեծք ու դըգոհություն կարող էր կարդալ: Մի բան էլ կարելի է պարզ տեսնել, որ եկող կամ զնացող ձիավոր կամ հետիոտն ճամփորդ նրանց վախ չեր ազդում, ինչպես նրանք սովոր էին վախենալ Տաճկաստանում՝ դաշտից վերադառնալիս: Նրանք գիտակցում էին, որ ապրում են ազատ, անկախ Հայաստանում: Երեւի այդ էր պատճառը, որ նրանց հոգնած քայլվածքի մեջ նկատվում էր հաստատակամություն:

Զի ունենալը լավ բան է, Սեպուհը պատուհանից նայում էր, երբ մենք արշավով գալիս էինք: Նա մտածում էր ինձ մի լավ ձի տալ, որ իմ փափազն է: Երեւի դրա համար հարցրեց, թե ինքս կարող եմ իմ սեփական ձիուն նայել, ես դրական պատասխան տվի, չգիտեմ պիտի կարողանամ, թե՝ ոչ: Ասենք, ինչ մի դժվար բան է, որ ձի պահող վարժ տղաներ կան, նրանցից կարելի է սովորել:

Այս լավ զբոսանքից հետո, թեյթ խմեցի Սեպուհի մոտ: Տիկին Մաքրուհին ինձ եւս ձուկ տվեց, որ հրամանատարը կեսօրին մի քանի ուռկան ձգելով կարողացել էր այնքան բռնել, որ տասը հոգուց ավել կերանք եւ կշտացանք: Պետք է խոստովանել, որ տիկին Մաքրուհի Սեպուհը շատ ազնիվ առատաձեռն եւ բացսիրտ կին է, բարի է եւ հյուրերին երբեք դժգոհ չի ճամփում: Ակզբում թվաց, թե քիչ հըպարտ է, սակայն ես շարաշար սխալված եմ՝ ճիշտ հակառակն է, որքա ն սխալ է արտաքնապես եւ երեւույթապես դատելմարդկանց:

Հերիք է, այսօր երկրորդ անգամն է, որ գրում եմ, զիշերվա ժամը տասն է արդեն, իհմա կվերադառնան Արշակ Հովհաննիսյանը Եւ Ստեփան Շաղիկյանը ու դալմաղալ կսարքեն, թե ինչու այսպես շուտ եմ տուն եկել: Լավ ենք իրար գտել Եւ երեկոներին այնպես ձզգվում ենք ամեն մեկս մեր մահճակալի վրա, Եւ սկսում ենք վիճել օրվա թարմ հարցերի մասին, իսկ մեր պառավ տանտիրուիին միշտ գանգատվում է, որ մեր զինվորական բաժին մսից չի կարելի կերակուր պատրաստել, միայն սա է, որ անժամանակ ներս է մտնում մեր սենյակը Եւ վաղվա թեյի ու ճաշի համար հիշեցնում:

## 18 Իունիսի

Այսօր Խանկալամովի շտաբից լուր ստացվեց, որ առավոտյան ժամի 4-ին Զանգիբասարի գործողություններն արդեն սկսվել են: Մեր կառավարությունը նախ վերջնագիր է տվել այդ ապստամբ գյուղերին, որ զինաթափ լինեն, եթե ուզում են ապրել Հայաստանի հողամասում: Նրանք վերջնագրին պատասխանել են մարտահրավերով: Առաջին գրոհին մերոնք գրավել են մի գյուղ:

Ծանապարհների Եւ հաղորդակցության նախարարը այսօր ցերեկ հեռագրելով հրամայել է այստեղի փոստ հեռագրական պետին, որ վերջինս այստեղից հեռագրի Ղարաքիլիսե, որպեսզի այնտեղից լուր տան Ալեքպոյ, որ մարդատար զնացըները Ալեքպոյից չանցնեն Ուլուխանլու, որ թաթար գյուղացիները կտրել են հեռագրաթելը Եւ Երեւի երկաթուղու գիծը վտանգել: Զարմանալի է մեր կառավարության խաղաղասիրությունը Եւ համբերությունը: Ուլուխանլուն մի քանի անգամ իր ժանգոտ ատամներն է ցույց տվել մեր հանրապետությանը, բայց մինչեւ իհմա էլ դեռ նրանց հետ վերջնական հաշիվ չի տեսնը-ված: Այդ մի քանի գյուղերը, որ Զանգիբասարի մի մասն են կազմում, ոչ ինազանդվում են մեր կարգերին Եւ ճանաչում մեր կառավարությանը Եւ ոչ էլ թողնում հեռանում:

Շամշադինում դրությունը բարդանում է, ապստամբ հայ գյուղացիները թնդանոթներով են գործում մեր դեմ, Երեւի սովետական զորքերը նրանց հրահրելուց բացի գործուն աջակցություն են ցույց տալիս ռազմական գործողությունների ժամանակ: Խեղճ, խաբված Եւ ստրկահոգի հայ ռուսասեր ժողովուրդ, քո արածների համար շատ պիտի զղաս, բայց արդեն շատ ուշ կլինի Եւ կամ մեծ գոհերի

զնով:

Լուր կա, որ մերոնք Ուզունթալայից նահանջել են մինչեւ իշեան (Քարվանսարա): Այստեղից մի գունդ գնաց մեր զորամասերին օգնության: Երեւի Զանգիբասարի գործողության վերջնական հաշվեհարդարից հետո կառավարությունն իր լուրջ ուշադրությունը պիտի կենտրոնացնի այս շրջանի վրա: Այսօր 10 օր է, որ ընտանիքին հեռագիր եմ տվել. Սուխումի շրջանի Պուտառտա քաղաք, բայց ցարդ պատասխան չեմ ստացել, Վրաստանի գործակալությունը երեւի զգուշանում է, որովհետեւ հասցեն Սեպուհի վրա էի տվել:

Նրանք պատերազմ ունենալով «սովետական» Ադրբեյջանի հետ, կասկածում են: Իրավունք ունեն, որովհետեւ ներկայումս լրտեսները վխտում են թե մեր մոտ եւ թե վրաց երկրում: Է՞՝, այս հացի ճգնաժամը ուղղակի մարդուն ջղայնացնում է. ժամը երեքն է արդեն, բայց մի օրվա պարենը դեռ չէ տրված: Անոթի փորով զինվորություն անել շատ դժվար է: Ես, որ առհասարակ ուտելու մասին շատ չէի մտածում, հիմա կարծես սկսել եմ կարեւորություն տալ այդ հարցին: Պուտե նրանից է, որ աշքերս չեն լիանում հացից: Իսկ մեր պահեստապետը, բացի լավ ուտելուց, նաեւ զինի է խմում, չնայած, որ զինվորական իշխանությունը արգելել է: Նրանից շատ քշերն են զոհ: Չզիտեմ ինչու մեր հրամանատարը դրան չէ փոխում, երեւի քիչ բան զիտի նրա զեղծումների մասին:

## 19 հունիսի

Շամշադինում դրությունը օրեցօր բարդանում է, այս առավոտ շրջանի գորքերի հրամանատար Խանկալամովը եւ Ա.Հովհաննիսյանը մեկնեցին իշեան: Սեպուհը բանակի շտաբից հեռագիր ստացավ, որը ես թարգմանեցի: Բանակն է, վերջապես երկու տարվա անկախ պետական կյանք ունենք, եւ դեռ կառավարական հաստատությունների եւ զորական շտաբների գրությունները կատարվում են ռուսերեն, սա ի՞նչ խայտառակություն է, ուզում էի հրաժարվել կարդալ եւ թարգմանել հեռագիրը, բայց Սեպուհից քաշվեցի, չնայած սա ամենից շատ է ատում օտարամոլությունը:

Երկու օրվա ընթացքում Զանգիբասարը մաքրվեց եւ թաթարթուրքական արյունաբբուղեկավարների ձեռքին խաղալիք դարձած այդ 20 գյուղը շարունակ սպառնալիք էին կարդում Երեւան գրավելու:

Հեռազրում տեղեկություն կա բոլոր ճակատներից: Բացի Զանգը, բասարից, մյուս ռազմաբեմերում դրությունը անփոփոխ է:

Այսօր առավոտյան մերոնք վերջնագրի պատասխան չստանալով Զանգիբրասարից հարձակման են դիմում եւ գրավում երկաթուղու հյուսիսակողմ ընկած Զանգիբրասարի ամբողջ տարածությունը: Թաթարները փախել են Արանլուկի ուղղությամբ, թողնելով 3 թընդանութ, 3 զնդացիր, 40000 փամփուշտ, պատկառելի քանակությամբ իրացան եւ գույքեր, որոնց քանակը դեռ չի ցուցակագրված: Վերցապես Հայաստանի հանրապետության խոցերից մեկը եւս բուժվեց: Այժմ Բեյուք Վեդիի բախտը վճռված կարելի է համարել, այս հաջող գործողություններից հետո նա ապահով է: Այս առթիվ Ծաղիկյանը շատ զոհ էր: Նա ասում է, որ առատ հաց կունենանք, եթե առաջխաղացությունը շարունակվի մինչեւ Զուլֆա՝ գրավելով Շարուր-Նախիջենան հացահատիկի հարուստ շտեմարանը: Ես Կարծում եմ, որ ոչ նրանց ցանած արտերն են մեզ հարկավոր եւ ոչ ել նրանց թշնամական վերաբերմունքը, որ մեր անկախության օրից տածում են դեպի մեզ: Ինչպես ժողովուրդն է ասում՝ «ոչ նրանց խերն է հարկավոր, ոչ նրանց շառը»:

Այժմ հերթը հասավ Կողբին ու Օլթիին, մեր բազուկի օգնությամբ դրանց հարցն էլ կվճռենք: Մենք միշտ մեր արտաքին թշնամիներին կարող ենք լավ դասեր տալ, եթե հայ ժաղովրդի դժողոհ տականքները «սոցիալիզմը» շահագործելով չպղտորեն մեր «տգիտության ու խավարի մեջ խարխափող» գյուղացիությունը: Մեր, դեռ չամրապնդված մեջք շարդողը ներքին խռովություններն են:

## 20 հունիսի

Խանկալամովը եւ Ա. Հովհաննիսյանը Քարվանսարայից եկան: Դրությունը ավելի քան վատ է: Այսօր երեկոյան ժամը 4-ին ապրստամբները գրավեցին իջենանը (Քարվանսարա): Մեր գործերը դիրք են բռնել 9 վերստի վրա դեպի Դիլիջան: Նրանք ռմբակոծել են իջեվանը եւ մի քանի ռումբ ընկել է փողոցում եւ վնաս չի պատճառել:

Մեր անհաջողության հիմնական պատճառը ցարական ապիկար գեներալ Խանկալամովն է, որ շարունակ ռազմական հաղորդագրություններով տեղեկացրել է գլխավոր շտաբին, որ այս ճակատում «անփոփոխ» է, եւ այս սուստ տեղեկությունները ասել է այն ժամանակ,

երբ մենք 42 զյուղ ձեռքից տվել ենք: Հակառակորդը Դիլիջանից տասն եւ ութ վերստի վրա է: Երբ Հովհաննիսյանը ասել է, որ Դիլիջանը վտանգվում է, նա սառնությամբ պատասխանել է. «Դատարկ բան է՝ մենք սրանց ետ կը շենք»: Ապիկար մարդ, քշելը կը շենք, բայց ինչու դրությունը հասցնել մինչեւ այնտեղ, որ ազգաբնակչությունը ահաբեկվի:

Պառլամենտի անդամ եւ այստեղի դաշնակցության ընդհանուր լիազոր Արշակ Հովհաննիսյանը գիշերվա ժամը 10-ին ուղիղ հեռագրաթելով հաղորդեց վարչապետ Համո Օհանջանյանին, որ առանց ուշանալու գորամասերի հրամանատարությունը հանձնի Սեպուհին: Երեք ժամ հետո Նախարարական խորհրդակցությունը որոշեց եւ հաղորդեց, որ Սեպուհը նշանակվում է Ղարաքիլիս Դիլիջանի գորամասերի հրամանատար:

Թեեւ շատ ուշացած է այս կարգադրությունը, բայց բոլորս էլ հույս ունենք, որ նախկին հեղափոխականի ռազմական հանճարն ու փորձառությունը դրությունը կփրկի:

Ես ու Շաղիկյանը ժամը մեկին Սեպուհին գնացինք, երբ նա մեկտակ շապիկով եւ վարտիքով նստած մի փոքրիկ սենյակում, լսում եր Խանկալամովի թիկնապահի գործերի հանձնման գեկուցումը: Վեհ էր այդ րոպեին Սեպուհը, նրա առանց այն էլ մռայլ դեմքը ավելի եւս կնճռու էր, սառնասրտությամբ ծխում էր եւ շփում ճակատը, որ սովոր էր տանել այդպիսի հանկարծակի վայրկյանները: Նա մանրամասն հաշիվ պահանջեց գենքերի, ռազմանյութերի, պարենի եւ այլ պատերազմական անհրաժեշտ իրերի քանակի մասին. ապա հրամայեց հեռագրով անմիջապես խորքից կանչեն մեր շտաբի պետ եւ իմ ընկեր Գրիգոր Ամիրյանին եւ ավագ թիկնապահ Մուշեղ Թանատոսին, (...)<sup>1</sup> հազար հոգու հաց պատրաստել տվեց եւ ամբողջ շրջանում գենքի տակ կանչեց 20-40 տարեկաններին: Փոխեց ճակատի մի քանի գնդացիրներ, հեռախոսով գորամասերի պետերին հայտնեց իր հրամանատարական պաշտոնի ստանձնելը եւ խրոխտ ձայնով հաղորդեց, որ եթե մի սպա կամ զինվոր իր բռնած դիրքից նահանջի նա տեղն ու տեղը պիտի գնդակահարվի: Բաղաքում եւ կարեւոր կետերում պահակներ կանգնեցնել տվեց եւ հրամայեց, որ ոչ մեկին թույլ չտան քաղաքից հեռանալու, ով էլ որ լինի: Կազմեց սպայական

1 Բառն անընթեռնելի է (Ա.Հ.):

հարվածող մի գունդ, տալով նրանց իրացաներ եւ ձիեր: Այս բոլորը կատարվեցին մի ժամկա մեջ: Առավոտյան 5 ժամին նա Ծաղիկյանի հետ կառքով մեկնեց Ռազմաճակատ:

Հայաստանի հանրապետության պատմության մեջ Դիլիջանի եւ Շամշադինի շրջանի գյուղացիական այս կրկնվող ապստամբությունները սեւագույն եղ են կազմում:

Ցերեկվա ժամը մեկն է իհմա. զինվորական իշխանությունը Սեպուհի ձեռքն անցնելուց հետո տասներկու ժամ է անցել եւ այսօքան կարճ միջոցում արդեն ճակատի դրությունը փոխվեց դեպի լավը: Մեր հետախույզները 15 վերստ դեն են անցել իրենց բռնած դիրքերից եւ հակառակորդին չեն հանդիպել. զորքը շարժվում է առաջ իրեն օգնության հասնող 600 թարմ ուժերով: Այժմ պարզվում է, որ մենք իջեւանում կրիվների ժամանակ 110 գերի ենք տվել եւ բոլորովին զուր տեղը:

Գնդապետ Կարելկովին, ինչպես երեւում է, պատասխանատվության են կանչելու դիրքերը ինքնակամ թողնելու համար:

Նոր Դիլիջանի (Սլաբոդիս) մոլոկանների գյուղը, որ քաղաքի տակն է, լսելով «բոլշեւիկ» կոչված տականքների առաջխաղացությունը, գիշերը ժողովներ է արել, երեւի մեր թիկունքից մեզ խփելու: Նրանք ինչպես երեւում է, դեռ չեն լսել, որ իշխանությունը Սեպուհի ձեռքն է անցել. թող չմոռանան, որ եթե մի փոքրիկ շարժում նկատվեց այդ կալվածատեր, արտոնավայել եւ դավաճան մոլոկանների կողմից, Սեպուհը առաջվա նրանցից առած երեք միլիոն փող եւ հարյուր զլուխ անասուն տուգանքը կեռապատկի ու նրանց ցույց կտա, թե ինչպես են համարձակվում հանրապետական Հայաստանի դեմ կռվելու:

Չի կարելի այստեղ շասել, որ մեր կառավարությունը շատ հանցավոր է կալվածատեր, մանր բուրժուա մոլոկան համայնքներից հողերը չխլելու համար: Նա այդ բանը վաղուց պիտի աներ, եւ այդ հողերը բաժաներ շրջակա հայ հողազուրկ գյուղացիությանը: Այդ բանը նոր էր մտածել եւ սկսել են գործադրել: Լավ է ուշ, բան երբեք, ասում է առածը:

Այս գիշեր ճակատագրական գիշեր էր մեր համար. Ե՛լ կառավարական ժողովներ, էլ զաղտնի խորհրդակցություններ չմնաց, որ չանեինք: Լավ էր, որ կառավարությունը համաձայնվեց գիշել իշխանությունը Սեպուհին, թե չէ որոշված բան էր, որ պիտի ձերբակա-

լեինք գեներալ Խանկալամովին եւ կուսակցական դիկտատորակամ Հայրենիքի փրկության կոմիտե պիտի կազմեինք Սեպուհի ղեկավարությամբ ու սկսեինք գործել:

Այս գիշեր բոլորովին անքուն էինք եւ ոտքի վրա: Ես հոգեպես գոհեմ, որովհետեւ ամբողջապես կտրված եմ կոչեր, ազդեր եւ հրահանգներ գրելով: Թեեւ անքնությունից կոպերս ծանրացել են, բայց չեմ ուզում օրագրիս այս օրվա գործը թողնել մյուս օրվա: Այս րոպեիս իմ ընկեր Հովհաննիսյանը եւ Շաղիկյանը անուշ քնանում են, բայց ես նստած գիր եմ զրում: Իմ մահճակալը պարապ ձգված իրոք դժգոհում է, որ իրեն աննորմալ դրության մեջ եմ դրել:

Ընկերներս, որոնց հետ ապրում եմ միեւնույն սենյակում, ազնիվ երիտասարդներ են, ես կրտսեր եմ, բայց ինձ հարգում եւ սիրում են, ինչպես ես նրանց: Չոպե չի անցնում, որ չվիճենք, չխոսենք մեր ժողովրդի եւ մեր անկախության մասին, մեր ազատության շուրջը: Քիչ բաներում մեր կարծիքները տարբերվում են իրարից: Մենք խոր դառնություն ենք զգում, երբ զալիս ենք այն եզրակացության, որ ժամանակներս ուղղակի մտրակով ենք ուզում մեր ժողովրդին փաթաթել ազատության եւ անկախության զաղափարը: Մեր ժողովուրդը այնքան է սովորել այս կամ այն ցեցի, ցեղի կամ հզոր ժողովրդի ըստըրկական լծին, որ մենք նրան մտրակով ենք **լծից** հեռացնում, իսկ նա առանց մտրակի եւ բռնի ուժի, իր իսկ սեփական ձեռքով վերցնում է այդ ծանր լուծը, վիզը ուրախությամբ պարզում է նրա տակ: Դառն է այս իրողությունը, բայց ճշմարիտ է:

Ծակատի դրությունը առայժմ լավ է եւ գործի ու ժողովրդի ոգին բարձր, իմը՝ նույնպես, մանավանդ, որ մինչեւ այժմ կատարված ղեպքերը նույնությամբ թղթի քաշեցի:

Ես էլ վեր կենամ մի քիչ հանգստանամ, բայց տեսնենք Ժամը քանիսն է. իրիկվան իինգն է: Օրագիրս չեմ փակի, որովհետեւ այսօր անպատճառ էլի գրելու բան կունենամ, թանաքս էլ վերջանում է, իսկ Հայաստանում թուղթ եւ թանաք ճարելը հիմա նույնքան դըմքար է, ինչպես հաց եւ հազուստ, որի համար նույնքան նեղանում ենք:

Դառնությամբ եմ շարունակում այսօրվա օրագրությունը. «բոլշեվիկ» կոշված տականքները ասում են, սոցիալական հեղափոխություն են կատարում: Նրանց հավատալու համար կամ պետք է շափազանց միամիտ լինել, կամ անծանոթ Մարքսիստական վարդապետության:

Նրանք գրգռում են գյուղացիությանը Հայաստանի Հանրապետության դեմ պատճառաբանելով, որ այդ կառավարությունը հակահեղափոխական է եւ օրենքից դուրս, ահա որն է նրանց տրամաբանությունը, որ շատ մոտ է հզինզոտների լոգիկային: Ու՞մ հայտնի չէ, թե բոլշեվիկները Ռուսաստանում ինչքան սոցիալ-դեմոկրատներ եւ ձախ ու աջ սոցիալ-հեղափոխականներ կախեցին կամ զնդակահարեցին, որպես հակա-հեղափոխականներ:

Տաճկահայ կոտորված, ջարդված մնացորդները 1918թ. ահաբեկված թուրք-թաթարական իրից ու սրից ապաստանեցին Դիլիջան եւ մինչեւ հիմա էլ, որպես հողազուրկներ ապրում էին այս շրջանում ամերիկյան օգնությամբ: Դրանք, որ հարավի բարբարոս միապետական թուրքիայից էին ահաբեկված՝ երկու տարի, ինչ այդ մղձավանցը վերացել է եւ նրանք լավ թե վատ մի կերպ ապրում էին: Այժմ զալիս է, եւ այս երկրորդ անգամն է, հյուսիսի ավելի քան բարբարոս սոցիալիստական Ռուսաստանը, ահ ու սարսափի մատնած ամբողջ ազգաբնակչությանը, եւ տաճկահայը, նորից, քարավան կազմած անոթի, ծարավ, իր տունը կորցրած, բոբիկ ու մերկ, երեխաները ետեւ ձգած զալիս է նա հարյուրավոր վերստեր կտրելով: Այս առողջ բնազդով ժողովուրդը, որ սոցիալիզմից այնքան է հասկանում, որ քան ես թզուկների լեզուն՝ փախչում է նրանց կարգերից, նրանց իշխանությունից: Նա իրավունք ունի փախչելու ասիական բռնակալությունից եւ ասիավարի սոցիալիզմից, որովհետեւ նրանք միեւնույն բաներն են:

Ադրբեցանը Սոցիալիստական է, սովետական. Եւ իայ ժողովրդի կառավարությունը, որ նրա կամքի ճշմարիտ արտահայտությունն է, միապետական, հակահեղափոխական: Օ՞, կյանքի որպիսի **ծաղր**:

## 21 հունիսի

Մեր ուժերի համախմբումները դեռ չեն վերցացել, իսկ խռովարների բանդաները առաջ չեն զալիս, որովհետեւ զիտեն, որ իրենց համար գերեզման է փորվում: Արդեն ճակատում այնքան ուժեր ունենք, որոնք կարող են եղած դրությունը պահել մինչեւ մեր նոր ուժերի առաջումը:

Հրամանատարի անունով հեռագիր ստացվեց հայկական բանակի

ընդհանուր իրամանատար Նազարբեկյանի ստորագրությամբ, ուր ասված է, թե խոռվարարներին ճնշելիս ազգաբնակչությանը պետք է վերաբերվել մարդասիրաբար, ի նկատի ունենալով նրանց պարենավորման ճգնաժամային դրությունը, Նազարբեկյանը առաջարկում է միմիայն պարագլուխներին խիստ կերպով պատժել: Մի ուրիշ հեռագրում հաղորդվում է նույն աղբյուրից. Զանգիբասարի մեր գործողությունները փայլուն կերպով վերջացան: Ընդհանուր շտաբի պետ Վեքիլովը զալիս է այստեղ: Զինվորականները գտնում են, որ նա շատ լավ ռազմագետ է, այդ պատճառով նրա ներկայությունը անհրաժեշտ է: Զանգիբասարի կոհվութեան մասնակցող մի քանի վաշտեր, բեռնակիր ավտոմոբիլներով եւ գնացքով, արդեն ճամփա են ընկել դեպի Դիլիջան: Մյուս բոլոր ճակատներում կոհվութեր չկան: Ինչպես այս հեռագրերից երեւում է, մեր կառավարության ամբողջ ուշըն ու միտքը կենտրոնացած է այս ճակատի վրա:

Երեկ եւ այսօր ես առաջին անգամ զինվորականի հաճույքը ըստացա դեսուդեն վազվգելով իրահանգներ, ազդեր եւ կոչեր գրելով եւ այս ու այն կողմ ուղարկելով: Ինձ առանձնապես հաճույք է պատճառում այն, երբ իրամանատարը ուղիղ հեռագրաթելով խոսում է զորական նախարարի կամ վարչապետի հետ հաղորդելով միշտ կարեւոր բան եւ պատասխան ստանալով: Ես խուճապներ, նահանջներ շատ եմ տեսել, բայց չի պատահել մի դեպք, որ մի կոհվ տեսնեմ կամ գործուն մասնակցություն ցույց տամ: Իմ կարծիքով սոսկական զինվոր լինել ամենից բարձր է:

Հրամանատարին մի քանի անգամ խնդրել եմ, որ ինձ ուղարկի առաջավոր դիրքերը, բայց նա միշտ խուսափողական պատասխան է տալիս, որը ինձ ավելի է մղում դեպի ճակատը:

Արդեն մի ձի ստացա, մի սիրուն սեւաթույր ձի, որը, Ծաղիկյանի կարծիքով շատ լավ նժույգ կդառնա: Երեք տարեկան է, բարակ մեցը ունի, ամուր ոտքեր:

Պատերազմական ավար է, դեռ վարժ չէ, ինչպես երեւում է՝ նրա տերը շատ ձիեր է ունեցել, որ մինչեւ հիմա սրան չի նստել: Ամենայն հավանականությամբ ես մտնելու եմ Ծաղիկյանի ձիավոր հարյուրակի մեջ:

Պառլամենտի անդամ Խոսրով Պապոյանը հենց հիմա եկավ Շամշադինից եւ, օ, զարմանք, պատմեց, որ այնտեղ մեր այս ճակատի անհաջողությունների մասին բացարձակապես ոչինչ չգիտեն:

Այստեղ մերոնք նորանոր գյուղեր են գրավում, եւ գյուղացիները զալիս զինաթափում են:

Ել չեմ կարող գրել, որովհետեւ շատ հոգնած եմ թե մտավորապես եւ թե ֆիզիկապես:

## 22 հունիսի

Չնայած, որ երեկ առավոտվանից ազդերով հայտարարված է, որ քաղաքը զինվորական դրության մեջ է, եւ երեկոյան ժամը 9-ից հետո ոչ ոք իրավունք չունի փողոց դուրս գալ, բայց երեկոյան ժողովուրդը ըստ իր սովորականի զբոսնում էր փողոցներում:

Դիլիջանի եւ Շամշադինի ամբողջ զավարի ՀՀ. Դաշնակցության լիազոր եւ պառլամենտի անդամ Արշակ Հովհաննիսյանը, տեսնելով այդ զանցառությունը, դուրս ելավ եւ, կանգնելով մեր սենյակի պատըշգամբում, իր ահռելի ձայնով բղավեց, որ բոլորը տները զնան, միեւնույն ժամանակ, կանչելով միլիցիապետին, հայտնեց նրան, որ չինազանդվողներին ձերբակալել եւ բանտարկել:

Այսօր առավոտյան ժամը 9-ին զնդապետ Իշխանյանի գորամասը առանց կռվի մտել է հցեան: Այդ մասին պաշտոնական տեղեկություն չստացվեց մինչեւ երեկոյան 8 եւ կեսը. ամբողջ 12 ժամ, ուրեմն կանոնավոր կապ եւ հաղորդակցություն չկարողացանք հաստատել հցեանի հետ: Չնայած, որ այնտեղից եկող ականատեսները պատմում եւ հաստատում էին այդ լուրը, բայց Սեպուհի շտաբից ոչ մի լուր, տեղեկություն չարվեց Սպարապետ գեներալ Նազարբեկյանին:

Հցեանի ուժերի զնդապետ Իշխանյանի սուրհանդակը եկավ երեկոյան ուղիղ ութ եւ կեսին եւ բերեց մի քանի հաղորդագրություններ գրված քիմիական եւ հասարակ մատիտներով: Այդ տեղեկությունների մեջ ասված էր, որ մեր ուժերը առանց կռվի մտել են հցեան: Խռովարները թալանել ու տակնուվրա են արել քաղաքը, բռնաբարել մի քանի կանանց եւ իրենց հետ տարել են տեղացիներից հարյուր պատանդ՝ կառավարության հավատարիմներից, որոնցից 4-ին տեղնուտեղը զնդակահարել են, որոնց թվում եւ զնդապետ Խաչատրյան: Խլել տարել են ահազին քանակությամբ եղջրավոր անսուններ, որոնք հետ են խլվել մեր հետապնդող գորամասերի կողմից: Անասունների մասին իշխանյանը կարգադրություն էր խնդրում: Սեպուհի կարգադրությամբ եւ պառլամենտի անդամ Ներսես Ավագյա-

Նի նախազահությամբ իսկույն մի հանձնաժողով մեկնեց Իշեան պատերազմական ավարը նույնությամբ ցուցակագրելու: Ուզմական նշանակություն ունեցող գույքերից եւ ձիերից բացի մնացյալ ավարը նույնությամբ հետազայում վերադարձվելու է իրենց տերերին:

Ութերորդ գնդի գումարտակապետ Մուրատը հայտնի չէ, թե ուր է, մինչեւ, Վերջին պահը նա չի վերադարձել:

Դեմշենկոյի գորամասից տեղեկություն չի ստացվել:

Խռովարարները խուճապի մատնված զլխավորապես փախչում են Շամշադինի ուղղությամբ: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հունիսի 20-ի դրությունը, որը ճգնաժամային էր, անցած է: Մեր օգնական ուժերը բեռնակիր ավտոմոբիլներով տեղ հասան եւ նըրանք ուրախ են, վճռական, որովհետեւ գալիս են Զանգիբասարի փայլուն հաղթական կրիվներից:

## 23 հունիսի

Այսօր առավոտյան հրամանատար Սեպուհը, Հայաստանի Բանակի շտաբի պետ Վերիլովի եւ իր խորհրդակից ու հավատարիմ թիկնապահ-ընկերոց Ծաղիկյանի հետ վայաշարժով մեկնեց Իշեանի ռազմաճակատը: Այստեղի շտաբի գործերը վարում է շտաբի պետ կապիտան Պալյանը: Գնդապետ Հակոբյանի կալոնան, որին խնդիր էր որված գրավել Արմուտչի գյուղը, հաջող է անցել: Սա Երեանի այն պահակախումբն է, որ մասնակցել էր Զանգիբասարի կրիվներին եւ որը եկել էր բեռնակիր ավտոմոբիլներով: Գեն. Մամիկոնյանի գորամասի այն խնդիրը՝ առավոտյան ժամը 9-ին անցնել Բարվանսարայի թիկունքը, թշնամու նահանջի ճանապարհը կտրելու, անցել է անհաջող: Այսօրվա տեղեկություններով հաստատվում է, որ 8-րդ գնդի գումարտակի կապիտան Մուրատը սպանվել է՝ հերոսաբար կովելուց հետո:

Իշեանից Սեպուհը հայտնեց, որ ինքը ուզում է այստեղից անցնել Ֆիոլքենդ, ուր հիմա կանգնել է Բեկ Մամիկոնյանի նահանջող գորամասը:

## 24 հունիսի

Այս շրջանի մեր անհաջողությունների զլխավոր պատճառներից

մեկն էլ հացի ճգնաժամն է: Սեպուիը իշեւանից Արշակ Հովհաննիսյանին խնդրում է, որ նա հրամանատարի ու իր անունից դիմումն անի վարչապետին՝ անմիջապես այլուր ուղարկելու: Ժողովուրդը գալարվում է սովոր ճիրաններում, մարդիկ ուժասպառ չեն կարող գործի գնալ: Եթե այդ կարգադրությունը անհապաղ չկատարվի, ասում է Սեպուիը, ստիպված կլինենք այս շրջանը թողնել:

Այս գիշեր իգորիից եկան 4-րդ բրիգադայի շտաբի պետ եւ իմ մտերիմ ընկեր Գրիգոր Ամիրյանը եւ Սեպուիի թիկնապահ Մուշեղ Թանատոսը: Նրանք իգորի կողմից մասնակցել են Զանգիբասարի գործողություններին, որ շատ հաջող է անցել:

Չմոռանամ իիշել, որ Բեկ Մամիկոնյանը Շամշադինից նահանջելիս հակառակորդի ձեռքն է թողել իին սիստեմի երկու թնդանոթ, որոնց բանալինները հանված են եղել: Սակայն հույս կա, որ դրանք ետ կգրավենք, որովհետեւ մեր առաջխաղացությունը շատ արագ է կատարվում:

Վերջնականապես պարզվել է, որ Դիլիջանի եւ Շամշադինի շրջանի ապստամբությունները կազմակերպել եւ ղեկավարել են ինչ-ոք Բերբերյան-Քալանթարյան, փոխ գնդապետ Մնացականյան, որը պաշտոնավարում էր առաջին զինվորական միլիցիական գնդում՝ Շամշադինի շրջանում եւ մի ոմն Ազիզյան: Նահանջելիս նրանք ահաբեկման տակ տեղական ազգաբնակչությանը տեղահան են անում՝ քշելով նրանց Աղրբեցան: Այս խոռվությունների ժամանակ վերոհիշյալները ամեն շանք գործ են դրել, որ Աղրբեցանի Կարմիր բանակը մասնակից լինի ապստամբությանը՝ ակտիվ գործողություններ սկսելով Հայաստանի հանրապետության դեմ, բայց Ուևկոմի չափավոր անդամները հակառակ են եղել դրան:

Ռազմաճակատի անվտանգության հետեւանքով, այսօրվանից վերացվեցին Դիլիջանից դեպի Ղարաքիլիսա եւ Երեւան տանող կամուրջների պահակները: Երթեւեկությունը ազատ է, կյանքը մտավ իր նորմալ հունը, քաղաքում անդորր է տիրում: Կամաց-կամաց Հայաստանի զանազան քաղաքներից եւ Վրաստանից խումբ-խումբ գալիս են ամառանոցավորները: Համեմատաբար, նրանց թիվն այս տարի շատ քիչ է, որովհետեւ հացի ճգնաժամ է այստեղ:

Թերթերն ասում են, որ Վիլսոնն ընդունել է Հայաստանի սահմաններ գծելու իրավարարությունը, որը մեծ ուրախություն պատճառեց քաղաքականությամբ հետաքրքրվողներին: Հայաստանի անունով

Ամերիկայից ստացվել է էլի 250000 փութ ալյուր, որը մեզ մի կերպ կարող է օգնել մինչեւ հունձքը: Մեր հացի տազնապը շատ-շատ մի ամիս էլ տերի, որից հետո այդ սպառնալիքից կազատվենք, որովհետեւ այս տարի բերքը հրաշալի է:

Կապիտան Պալյանը այսօր նազարբեկյանից մի զաղտնի հեռագիր բացեց, որը ես անձամբ ստացա: Այնտեղ ասված է, որ փամփուշտը խնայողաբար պետք է գործածել, որովհետեւ ամբողջ Հայաստանի զլիսավոր ռազմամթերանոցում մնացել է ընդամենը հարյուր հազար փամփուշտ: Պարզվում է նաեւ, որ Զանգիբասարի վեց ժամվա կորիվներում մեր գորքը վառել է 250000 փամփուշտ: Մեր սրիկա կամավորները, որոնք միայն թալանի եւ բռնաբարության համար են գալիս ռազմաբեմ, չափից դուրս շռայլ են եւ անհասկացող: Բանի-քանի անզամ նրանց ասված է, որ փամփուշտը խնայողությամբ գործ ածեն եւ միմիայն նպատակին, բայց ու՞մ ես ասում: Իմ կարծիքով, դրանք բացի վնասից Հայաստանին ոչ մի օգուտ չեն բերում: Բայց ինչ արած, զորք բավականաշափ չունենալու պատճառով, ստիպված ենք առայժմ նրանց օգնության կանչել: Անաշառությամբ պետք է խոստովանել, որ նրանք մեր ամենավտանզավոր պահին իսկույն դուրս են գալիս մեր սահմանները պաշտպանելու, անպայման զգալի կերպով թեթեւացնում են մեր ծանր դրությունը, բայց դրա հետ միասին այնքան անկարգություն, թալան եւ բռնաբարություններ են անում, որ եթե նրանց շահն ու օգուտը կշռելու լինենք տակը միայն տխուր հիշողություններ են մնում: Սակայն զինվորականները, որոնք առհասարակ անգութ են եւ միայն մի նպատակ ունեն, հաղթել թշնամուն, մի կերպ հաշտվում են այդ բոլորի հետ, «պատերազմ է, այդպես էլ կլինի» ասելով:

Այս, ե՞րբ կզա մի օր, որ մենք ռազմական բոլոր գործիքները, որպես երջանիկ հասարակարգի քաղաքացիներ, տեսնել ուզենանք, բայց չկարողանանք գտնել:

Սա գուցե երազ թվա ժամանակակից մարդու համար, բայց ես այդ օրվան վաղ թե ուշ սպասում եմ, եւ հավատացած եմ, որ նա կը-գա: Արդեն բավական գրեցի եւ կարդում եմ, որոնցից հետո էլ թարմ լուրեր չեն կարող գալ, որովհետեւ ուշ գիշեր է եւ, եթե գալու լինեն, կարձանագրեմ վաղվա օրագրում:

Ստիպված եմ մատիտով գրելու, որովհետեւ թանաք չկա. շտաբում չի ճարվում: Ցարդ թանաքով գրելը երջանիկ բացառություն էր: Խեղճ Հայաստան, ի՞նչ ունես, որ թուղթ ու մելան ունենաս: Այս օրերը, երբ մենք կռվում, կոփում ենք իայ ժողովրդի ճակատագիրը, բացառիկ են: Ոչ մի նպաստավոր հանգամանք չկա, որ (...)՝<sup>1</sup> մեր հերոսամարտը:

Մեր մյուս ռազմաճակատներից հաղորդագրություններ չկան, եւ զարմանալի է: Միայն երեկ ստացանք Ղարսի զորամասերի իրամաստար Հովսեփյանի հաղորդագրությունը Օլթիի մի առաջխաղացման մասին: Թշնամին պատկառելի ուժեր է կենտրոնացրել այս ճակատի վրա նախահարձակ լինելու: Ունեցել է հեռախոսներ, գընդացիրներ, թնդանոթներ եւ պատերազմական վերջինոնք շինված արվեստական դիրքեր ի լուցումն բնական դիրքերի: Մենք վաղուց պատրաստվում էինք առաջ խաղալու Օլթիի վրա՝ գրավելու նրա ածխահանքերը, որոնք ներկայումս հացի չափ անհրաժեշտություն են ներկայացնում Հայաստանին: Ինչպես երեւում է, թշնամին հոտ էր առել այդ մասին, դրա համար ուզեց կանխել մեզ. թշնամու Կարա-Բերիի զորքերը հունիսի 18-ին հարձակման են դիմում: Մեր զորքերը անմիջապես դրվում են զորաշարժման մեջ եւ երեք ուղղությամբ սկսում են հարվածել թշնամուն: Ազ զորասյունը նույն օրը երեկոյան դեմ բռնում է ճանապարհ բաց անող դիրքերը: Դորտ- Քիլիսում միջին զորասյունը նույն ժամին բռնում է նույնպիսի դիրքեր Մերտենեկի մոտ, իսկ Ճախակողմյան զորասյունը՝ Բեկկելի դիրքերում: Հետեւյալ օրը, հունիսի 19-ին, առավոտյան հիշյալ զորամասերը անցնում են հարձակման: Աջակողմյան զորասյունը կեսօրին կռվով գրավում է Փանջուրեթի լեռնանցքը եւ Դորտ- Քիլիսից հարավ ընկնող Կուլու սարի մոտ հանդիպում է դիմադրության՝ 5 ժամ տեսող համառ կռվից հետո գրավում է Ազունդիր կոչված յայլաղը, եւ նույն գյուղի մոտ գտնվող լեռը: Սույն զորամասի դեմ գործելիս են եղել ընդամենը 100 մարտիկներ 1000 տաճիկների դեկավարությամբ:

Թշնամին ունեցել է 1909թ. տիպի երկու թնդանոթ եւ 4 «Մաքսիմ» զնդացիր: Տաճիկները կանոնավոր կազմակերպված են եղել: Յուրա-

---

Բառն անընթեռնելի է (Ա.Հ.):

քանչյուր ասկյար ունեցել է ուսից փաթեթ եւ իրերի պայուսակ: Բացի այդ, թշնամին հնարավորություն է ունեցել օգտվելու անտառածածկ մասերում եղած պատրաստի դիրքերից, իսկ մեր զորքերը կռվել են բաց տարածության վրա:

Երրորդ զորասյունը Բերաջլի գյուղի շրջանում հանդիպելով հակառակորդի ուժեղ դիմադրությանը, զրավում է այն եւ ահազին ավար վերցնում: Հունիսի 20-ի կոհիվները վճռական բնույթ են ստանում, որից հետո թշնամին գլխովին շարդվում է, եւ մեր երեք զորասյուները նույն ամսի 21-ին միանում են իրար ածխահանքերի արեվմտյան մասում: Նահանջի ճամփին թողնում է ահազին վիրավորներ եւ սպանվածներ, իսկ մենք ունենում ենք 5 սպանված եւ 22 վիրավոր: Զարդված թշնամու նահանջն այնքան արագ եւ խուճապային է եղել, որ մեր ձեռքն է ընկել երկու արագածից լեռնային թնդանոթ, 4 «Մաքսիմ» գնդացիր եւ 100000 երեք զծանի փամփուշտ, մոտ 300 լեռնային թնդանոթի իրանոթ, բազմաթիվ լեռնառումբ, փռներ եւ համբարակային պահեստ, ուր կենտրոնացած է մոտ 1200 փ հացահատիկ, 50 փ պաքսիմաթ, 50-ական փութ թխված հաց եւ շաքար, իսկ ռազմադաշտի ողջ տարածության վրա ձգված են եղել բազմաթիվ անասուններ: Բռնվել են սայլեր ամբողջ փախչողներով, որոնց առաջարկված է հանձնել գենքերը եւ վերադառնալ իրենց տեղերը:

Մեր լավագույն ռազմագետներն անզամ հաստատում են, որ մեր կանոնավոր զորամասերը առաջին անզամ են հանդիպում այսպիսի կանոնավոր տաճկական բանակի, որը պատրաստված է եղել պատերազմական արվեստի վերջին ոճով, բայց եւ շարդվել է: Սա մի փառավոր ապացույց է, որ մի քիչ, եթե շունչ քաշել տան մեր արտաքին եւ ներքին թշնամիները, մենք բոլորի հետ մեր հաշիվները կամաց-կամաց կմաքրենք եւ կգրավենք մեր մայր երկիրը, առանց խնդրելու, որ արտաքին ուժերը մեզ օգնեն եւ հետագայում փորձանք դառնան մեր գլխին: Սակայն, դա դեռ սկիզբն է փրկանց. Հայ ժողովուրդը դեռ շատ բան ունի ասելու մեր ֆիզիկական գոյության ոչընշացնել ցանկացող մեր թշնամիներին եւ մեզ բոլորովին թույլ կարծող լիրք Եվրոպային, որի շարժիական հաշիվների պատճառով այսքան արյուն ենք թափում:

Հիմա մենք ճիշտ ենք ըմբռնում իրերի դրությունը, իսկական դըրությունը: Ոչ-ոքի չապավինել, այլ մեր հույսը դնել մեզ վրա եւ անել

այն, ինչ Վերսալն ու Սան-Ռեմոն որպես թե ցանկանում են, բայց չեն անում:

## 26 հունիսի

Մինչեւ մեր քաջարի Բանակը նորանոր հաղթանակներ է տանում Սովորանական Տաճկաստանի դեմ եւ քայլ առ քայլ մոտենում է դարերով երազած իր զաղափարին-տեսնել հայ արյունլվա խեղճ ժողովուրդը ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ, ՄԻԱՅՅԱԼ, այնտեղ տիբրահիոնչակ Ղազախ-Շամշադինում իր ավելի քան տիբրահիոնչակ զավակներով դուրս եկած կռվի դաշտ, դաշույնով հարվածում է մեր թիկունքը, «կոմունիստական» շարժում առաջ բերելու համար, չգիտեմ սա բախտի խա՞ն է, թե ստրկությունից նոր ազատազրված մի խեղճ ժողովուրդի խելակորույս ուրախություն, որի մեկ ծայրը անսահման ուրախությունն է, իսկ մյուսը՝ կամովի ստրկությունը: Երեկվա տիրացու «վարժապետներն» ու գող ավազակ ծույլերը միացած իրար դուրս են եկել «սոցիալական հեղափոխություն» են քարոզում, եւ ժողովուրդն էլ զնում է նրանց ետեւից:

Խավարի ու տգիտության մեջ խարխափողն անզամ կարող է հասկանալ, որ իր ցեղականների արյունով ներկված Ազատությունն ու Անկախությունը երբեք կամովին չի կարելի տանել եւ ուրիշին տալ՝ ասելով. «Ես Ազատություն եւ Անկախություն չեմ ուզում, ես առեք այն եւ տվեք նրան, ում որ հարկավոր է: Ուսասատանի եւ Տաճկաստանի ստրկության լուծն եմ ուզում»:

Բայց, լավ իմացիր **հայ** ժողովուրդ, քեզ ծեծելով պետք է ընտելացնենք ազատությանը, քո վիզը սյուների պիտի կապենք, որպեսզի դու հնարավորություն շունենաս նրան մեկնելու Ուսասատանի լծի տակ:

Վրդովված եմ չափազանց, որովհետեւ հայի պատմական երկպառակությունն ու դավաճանությունը դարձյալ գլուխ են բարձրացրել մեզ կործանելու: Ես հավատացած եմ, որ հայ ժողովուրդը կոմունիստական կարգերին հասնելուց հետո, նրանից եւս կիհասթափվի, նրա դեմ, եւս կսկսի կռվել: Հայր միշտ նորը որոնող է եւ նրան հասնելուց հետո խիստ հիասթափվող: Նա ռոմանտիկ է եւ ոչ ռեալիստ. սուս է, որ ասում են, թե հայ ժողովուրդը գերազանցապես մի մատերիալիս է: Նա կյանքում միշտ առաջնորդվում է զգացմունքներով

եւ ոչ թե խելքով եւ տրամաբանությամբ: Խոր վրդովմունքը մի կողմից, սովածությունը մյուս կողմից տրամադրությունս բոլորովին փշացրել են, այսօր էլ ոչինչ չպիտի գրեմ, զնամ տեսնեմ, թե ինչու պարեն չեն ուղարկել: Այս բոպեին այնպես քաղցած եմ, որ ձեռքս ընկնողին իր սեւ օրին կհասցնեմ:

## 27 հունիսի

Այսօր տրամադրությունս անհամեմատ լավ է, որովհետեւ կուշտ եմ: Եղանակը պայծառ է եւ մեր ռազմաճակատներից մինթարական լուրեր են հասնում: Հրամանատար Սեպուհը կարգադրեց, որ բոլորս էլ պատրաստվենք իջեան մեկնելու. մինչեւ Ղազախ-Շամշադինի ռազմական գործողությունների վերջնական հաշվեհարդարը՝ երեւի կմնանք այնտեղ: Միօրինակություն չեմ սիրում, հարատեւ տեղափոխությունները եւ չտեսած վայրերին ծանոթանալը եռանդու աշխույժ մոցնում մեջս:

Երեկոյան ժամը 6-ին մենք հասանք իջեան: Բացի հրամանատարից եւ նրա թիկնապահ զինվորներից, մենք բոլորս էլ եկանք բեռնակիր ավտոմոբիլներով: Թարսա-շայ կամրջի մոտ տեղի ունեցավ զինվորական խորհուրդ, որը տեւեց մի ժամ: Այնտեղ էր Շամշադինի գորամասերի հրամանատար երիտասարդ քաջ զնդապետ Մանելը, որ իջել էր Նոր հրահանգներ ստանալու Սեպուհից: Այդ կամրջի մոտ Ղազախ եւ Շամշադին տանող ճանապարհները բաժանվում են իրարից: Այդտեղից երեւում է Ղարա-Ղայլու բերանը. Ներկայացնում է մի անառիկ, բնական բերդ, ուր ապրում էին թաթարները, որ այնքան շփացել ու ամբարտավանացել էին իրեց ամրություններով եւ, մեր հանրապետության մեջ ապրելով, չեին ճանաչում մեր կառավարությանը: Նրանք զանգիբասարցիների ու բեյուք-Վեդիցիների նման մատով էին խոսում մեր հետ, իսկ մեր անվճռական Կառավարությունը ուղիղ երկու տարի առաջ չեր կարող ցույց տալ իրենց արժանի տեղը: Բոլշեվիկյան վերջին խռովությունների ժամանակ, Սեպուհը նորից նվաճելով ամբողջ Հայաստանը, հասավ Ղարա-շայ կամուրջը եւ հրամայեց խռովարներից մաքրել եւ այդ ձորը, որից այնքան վախենում էր մեր թույլ ու անվճռական կառավարությունը: Դրանով քաջարի Զորավարը ուզեց մեր Կառավարությանը հասկացնել, որ հայ բանակը ամեն ինչ կարող է անել, եթե նրա Կա-

ռավարությունը կրավորական դերից դուրս գա: Այստեղ Սեպուհը անձամբ դեկավարելով կրիվը, անձրեւի բռնվեց, մրսեց եւ թոքերի թեթեւ բորբոքում ստացավ:

Այս, այն չարաբաստիկ կամուրջի վրա, ուղիղ մի ամիս հետո Հայատանի պահապան հրեշտակ Զորավար Սեպուհը նորից ստիպված էր ռազմական գործողություններ վարելու համար խորհրդակցության գալ:

Մրերով, ատրճանակներով, հեռադիտակներով, զինվորական ուսադիրներով եւ թղթապանակները կողքերից կախ ընկած այդ ըսպայակույտի մեջ Սեպուհը իր օրիգինալությամբ աշքի էր ընկնում: Ոչ մի շքանշան չէր զարդարում նրա կուրծքը. չնայած նրանք շատ-շատ են: Ուսադիրներ նույնպես չուներ, ինչպես եւ զորավարի սուրը: Նա պարզ էր հագնված, շատ պարզ: Ամերիկյան ատենալից կարված գալիֆե շալվար, նույն կտորից անգլիական ձեւի, բայց գոց կրծքով ֆրենչ, շատ լայն գրաններով, սեւ հասարակ ժակետ՝ գորշ սեւ բծերով, մորթե զլխարկ, որ միշտ ճակատի վրա է եւ միշտ նույն դրության մեջ: Ֆրենչի տակից կախված էր իր հեղափոխական օրերի մաուգեր ատրճանակը՝ կարմիր կաշվից կարված փամփշտակալով, որ միաժամանակ գոտիկի դեր է կատարում: Բայլելիս Սեպուհի աջ կոնքի վրա աննշան անհարթություն է նկատվում, որից միայն կարող է կարծեն, որ նա ատրճանակ ունի: Միայն նստելու ժամանակ ատրճանակի փողը մինչեւ նշանացույց բլթակը երեւում է, որովհետեւ զորավարը սովորություն ունի աջ ոտքը տակը ծալած նստելու: Չնայած ճակատի այնքան պարզությանը, չնայած նրան, որ զինվորականություն հիշեցնող ոչ մի բան չունի իր վրա այդ մարդը, բայց այնուամենայնիվ նրան շճանաշող կամ շտեսած մեկը մազաշափ անզամ չի կասկածի, որ նա զինվորական է: Միշտ գերազանցապես հայ՝ հայկական դիմագիծ չունի, ավելի շատ ռուսական տիպ է, ունի ալեխառն շեկ մազեր, կապույտ աշքեր, որոնք թափ հոնքերի տակից սարսափ են ազդում խոսակցին: Ալեխառն մազերը եւ ճակատի կնճիռները մեկ-մեկ վկաներ են նրա հեղափոխական անցյալի, նրա իր ժողովրդի համար եղած ապրումների: Նրա, մշտապես դժգոհություն արտահայտող, դեմքը պատկառանք եւ ակնածանք է ազդում մարդուս:

Ժպիտն ու ծիծաղը նրա դեմքին հարազատ չեն: Որքան խիստ եւ դաժան է թվում նրա արտաքինը, այնքան բարի ու ներող է իր

հակառակորդներին, եթե սրանք կանգնած են Հայաստանի եւ հայի անկախության տեսակետի վրա: Նրա հոգին մեծ է, բյուրեղի պես մաքուր. ճշմարտության դեմ զնացող մարդը, եթե անզամ նրա ամենամոտիկ ազգականը կամ բարեկամը լինի՝ հալածվում է նրանից: Սեպուիր լավ է ճանաչում հայ ժողովրդին եւ ամենակրիտիկական բոպեին կարող է ամբոխներ իր ետելից քարշ տալ. նույնքան, եւ գուցե ավելի նա ճանաչում է այն տեղերին ու տարրերին, որոնք պատմական խճճված հաշիվներ ունեն հայ ժողովրդի հետ, եւ այդ է պատճառը, որ նա պարտություն ասած բանը չգիտե: Հայ ժողովրդական հերոսների մեջ նա ամենից շատ զարգացած, ամեն բանից քիչ թե շատ ծանոթություն ունեցող մեկն է:

Տասնյակ տարիների հեղափոխական կրիվները նրան եփել են եւ դարձրել տաղանդավոր զորավար, որ իր ռազմական ընդունակությամբ լավագույն, կրթված զորավարներից ետ չի մնում: Նա վարպետ է եւ համապատասխան ձեւ ու լեզու ունի, երբ բանակներին է խոսում, համակող եւ գրավիչ լեզու ունի՝ ամբոխների առաջ կանգնած: Նա անզիական սառնասրտություն ունի եւ ճապոնական վճռականություն: Հաջողությունների դեպքում նա չի ոգեւորվում եւ անհաջողությունների ժամանակ նրա ուժեղ կամքը ավելի է զորանում:

Նա ամեն մարդու լսում է ուշադիր եւ այն տպավորությունն է թողնում, որ կարծես թե համոզվում է: Սակայն ամեն մի խորհուրդ, ամեն մի մտածածին զիր անցնում է նրա բնական խելքի լաբորատորիայից եւ սեպուիացած դուրս է զալիս:

Սեպուիր շատ համեստ է եւ ամեն բան սովորելու հակում ունի: Գիտնականը նրան չի ապշեցնում իր բազմակողմանի ծանոթություններում եւ տգետը չի արհամարվում նրանից:

Նա իր ասածը կատարում է թեկուզ սխալ լինի: Իր բերանից թըռած խոսքը ամենից առաջ ինքն է հարգում, եւ կյանքում կիրառում է այն՝ իր կամքի ամբողջ թափը շարժման մեջ դնելով: Նա սուր միտք ունի եւ ամենաշնչին խնդիրը, լինի բերանացի, թե զրավոր, հիշում է:

Ռազմական խնդիրները հեշտությամբ է կազմում եւ հաղթանակը ապահովում է չնշին շանքերի գնով: Զինվորին սիրում է, բայց երբեք չի զգացնում. նրա տանջանքի կամ սիրո մեջ կարծես խորություն կա եւ շափ:

Հայրենասարությունը հայրական սիրուց միշտ բարձր է դասում եւ աննպաստ պարագաները երբեք չեն նսեմացնում հայրենասիրական զգացմունքները:

Այս մարդու մեջ ես չկարողացա այնպիսի խոշոր թերություններ գտնել, որոնք ցայտուն կերպով աչքի զարնվեն, գուցե այդ նրանից է, որ ես իհացած եմ նրանով եւ անկարող եմ դիտել նրա վատ կողմը, կամ գուցե նրանից է, որ այդ թերությունները արտահայտվելու պարագաներ չեն ներկայացել:

Երբ զինվորական խորհուրդը վերջացավ, Մանեւր բաժանվեց մեզանից Շամշադին գնալու, իսկ մենք բեռնակիրը նստելով ճամփա ընկանք իշեւան: Հրամանատարը Թարսա չայ կամուրջից մեզ հետ ավտոմոբիլ նստեց:

Դիլիջան-Իշեւան շրջանը իսկապես որ գեղեցիկ է եւ ինձ իիշեցնում է Վրաստանն ու Աբխազիան: Խճուղու երկու կողմից խիտ կանաչազարդ անտառներ են, որոնք ծածկում են բլուրներն ու սարերը: Խըճուղուն գուգընթաց խոսում է Աղստաֆա գետը, որ թափվում է Կուրը: Բեռնակիր ավտոմոբիլում խիստ մոտ էինք նստել ես, Ամիրյանն ու Ծաղիկյանը: Մենք իհացմունքով էինք դիտում բնության գեղեցկությունները եւ խոսում էինք Հայաստանի ապագայի մասին: Սեպուհը եւ նրա ադյուտանտ Թամրազյանը տեղավորվել էին շոֆերների մոտ, իսկ զիխավոր շտաբի պետն ու մի քանի սպաներ ավտոմոբիլի վերցին մասում: Բոլորիս տրամադրությունն էլ բարձր էր. ասում, խոսում եւ ծիծաղում էինք: Իշեւան հասնելով՝ հրամանատարը իր շտաբի կազմով իջավ մի գյուղացու տուն, ուր հավաքվել էին Ղազախի զորասյան հրամանատար գնդապետ Իշխանյանը իր թեւերի սպաների հետ: Առանց հանգստանալու, Սեպուհը անմիջապես ծանոթացավ ռազմաճակատի դրությանը եւ Վեցիլովի հետ միասին նոր կարգադրություններ արին վաղվա առաջխաղացությունը շարունակելու համար: Այս խորհրդակցության ժամանակ լուր բերին, որ նաուրցի հակաբոլշեվիկյան ուժերի հրամանատար Սոսին, որ մոտ 40-45 տարեկան գյուղացի էր, Շամշադինը բոլշեվիկ ուժերի կողմից գրավելուց հետո, այս գյուղացին առաջին իսկ օրից չհանդուրժելով այս հայրենադավ արարքին, անցնում է 140 լավ զինված երիտասարդների գլուխ եւ լեռներ քաշվում: Շամշադինի ապստամբապետ Բերբերյանը հրամայել է նախ Ճերբակալել Սոսիի երեք եղբայրներին, ազգականներին ու բարեկամներին եւ ապա վառել նրա տունը:

Հայրենադավ շարագործի հրամանը խսկույն կատարվում է, բացի տունը վառելուց, որ ինչ որ պատճառով հետաձգվում է: Սոսիի խըմքում լինում է եւ մի նաուրցի կին կամավոր Թամարա Մարտիրոսյան անունով: Այս հայրենասեր հերոսուհին դեռ օրիորդ ժամանակ հայտնի է եղել որպես քաջ կովող եւ հեղափոխական, նրա ամուսինը սպանվել էր ապրիլյան կրիվներում, երբ Ադրբեջանի կառավարությունը կամենում էր Հայաստանի ռիակի վրայով կապվել քեմալականների հետ: Որբեայրին, Ադրբեջանի վրա տարած Հայաստանի կատարյալ հաղթանակից հետո նվիրվում է իր մանչ որբերին՝ նրանց պահելու եւ կրթության դնելու:

Թարսա- չայի կամրջի խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էր նաեւ Թաուզ-Կալայի (բերդ) Հայաստանի Կառավարության հավատարիմ մնացած ուժերի պետ Լեւոն Բեկը, լուր ստացանք, որ նաուրցիները հարձակվել են բոլշեվիկ պաշարակիր սայլերի վրա եւ խուճապի մատնել Հայաստանի թշնամիներին:

Սոսին հաստատեց այդ լուրը եւ պատմեց Թամարայի քաջագործությունների մասին, որ արցունք խլեց մեր աշքերից:

Երեկոյան ժամը 9-ին զինվորական խորհրդակցությունը վերցագվ, որի հետեւանքով գնդապետ Իշխանյանը եւ գնդապետ Հարություն Խաչատրյանը պիտի անմիջապես մյուս օր առավոտյան մեկնելին առաջին դիրքերը:

Փախածների ասելով՝ Ղազախում մեծամասնականների մեց տարածայնություններ կան. Ղազախ-Շամշադինից զոռով զաղթեցված ժողովորդի մեծ մասը զղցացել է եւ ուզում է վերադառնալ, բայց վախենում են պատմվելուց: Հայաստանի թշնամիները այնքան ստոր եւ խաբեքա են, որ լուրեր են տարածել, որպես թե մեր զորքերը անխտիր կոտորում են բոլորին, բռնաբարում են կանանց եւ թալանում են տները: Սակայն մնացողները, տեսնելով մեր զորքերի եղբայրական վերաբերմունքը դեպի իրենց խաբված արյունակիցները, եւ այն կարգ ու կանոնը, որ տիրում է մեր զորքերից հետո, լուր են տալիս փախածներին:

Հենց այսօր մի ուրիշ լուր ստացվեց, որ Սեւ-Քարեցի փախածներից 100 ընտանիք վերադարձան:

Սեպուհը մնացյալներին կոչեր ուղարկեց, ինչպես եւ զաղտնի քարոզիչներ:

Մինչեւ օրս ես բավական ժամանակ ունեի, բայց շտաբում ծա-

ռայություն ստանալուց հետո գործս բավական դժվարացավ: Աչք փակելու ժամանակ անզամ չունեմ: Սակայն խիղճս հանգիստ է, որովհետեւ ես մի բանով օգտակար եմ լինում նոր ազատված Հայրենիքիս:

Ես հիմա ավելի ինարավորություն ունեմ շտաբի ամեն մի զաղտնիքը իմանալու, մանավանդ, որ շտաբում հերթապահություն էլ եմ անում: Բացի այդ, Սեպուհը ինձ առանձնապես թույլատրել է ամեն մի գրության, հեռագրի, ռազմական հաղորդագրության հետ ծանթանալու, որպեսզի կարողանամ նյութեր ունենայ մեր ապագա պատմության համար: Ես ու Սեպուհի համհարզ Թամրազյանը միասին ենք ապրում, ու չկա մի զաղտնիք, որ նախ նա ու ես շիմանանք եւ ապա հրամանատարը: Միայն մի բանից ես ու նա շատ ենք նեղանում, այդ այն է, որ համարյա միշտ քաղցած ենք մնում: Սեպուհի անձնական մի քանի զինվորները, որոնց հետ ենք ճաշում եւ պարեն ստանում, այնքան անբարեխիղճ են, որ մեր բաժնի պարենը եւս սպառում են, առանց մեր մասին մտածելու: Մենք էլ ամաչում ենք ստամոքսի համար ամեն անզամ կռիվ անել, դալմաղալ բարձրացնել:

Սեթյանը ու Շաղիկյանը հեռու մի տանն են ապրում, բայց բոլորս էլ մի տանն ենք ճաշում: Չնայած հաճախակի կրկնվող անպարենությունների, այնուամենայնիվ ուրախ ենք ապրում, եւ ժամանակը ձանձրալի չի անցնում:

Զինվորների մեջ առհասարակ այն կարծիքն է տիրում, որ շտաբում ապրողները հրաշալի են ապրում, բայց ողորմելիները չգիտեն, որ ամենայն օր կիսաքաղց ենք մնում: Բայց պետք է խոստովանել, որ նրանց կարծիքը մասամբ սխալ չէ, ուրիշ անբարեխիղճ շտաբները, որոնք ռուսական շինովնիկական ակնարկով են նայում ռազմական այս կարեւոր օրգանի վրա՝ ապրում են ավելի լավ, քան կարելի է:

Ե՞րբ պիտի, վերջապես, մենք կարողանանք ռուսական հին կարգերից մնացած այլասերված սպայությանը դուրս շպրտել մեր բանակից, եւ փոխարինել նրանց հայրենասեր, նոր մտքերով ու հայցըներով օժտված սպայություններով, որ կանգնած լինի հայ հեղափոխական ժողովրդի պետական տեսակետի վրա:

Ցավն այն է, որ մեր սպայության ճնշող մեծամասնությունը Հայաստանի անկախությունը համարում է մի անցողական շրջան եւ նրանք՝ այդ ստրկամիտները, օրից-օր սպասում են, որ ռուսը զա եւ տիրե մեր երկրին:

Եթե սպայությունը այսպիսի տրամադրություն ունի, էլ ի՞նչ մեղադրելու բան է մոռմ հասարակ գինվորին, որ վեց տարվա անընդհատ կրիվներից, զոկանքներից ձանձրացել է եւ ուզում է «տուն» գընալ, ինչպես մի ժամանակ բոլշետիկներն էին քարոզում, երբ դեռ գինամոլ Գերմանիան վերջնականապես չէր ցախցախվել:

Ուշ գիշեր է, առանց այն էլ շատ հոգնած եմ, վեր կենամ քնեմ:

Բնել, բայց ինչպես քնեմ, քանի որ Ղազախ-Շամշադինի ամբողջ ռազմաճակատների հեռախոսների եւ հեռագրաթելերի ցանցը այժմ իցեւանն է եւ րոպե չի անցնում, որ նոր հաղորդագրություններ չբերեն եւ չզարթնեցնեն Թամրազյանին եւ ինձ:

Իցեւան, 28 հունիսի

Ռազմաճակատի բոլոր ուղղություններից եկած հաղորդագրությունները գեկուցում են, որ այս գիշեր անցել է հաջող. Իցեւանի զորաճակատում թշնամին երեւաց Ռեվազլուի հյուսիսային ժայռերի վրա: Այսօր գնդապետ Իշխանյանի զորասյունը, շարժվելով Շամշադինի վրա, գրավեց Լալա քենդ գյուղը:

Գնդապետն իր, Մանեւի եւ Տիմչենկոյի<sup>1</sup> զորաճակատներից տեղեկություններ չունի:

Ղազախ-Շամշադինը գրավելու համար մեր ուժերը հետեւյալ կերպով են դասավորված:

Գնդապետ Իշխանյանի Իցեւանի զորամասի մի զորասյունը, որպես ձախթեւ գնդապետ Խաչատրայանի ղեկավարությամբ շարժվում է Իցեւանից Սարամ-Սախլու սարի վրայով Թառոգ-կալա: Գյոլ-Բինտից, միջին թեւը, գնդապետ Հակոբյանի գլխավորությամբ առաջանում է Կարառլի լեռան վրայով դեպի Ղարա-Ղայա եւ աջ թեւը գնդապետ Մանեւի հրամանատարությամբ Կոլալիի վրա:

Տիմչենկոյին խնդիր է տրված պաշտպանել Աղրբեցանից մեր սահմանը եւ ապահովել մեր զորամասերի աշագույն թեւը:

Համիարգ Թամրազյանը ասում է, որ ուժերի այսպիսի դասավորումն լավագույնն է թշնամուն մի քանի օրվա ընթացքում ջարդելու համար: Կեսօրից հետո Շամշադինից հաղորդում են, որ Մանեւի զորամասերից մեկը երկու զորասյուն Մուրզուգ լեռից, իսկ մյուսը

1 Կարդալ՝ Շեմչենկո (Ա.Հ.):

Խոհեղութեատ գետի հոսանքով շարժվեցին դեահ Զիմովկա- Ղարա-  
դայա: Դեռ շհասած Զիմովկա՝ աջ զորասյունը գնդակոծվում է Ա-  
ռօրբեցանից մեր սահմանն անցած թափառաշրջիկ թաթարական  
հրոսակների կողմից: Կարճ կռվից հետո, վերցիններս ցրվում են Եւ  
Մանեւի զորասյունը շարունակում է իր առաջխաղացությունը: Մյուս  
զորասյունը չհանդիպելով թշնամու դիմադրությանը հասավ իրեն  
ցույց տված զիծը՝ Կարառլչի լեռան մոտ:

Ամեն օր նորանոր վերադարձողներ կան, եւ մեր դեմ կռվող զին-  
վորները, որոնք զալիս են եւ զինված, եւ անզեն, ով ինչպես կարո-  
դանա, որոնք փառավոր ապացույցներ են, որ Հայաստանի գոյությա-  
նը սպառնացող թշնամիները բարոյական եւ ռազմական մեծ պար-  
տություն կրեցին, եւ սա առաջինը չէ:

Շտաբում առանձնապես կարեւորություն են դարձնում ժողովրդի  
տրամադրությանը, քան թշնամու ուժերի, որովհետեւ տեղացի ա-  
պրստամբները մեզ ավելի են վնասում, քան բուն ինքը՝ թշնամին: Այսօր շտաբում հերթապահությունը Ամիրյանին լինելով՝ Թամրազ-  
յանը, Ծաղիկյանն ու ես ճաշից հետո գնացինք թութ ուտելու մի քա-  
նի տեղացիների հետ, որը շատ ուրախ անցավ: Իշեւանցիները շատ  
անհյուրընկալ եւ անկիրթ են, նրանց դեմքերից կարծես ժահը է կա-  
թում, աշխուժություն եւ եռանդ նրանց մեջ մեռել է: Տեղացիները  
բացատրում են նրանով, որ ժողովուրդը քաղցած է, թալանված եւ  
սարսափահար եղած «բոլշեվիկ» կոմունիստներից, որոնք իշեւանից  
նահանջելով միայն տխուր հիշողություններ են թողել:

Իշեւան, 29 հունիսի

Ռազմաճակատից երկու գերիներ բերվեցին իշեւան, որոնց հար-  
ցաքննեց ինքը՝ իրամանատարը: Նրանք կծկոտուր տեղեկություններ  
տվին. ճնշված էին հոգեպես եւ դողում էին ողորմելիները՝ կարծում  
էին, որ մենք ել կարմիրների պես մարդու վրա նայում ենք որպես  
մի անշունչ առարկայի վրա, որի հետ կարելի է խաղալ «գնդակահա-  
րի» դաժան բառով: Իմ մեջ եւ ափսոսանք, եւ արհամարանք զար-  
թեցրեց դրանցից մեկը՝ ղարաբաղցին, որոնց գոյամարտի համար  
դատարկեց առանց այն էլու հարուստ մեր պետական զանձարկող  
եւ ոչնչացան մեր լավագույն ուժերը:

Մի ժամանակ մենք Ղարաբաղը համարում էինք մեր հանրապե-

սուլթան շեյխանը, որ շարունակ ծառայում էր դավադիր Ադրբեյջանի ղեմ, երբ Վերջինս ամեն անգամ փորձ էր անում նվաճել այդ լեռնական հերոս ժողովրդին եւ միանալ մեր դարավոր թշնամի Տաճկաստանի հետ: Սակայն, ավաղ, մելիքների այդ դավաճան ծննդավայրը իր կաշին փրկելու համար, ապերախտորեն բաց արագ Ղարաբաղի պողպատե դռները ռուս մի քանի հարյուրանոց զորամասի առաջ եւ այժմ, միացած նրանց, արշավ է սկսել իրեն սնուցող մոր՝ Հայաստանի վրա:

Երջանիկ է ռուս ժողովուրդի հայի պես կույր սիրող եւ կույր հետեւող ունենալու համար:

Այսօր լուսաբացին իցեւանի զորաճակատում խռովարարները հարձակման դիմեցին գնդապետ Իշխանյանի զորամասի վրա Լալաբենդի մոտ, Դիտիվանքի եւ Զիմովկայի կողմից: Երկու ժամվակովից հետո մեր զորամասերը հակահարձակման դիմելով, թշնամուն ետ շպրտեցին դեպի Ղազախ: Մենք ունենք մի սպանված: 12 ժամին մեր զորամասերը Կարմիր քարին մոտենալիս սկսում են հետապնդել թշնամուն, մեր ուժերը շարժվում են Օձաքար լեռան ուղղությամբ:

### Իցեւան 30 հունիսի

Գնդապետ Իշխանյանը հաղորդում է, որ Կարմիր քարը գրավելուց հետո 2 ժամին մեր պահակախումբը ինքնակամ թողնելով Օձաքարը եկել է Լալաբենդ գյուղը: Օձաքարում թշնամին ունի չորս հարյուր մարդ եւ չորս գնդացիր:

Հակառակորդը պատկառելի ուժեր է կենտրոնացնում Դիտիվանքում, ուր կան 2 գնդացիր: Ապստամբները այդ ուղղությամբ իրացանային եւ գնդացրային ուժեղ կրակ են բացել մեզ վրա՝ միաժամանակ երեւանիանելով հեծելազորը: Չստուգված լուրերին նայած, բոլշեվիկները պատրաստվում են թաթարների հետ միասին անցնել մեր սահմանը: Գերիները պատմում են որ Բաքվում բոլշեվիկները 400 հոգուց մի զորամաս են կազմակերպել, որից մի մասը ուղարկել են մեր դեմ, իսկ մյուս մասը ուրիշ ճակատներ: Սարամ Սախլուի շրջանում եւ Թառիդ-Կալայի վրա շարժվող մեր զորամասերից հաղորդագրություն է ստացվել, որ 29 հունիսի, 3 ժամվակովից հետո մերոնք գրավել են Թառիդ Կալան եւ Զինչինը: Թշնամին նահանջելով թողել է 25 դիակ, որոնց թվում եւ երկու թուրք եւ մի փշացած իին սիստեմի

թնդանոթ, որը մենք էինք թողել նահանջելիս:

Նաուրի կոհվների ժամանակ, հերոսաբար կռվելով, ծանրապես վիրավորվել է Թամար Մարտիրոսյանը: Կարգադրված է նրան տեղափոխել Իշեւանի հիվանդանոց:

Մյուս ճակատներում նշանակալից ոչինչ չկա:

## 1 հովիսի

Խռովարարները գնդապետ Մնացականյանի ղեկավարությամբ իրենց ուժերը կենտրոնացնում են Աշասուի եւ Սեւ քարի ուղղությամբ, որպեսզի անցնեն մեր թիկունքը, բայց նրանց չի հաջողվի այդ անել, որովհետեւ մեր շեշտակի հարվածները դեռ նրանց շամեցրել են: Գնդապետ Խաչատրյանի զորասյունը շարժվում է Թաթևու գյուղի վրա: Շամշադինում մեր ձախ զորասյունը 15 ժամին գրավեց Ղարաղայան, ուր մնացել են միայն մի քանի ընտանիք:

Ազ զորամասը շարժվեց Ղարաղայայի աջ ուղղությամբ, ուր այսօր վաղ առավոտյան կոհվներ են տեղի ունենում, իսկ ձախ զորասյունը առաջանում է Չորաթան գյուղի վրա:

Նաուրցի կին կամավոր Թամար Մարտիրոսյանը, որ վերջին կը-ռիվներում հերոսաբար կռվել էր եւ վիրավորվել կրծքից ծանրապես, այսօր առավոտյան դեմ մեռավ Իշեւանի հիվանդանոցում:

Հրամանատար Սեպուհը կարգադրեց զինվորական մեծ շուքով թաղել Հերոսուհուն: Եվ այդպեսէլ եղավ: Նրա որբերի խնամատարության, կրթության հոգսը մեր կառավարությունը վերցրեց իր վրա:

Եզակի դեպք է այս կնոց հերոսությունը մեր երկու տարվա պետական գոյամարտի մեջ՝ բարոյական մեծ ապտակ մեր ԱԶԱՏՈՒԹՅԱՆ եւ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ թե ներքին, թե արտաքին որոշ թշնամիներին, որոնք ուզում են իրենց անարգ ոտքերով պղծել մեր Մայր Երկրի անձեռնմխելի հողը:

Այստեղ կարեւոր է իիշել Նաուրում կատարված մի ուրիշ դեպք, որ նույնքան կարեւոր է: Նաուրը բոլշեվիկների կողմից գրավելու ժամանակ տեղացի կույր աշուղը արհամարանքով է խոսում դավաճանների եւ համակրանքով՝ հայրենի կառավարության մասին: Ապրամբապետ Բերբերյանը սաստում է աշուղին, որ սա զգույշ ինի, բայց ժողովրդական երգիշը հանդուզն պատասխան է տալիս եւ մեղադրում դավաճան Բերբերյանին («Վարժապետ») որի հրամանով

## 2 հովիսի

Այս առավոտ ժամը 8-ին գնդապետ Իշխանյանի զորամասը հարձակման է դիմել Օձաքարի վրա: Շամշադինի առաջխաղացությունը նույնաբես հաջող է ընթանում: Կոտիքենդի եւ Բուրանայի շրջանում բոլշեվիկները ուժեղ պրոպագանդա են մղում, բայց քանի զրոշ արժի նրանց քարոզը, երբ ամեն տեղ ուժն է հաղթողը:

Հենց հիմա տեղեկություն ստացվեց, որ գնդապետ Իշխանյանը համառ կռվից հետո գրավեց Օձաքար կոչված անառիկ բարձունքը: Թշնամին ունեցել է երկու գնդացիր, որ անդադար գործելիս է եղել:

Մեր բռնած գերիները պատմում են, որ դարաբաղցիները թողել փախել են՝ չուզենալով կռվել Հայկական Հանրապետության դեմ: Երեք օրվա համառ եւ կատաղի կռվից հետո, Շամշադինի մեր զորամասերը, ջարդելով թշնամուն, քշել են նրանց Ադրբեյջան: Գյուղացիները չեն փախել, իսկ հեռացողները ամեն օր ծածուկ փախչում զալիս են իրենց տները:

Ղազախ-Շամշադինի ազգաբնակչությունից Սեպուհը երկու բան է պահանջում, նախ զինաթափ լինել եւ ապա հանձնել բոլոր գենքի ընդունակ երիտասարդներին որպես զինակոչի ենթականեր: Թեեւ նրանց համար շատ ծանր են այս պայմանները, բայց անխուսափելի:

Ցարդ հայ կառավարությունը զինում էր տեղական բնակչությանը, որովհետեւ Ադրբեյջանի վտանգ կար, սակայն այժմ այդ վախը չկար եւ մեր հիմար գյուղացիությունը չիմանալով իր գենքը գործածել, դարձրել է այն մեր դեմ: Ինքնապաշտպանության հարցը պետք է վերացնել եւ դարձնել այն պետական, որովհետեւ մենք հիմա այնքան ուժ ունենք, որ կարող ենք ամեն մի քաղաքացու կամ համայնքի կյանքը, գույքը ապահովել: Իմ կարծիքով, Հայ կառավարությունը մեծ սխալ է գործում, թողնելով ազգաբնակչությանը զինված մնալ: Որանք շատ շուտով կարող են կույր գործիք դառնալ մեր երդվյալ թշնամիներին, ինչպես այդ ապացուցեց Ղազախ-Շամշադինի վերջին ապստամբությունը:

Իմ օրագրից շեղում կատարած չեմ լինի, եթե արձանագրեմ, որ հենց հիմա, երբ ես գրում եմ, Սեպուհը լսում է մի մոլոկանի զանգատը: Նա հայտնեց, որ պաշարակիր զինվորները սպանել են երեք

մոլոկանի, որպեսզի ընդմիշտ «պետականացնեն» նրանց սայլերը: Վերին աստիճանի սիրտս վրդովվեց. մի՞թե մեր զինվորները կարող են այդպիսի անգթություն գործել ռուսի վերաբերմամբ, բայց մյուս կողմից բանականությանս սառը դատողությամբ զալիս եմ այն եզրակացության, որ մեր զինվորը կամաց-կամաց փորձով զալիս է այն համոզման, որ ռուսի դեմն էլ կարելի է գենք գործադրել, եթե սա թշնամանք ունի դեպի մեր անկախությունը:

Սակայն այս պատճառաբանությունը չի կարող հանգստացնել խիղճս, մենք պետք է շատ զգույշ վարվենք եւ այնպես հեշտորեն չխաղանք ամեն մի քաղաքացու կյանքի հետ: Մոլոկանների ընկճվածությունն ու հալածանքը ինձ հիշեցնում է այն լուծը, որ մենք տանում էինք Տաճկաստանի տիրապետության ժամանակ: Բայց Թամրազյանի կարծիքով, այդպիսի դեպքերը անխուսափելի են պատրազմական գործողությունների ընթացքում:

### 3 Իուլիսի

Մեր առաջնադաշտացությունը բոլոր ուղղությունների վրա հաջող է ընթանում: Գյուղացիները խմբերով եւ զինված, եւ անզեն զալիս հանձնվում են, խորապես ափսոսանք արտահայտելով, որ իրենք պարզապես խաբված են եւ գործիք են դարձել մի քանի սրիկանների ձեռքը: Նրանցից մեծագույն մասը զարմանք է հայտնում, որ հայ կառավարությունը հարկ եղած ուշադրությունը չի դարձրել այս երկու վտանգավոր շրջանների վրա:

Կառավարության ուժը, հեղինակությունը կենտրոնից դուրս զալով, մինչեւ ծայրագավառներ հասնելը այնքան է թուլացել, որ կառավարությունը ստիպված մի ամիս է ինչ կրիվ է մղում իր իսկ տերիտորիայում իր համարումը վերականգնելու: Սա պարզապես անփութության հետեւանք է, սակայն յուրաքանչյուր անհոգություն, եթե մեզ վրա թե տնտեսապես, եւ թե մարդկային զոհերով այսքան սույնստի, մենք կարճ ժամանակում լուրջ վտանգների առաջ կկանգնենք: Գնդապետ Իշխանյանի գորամասը գնդապետ Խաչատրյանի գորասյան աջակցությամբ շարունակում է առաջնադաշտացությունը: Ըստ փախածների տված տեղեկությունների՝ Խռովարանների մեծ մասը ուզում է մեր կողմն անցնել: Նրանց շատ վատ են կերակրում եւ նըրանց շարքերում մեծ դասալքություն կա: Լալաքենդի վրա հարձակ-

Վող խռովարարներին, կրիվների ժամանակ, դեկավարելիս է եղել փոխգնդապետ Մնացականյանը: Կռվից հետո 100 դարաբաղջիներ փախել են Գանձակի խորհրդային գնդից, բայց հայտնի չէ, թե ուր: Խռովարարների մյուս զլիսավորները՝ Բերբերյանը, փոխգնդապետ Տեր-Սարգսյանը Շամշադինից փախել են Ադրբեյջան:

#### 4 հովհանք

Գնդապետ Խաչատրյանի գորասյունը այսօր առավոտյան ժամը 9-ին գրավեց Թամթլու գյուղի հյուսիսային բարձունքը, խռովարարները տեսնելով մեր նրանց շրջապատելու փորձը, փախան Ադրբեյջան: Գյուղից փախած ազգաբնակչությունը վերադարձավ: Կիշքենոյի եւ Չախմախլուի կողմից բոլշեվիկ կոչված տականքները թվով մոտ 100 մարդ հարձակվեցին Սեւ քարի վրա տեղացիների օգնությամբ եւ նեղեցին մեր սահմանապահ փոքրաթիվ գորախմբին, բայց մեր հակահարձակումով դրությունը վերականգնված է: Փախածների ասելով, խռովարարները հիասթափվելով բոլշեվիկներից ուզում են թնդանոթով անցնել մեր կողմը: Նույն պատմողների ասելով, Աղըստաֆա-Ղազախ են եկել 600 հոգի հայ եւ թաթար բոլշեվիկներ, որոնք հայտնել են, որ իրենք հայերի դեմ չեն ուզում կռվել: Թաուզի հետ հաղորդակցությունը կտրված է, որի պատճառով Մանեւի գորամասից տեղեկություն չեն ստացել: Հրամանատարը Ղազախ-Շամշադինի գյուղացիության եւ մեր դեմ կռվող հայ զինվորների անունով կոչեր գրել տվեց եւ մեր գործակալների միջոցով ուղարկեց Ղազախ: Կոչերը գրված են սրտառուշ խոսքերով եւ պարզ լեզվով: Նրանց մեջ ասված է, թե հայ հեղափոխական ժողովուրդը այսքան տարի միլիոնավոր զոհեր տալով եւ գերմարդկային ջանքեր թափելով՝ հազիվ կարողացել է ազատվել բարբարոս Տաճկաստանի Հանրապետությունը, որ նոր միայն սկսել է ազատ շունչ քաշել եւ ապահովել իր սահմանները արտաքին թշնամիներից եւ հանկարծ նոր վտանգների առաջ է կանգնում, շնորհիվ մի քանի դավաճան հայերի, որոնք ամեն կերպ ուզում են ոտնակոխ անել ԱԶԱՏ եւ ԱՆԿԱԽ Հայաստանը:

Կոչերը վերջանում են ներման խոստումով, որովհետեւ մեր ստացած ստույգ տեղեկություններին նայած մեր դեմ գործողների

մեծագույն մասը չի զալիս եւ չի հանձնվում նրա համար միայն, որ դավաճան ստոր հոգի հայ բոլշեվիկ պարագլուխները հավատացրել են միամիտ հայ ժողովրդին նույնքան պարզամիտ զինվորներին, որ իբր թե հայ կառավարությունը կոտորում, ջարդում եւ բռնաբարում են անխստիր բոլորին: Սակայն ի մեծ զարմանք եւ ցավ այդ հայրենադավ «հայ կոմունիստներին» ժողովուրդը առանց մեր կոչերը ստանալու կամաց-կամաց վերադառնում է, զինաթափ է լինում եւ հանձնում է զորակոչի տարիքի մեջ եղած երիտասարդությանը: Մինչ մեր գործերը Ղազախ-Շամշադինում այսպես հաջող են ընթանում, Ղարաբաղից, Զանգեզուրից տխուր, շատ տխուր լուրեր են հասնում մեզ: Ղարաբաղը արդեն վաղուց է, որ ընդունել է Սովետական իշխանությունը, որտեղ լցված են սովետական գործակալներով եւ քարոզիչներով: Սովետական իշխանության դավերը վերջապես ընկնեց Ղարաբաղը, որ երկու եւ կես տարի չսրբապղծվեց Գերմանո-Թուրքական-Աղրբեցան կանոնավոր գործերի եւ խուժանի ներխուժումով:

Սակայն մեր շտաբում այն կարծիքն է տիրում, որ նրանք ավելի շուտ այդ միջոցով օգտագործեցին սովետական իշխանությունը, վերջնականապես հարվածելու «Մուսավաթ» դավադիր կառավարության վերջին մացորդներին, որոնք Գանձակում եւ Շուշիում փորձեր արին վերականգնելու իրենց դիրքն ու իշխանությունը: Եթե մեր ենթադրությունները ճիշտ են՝ նրանց արածը ռազմական մի ճարպիկ խաղ է, իսկ եթե մենք սխալվում ենք, ապա Ղարաբաղին կարելի է ասել, «Ահա մի լեռնական ժողովուրդ, որ մեր պատմության մեջ չըտեսնված ապերախտություն եւ անօրինակ դավաճանություն գործեց հանդեպ իր ազատասեր արյունակիցների, որոնք նորանոր հաղթություններ են տանում եւ Օլթիի եւ Կաղզվանի եւ Շարուր-Նախիջևանի ուղղությամբ»: Մեր կրծքի վրա սնված այդ լեռնական օձը, որին մենք տաքացրինք մերկ մնալով, որին կերակրեցինք սոված թողնելով հայ ժողովուրդը եւ որի գոյության պահպանման համար հազարավոր թանկագին կյանքեր շպրտեցինք մահվան զիրկը, այսօր նա խայթում է մեզ մեր ետեւից եւ իր ժայթող թույնը կաթեցնում է Հայաստանի սրտում, ցանկանալով սրա վայրկենական մահը:

Ցավալին այն չէ, որ Ղարաբաղը առանց մի գնդակ արձակելու կամովին իր վիզը մեկնում է սովետական յուրահատուկ լծի տակ, այլ այն, որ նա խաղալիք դարձած սովետական բռնակալներին եւ

աշխարհակալներին՝ զենքի ուժով շարժվում է Զանգեզուրի վրա, նրան եւս փաթաթելու իր չարաբաստիկ բախտը: Տեսնենք վերջինս ինչ վերաբերմունք ցույց կտա սովետական «ծիծեռնակներին»: Ասենք, ի՞նչ կարելի է սպասել Զանգեզուրից, չէ՞ որ սա Ղարաբաղի քույրն է եւ պակաս սեւ էցեր չի կազմել մեր հնագույն պատմության մեջ:

## 5 Իուլիսի

Հուլիսի առանձին նշանակալից էջ է կազմում իմ արյունոտ օրագրի մեջ, որովհետեւ այսօրվանից Ղազախ-Շամշադինի Սովետական-Շապրկարյան խեղկատակության երկրորդ արարվածը վերջացավ մեր թշնամիների կատարյալ պարտությամբ եւ մեր զորամասերի փառավոր հաղթությամբ: Գուցե երրորդ, չորրորդ, հինգերորդ եւ տասերորդ արարվածներ եւս սկսվեն, բայց թող լավ իմանան «Շապրկարյան կոմունիստները», որ այդ արարներն ել պիտի վերջանան նրանց ողբերգական մահով:

Այսօրվանից Ղազախ-Շամշադինը երկրորդ անգամ վերջնականացես մաքրվեց «բոլշեվիկ» կոչված անկոչ տականքներից, որոնք սարսափահար փախան Աղրբեցան: Բշվելով մեր սահմաններից, բոլշեվիկները մի պատվիրակություն են ուղարկել գնդապետ Խաչատրյանին հետեւյալ պաշտոնական գրությունը հանձնելու մեզ. «Դաշնակցական Հրամանատարություն, Հայկական զորամասերը անցել են Աղրբեցանի սահմանը եւ գրավել «Կեյնախ-գշլուխ, Կոզնա-գշլուխ»: Ուստանանք սոցիալիստական-դաշնակցական խորհրդային հանրապետության գործերի հետ ընդհարում ունենալուց խուսափելու համար առաջարկված է Հայկական Հրամանատարությանը անմիջապես մաքրել վերոհիշյալ գյուղը եւ քաշվել Հախում, հակառակ դեպքում Հանրապետությունը ստիպված կլինի զենքի ուժով ստիպելու Հայկական զորամասերին քաշվելու սահմանից»:

Պանձակի շոշանի գործերի հրամանատար՝ Վելիկանով.

Պանձակի շոշանի արտակարգ կոմիսար՝ Էֆենասեւ.

«Վերոհիշյալ գյուղը մենք չենք գրավել եւ ոչ մի գորամաս սահմանը չի անցել: Մենք գրավել ենք միայն ֆավախթունիս լեռը, որտեղից խռովարարները ռմբակոծում էին մեր զորքերին, եւ մենք այդ լեռը չենք կարող թողնել, որովհետեւ սահմանի գիծը անցնում է նրա գագաթից»:

Նամակատուփի վրա մակագրված «Դաշնակցական իրամանատարություն» խոսքերի համար պատասխանվեց, որ Հայաստանի Հանրապետության մեջ «Դաշնակցական իրամանատարություն չկա, այլ կա հայ ժողովրդական կառավարություն»:

Այս բոլորից հետո պատասխանի մեջ ասված է նաեւ, որ Նման գրություններից եւ սպառնալիքներից Հայկական իրամանատարությունը եւ նրա քաջարի Բանակը չեն վախենում:

Այս պատասխանը հաղորդվեց Սպարապետին ի գիտություն:

Մեր հետախույզները հուլիսի 3-ին բռնեցին հայտնի խռովարար Վասիլի Շատուրյանին, որ փախչելու փորձ անելիս սպանված է: Այստեղ չեմ կարող զգվանքով շարձանագրել, որ եւ մենք, եւ բոլշեվիկները, մի անազնիվ ձեւ ունենք ծանր հանցագործներին պատճելու համար: Նախօրոք որոշվում է սպանել եւ ժողովրդին չգրգռելու համար հայտարարում են՝ «Փախչելիս սպանվեց»:

Վերջնականապես պարզվեց, որ Շամշադինում մենք խռովարաներից խլել ենք ուրեմն գնդացիր, որից շորսը «Կոլտ», իսկ մնացածը «Լույս» սիստեմի:

Շամշադինում գնդապետ Մանեւը Աղրբեցանի սահմանապահ գորամասերի պետից ստացել է մի գրություն, որով պահանջում են շանցնել սահմանը, այլապես կոդմեն միջոցների:

Վախկոտ նապաստակներ բոլշեվիկները, նրանք տեսնելով, որ բոլոր ճակատներում ջարդվեցին, սկսել են ամեն կողմից սպառնական գրություններ ուղարկել: Եթե դուք իրոք այդքան քաջ եք եւ կը տրուկ, Ձեր թղթի կտորների եւ դատարկամիտ խոսքերի փոխարեն պիտի մեզ հետ խոսեին Ձեր թնդանոթները: Դուք այնքան անազնիվ եւ ուխտադրուծ եք, որ եթե ձեր ձեռքից գար ոտնակոխ անել մեր եւ մեզ նման ուրիշ ազգերի անկախությունը, ոչ մի միջոցի առաջ կանգ չեիք առնի ձեր սեւ ծրագրերն իրագործելու: Մենք վաղուց ենք ճանաչում Ձեր եւ Ձեր տված սոցիալիստական «ազնիվ» խոսքերի իմաստը:

Այս երկու օրը ռազմաճակատներում հանգիստ էր, գյուղացիները վերջնապես վերադարձել են իրենց գյուղերը: Ղազախ-Շամշադինի շրջանում կյանքը մտել է իր սովորական հունը: Սովոր է իշխում ամեն տեղ, եւ կառավարությունը խիստ միջոցներ է ձեռք առնում արտակարգ օգնություն հասցնելու ժողովրդին:

Այս վայրիվերումների ընթացքում ժողովրդի առանց այն էլ քայլայված տնտեսությանը ծանր հարված հասցվեց: Պատերազմող կողմերը, իրար ձեռքից խլելով հավաքված անասունները, որ ժողովրդինն է, համարում են պատերազմական ավար: Իհարկե հայ կառավարությունը ինար եղած չափով վերադարձնում է խլված անասունները եւ թալանված գույքը: Բայց, այնուամենայնիվ, տուժողների թիվը շատ է: Եթե հաշվելու լինենք ժողովրդի եւ կառավարության ընդհանուր վնասը, տասնյակ միլիոնների է հասնում: Մեկ կողմից խորհրդային Ռուսաստանը հաշտության բանակցություններ է վարում Մոսկվայում մեր Ներկայացուցիչների հետ Լենին Շանթի նախագահությամբ, մյուս կողմից այդ նույն Ռուսաստանը ստորերկրյա խլուրդային աշխատանք է կատարում մեր հանրապետությունը ներսից պայթեցնելու: «Ընկեր» Լենինը, որ մի ժամանակ բողոքում էր ամեն տեսակ քաղաքականության եւ զաղտնի դաշնակցությունների դեմ, այսօր նա մեր եւ Վրաստանի դեմ նույն ստոր դիվանագիտությունն է վարում: «Սոցիալիստական Ռուսաստանը» վաղուց զաղտնի դաշն է կռել հետամնաց եւ հակահեղափոխական Տաճկական ուժերի հետ, կռվելու իբր թե իմպերիալիստ Անտանտի դեմ, բայց փաստորեն այդ դաշինքը ուղղված է հայ ժողովրդի եւ Վրաստանի դեմ: Երկու ամսից ավել է, որ Շանթը չի կարողանում վերջնականապես հաշտության բանակցությունները վերջացնել եւ հաշտություն կնքել: Նա ամսիս մեկին Մոսկվայից հեռագրում է, որ Սովետական Ռուսաստանը Ղարաբաղը, Զանգեզուրը եւ Շարուր-Նախիջևանը վիճելի է համարում եւ հաշվում է Ռուսաստանի անբաժանելի մասը, մի պահանջ, որ ոչ ավելի ոչ պակաս անում էր Ադրբեյջանի նախկին կառավարությունը, բացի այս, նրանք, ի միջթարություն մեզ, պատրաստակամություն են հայտնում միջնորդի դեր ստանձնել Բեմալի եւ մեր միջեւ Տաճկահայաստանը կցելու մեր Հանրապետությանը՝ առանց որոշելու նրա սահմանները:

«Իսկական Ոուս Կոմունիստները լավ են տրամադրված դեպի Հայաստանը եւ երբեք միտք չունեն ոտնատակ անելու մեր անկախությունն ու ազատությունը», ասված է հեռագրում, բայց չարամիտ հայ բոլշեվիկների խորհրդով եւ ցուցմունքներով հաշտության բանակցությունները ձգձգվում են եւ մեր սեփական հողամասերը վիճելի են դառնում: Ուղղակի ապշեցուցիչ է հայ կոմունիստ կոչված տականքների թշնամական վերաբերմունքը հանդեպ այն ժողովրդի, որի ծոցից վիճել են եւ այն հողի, որի վրա մեծացել են:

Միամիտները միայն կարող են հավատալ, որ Ոուսաստանը իբր թե լավ է տրամադրված դեպի մեզ, նա վիճելի համարելով այդ խոշոր զավառամասերը, նպատակ ունի ձեռք զցել Զոլֆա-Թավրիզ երկաթուղագիծը եւ սոցիալիստական վերարկուի տակ շարունակել ցարական Ոուսաստանի նախկին իմպերիալիստական քաղաքականությունը, այն է՝ ազդեցության շրջան ստեղծել Պարսկաստանում եւ վերջինս դարձնել առեւտրական անբարբար շուկա ընդդեմ անգլիական առեւտրական ծավալման:

Մյուս կողմից, օղակելով Հայաստանը տերիտորիալ տեսակետից եւ զրկելով նրան Պարսկաստանի հետ առեւտրական հարաբերության ինարավորությունից, կամաց-կամաց եւ աստիճանաբար հայ վասակների առաջնորդությամբ տիրել նրան: Ահա ռուս կոմունիստների իսկական ծրագիրը:

Այն, թե սովետական Ոուսաստանը նպատակ ունի համաշխարհային հեղափոխություն բռնկել Ասիայում եւ տարածել այն Եվրոպայում, դատարկ ուսուպիաներ են ու դրանց կարող են հավատալ միայն ու միայն «տիրացու վարժապետներ» հայ նորակնունք կոմունիստները, որոնց բերնից դեռ կաթնահոտ է զալիս եւ որոնք այնքան ծանոթ են եւ հասկանում են Մարքսի վարդապետությունը, որքան ես հասկանում եմ հոթենթական լեզուն:

Մեկ խոսքով, ես չեմ հավատում այդ սոցիալիստական հեղափոխությանը, որ զալիս է տգետ Մոսկվայից եւ նպատակ ունի անցնելու լուսավոր Եվրոպան:

Մարդկության այն ծանր լուծը, որ իր ուսերի վրա է վերցրել ֆիզիկապես, մտավորապես տկար, թույլ եւ անկազմակերպ Ոուսաստանը՝ անկարող է տանել եւ կընկրկի կես ճանապարհին մեծ իիասթափություն պատճառելով համայն մարդկությանը եւ հուսահատության դուռ բանալով բոլոր նրանց համար, ովքեր խելոք եւ հաստատուն

ճամփով գնում էին դեպի այդ բարձրագույն իդեալը՝ Նրան հասնելու եւ Նրանից օգտվելու:

Ոուսաստանը կընկնի իր խելազար պայքարի մեջ, եւ մենք պետք է զգույշ լինենք, որ Նրա անկման ժամանակ էլ **նահատակ** չը-դառնանք:

## 10 Իուլիսի

Երկու ամսից ավելի է, որ համառ եւ անստույգ լուրեր են պտտվում Ղարաբաղի մասին, որ իբր Նա ինքնակամ կերպով բացել է իր անառիկ, լեռնոտ դռները սովետական խուժանի առաջ եւ ընդունել է սո-վետական իշխանությունը: Անհետեւանք չեն այն տարածայնությունները: Մեր զլիսավոր շտաբի տված պաշտոնական տեղեկությունները զալիս են հաստատելու այդ լուրերը եւ փարատելու այն ինքնակամ ենթադրությունները, որ մենք անում եինք:

Մայիսի մեկից սկսած, երբ սովետական Ոուսաստանի հայ կա-շառված գործակալները Հայաստանի ամեն ծայրում նկրտում էին պայթեցնելու Հայաստանի Հանրապետությունը, եւ մեր անվճռական ու բարեմիտ կառավարությունը մի կողմից զբաղված էր այս անզամ գործ ունենալ «սովետական Աղբբեցանի» հետ եւ մյուս կողմից ճնշել հայ բոլշեվիկ կոչվածների դավադրությունները՝ Ղարաբաղը թողնված է եղել երեսի վրա: Հայաստանում կատարված անցքերի ելքին անտեղյակ՝ Ղարաբաղի մեր հրամանատարական կազմը թողնում է Ղարաբաղը, առանց մի զնդակ արձակելու, որովհետեւ «զգուշանում է» բարդություններից եւ քաշվում Զանգեզուր նոր դիրքեր գրավելու:

Դրոն, որ նշանակված էր Ղարաբաղի մեր գորամասերի հրամանատար, այդ խայտառակ նահանջը բացատրում է ինֆորմացիայի բացակայությամբ:

Երկու շաբաթ հետո միայն Դրոն տեղեկանում է իրերի իսկական դրությանը, երբ բանը բանից անցած է լինում: Մի հարցնող լինի Դրոյից, թե ի՞նչ ինֆորմացիայի է սպասելիս եղել պարոն հրամանատարը, երբ իրեն քաջ հայտնի է, որ Ղարաբաղի ինֆորմացիան, անկախ կառավարությունից, միշտ հասել է երկու շաբաթից ոչ շուտ. հետեւաբար, սպասել առանձին կարգադրության եւ նոր միայն կռվել Հայաստանի անկախ տերիտորիան ոտնատակ անող

սովետական փոքրաթիվ գործերի դեմ, նշանակում է թույլ լինել, կախվութ եւ ոչ վճռական:

Բայց շան զլուխը թաքնված է եղել ոչ թե ինֆորմացիան ուշ ստանալու մեջ, այլ մի հայ գորավարի այլասերված ռուսասիրության մեջ:

Ստույգ տեղեկություններ կան, որ Դրոն ասել է.

- Ռուսների դեմ դեռ գնդակ արձակած չկամ:

Եթե մի գիտակից գորավար այսպես է տրամաբանում, ապա ել ինչու մեղադրել հասարակ գինվորին: **Սուտ** է, որ ասում են թե պատմությունը մեզ միշտ դավաճանել է, ընդհակառակը պատմությունը շարունակ մեզ հետ է եղել եւ միշտ էլ նպաստավոր հանգամանքներով: Մենք ինքններս ենք, որ մեզ ստոր կերպով գիտակցաբար թե անգիտակցաբար դավաճանել ենք:

**Տայ** ժողովուրդ, դու այնքան տկար գծեր ունես, որ ես որպես քո ծոցից ծնած զավակ հիանում եմ եւ միաժամանակ հիասթափում, երբ նայում եմ քո ախտավոր պակասությունների վրա, որոնց կարծես թե փայփայում ես ու խնամում: Բո հոգեկան լավ գծերը եւ արհամարելի պակասները եթե կշռելու լինենք, դու կախված կլինես դատարկության մեջ տխուր հիշողություններով:

## 11 հուլիսի

Մի քանի օրվա եռանդուն պատրաստություններից հետո, այսօր առավոտյան մեր Ղամարլուի գորամասը հարձակում սկսեց Բեյութ-Վեդիի վրա երեք գորասյուններով: Աջ գորասյունը փոխզնդապետ Ալեքսանյանի ղեկավարությամբ շարժվել է Արաքսից մինչեւ երկաթուղագիծը ներփակաբար: Միջին գորասյունը գնդապետ Ղասանբաշյանի զիսավորությամբ շարժվել է երկաթուղու գծից եւ Բոշ-Բարան լեռան վրա ձախ ուղղությամբ Բեյութ-Վեդիի վրա, իսկ Մարտիրոսի ձախ գորասյունը շարժվել է Աղասի Բեկլուի վրա:

Այսօր անդադար կրիվներ են տեղի ունենում, որոնք կատաղի բնույթ ունեն: Քաջալերված անցյալ տարվա հաղթություններից Բեյութ-Վեդիի թուրք-ադրբեցանի գործակալներն ու սպաները կարծում են, որ ամեն տարի մեկ կլինի, սովոր է ասել ժողովուրդը: Չէ, Բեյութ-Վեդիցիներ, Զանգիբասարի ամոթալի փախուստից հետո եւ, մանավանդ, դրանից առաջ Ադրբեցանի սոցալիստական ավագա-

նում մկրտվելուց վերջը, դուք պիտի տեղի տաք հայ հաղթական Բանակին, որ Նպատակ ունի հողամասը մաքրել ձեզ նման դավադիր ապերախտ եւ միաժամանակ անհնազանդ տարրերից, որոնք իրենց իրավունք են համարում Հայաստանի հարկի տակ ապրել, բայց շընանաշել նրան:

Անցյալ տարվա մեր մոտ հազար քաջ զինվորների արյունը բողոքում են, որոնք ընկան ձեր բնական անառիկ գյուղի պատերի տակ եւ ընկան ոչ թե ձեր քաջության շնորհիվ, այլ մի քանի ապիկար սպաների եւ զորավարների ինքնավստահ ամբարտավանության պատճառով, որոնք գյուղը հաջող կերպով գրավելուց հետո զինվորներին թույլ են տալիս, որ ծառեր բարձրանան եւ միրգ ուտեն: Առայժմ մեր առաջխաղացությունը շատ հաջող է ընթանում եւ մեր զորքի ոգին բարձր է: Այն քաջագործությունները, որ այս մի քանի շաբաթվա ընթացքում կատարեց մեր փոքրաթիվ Բանակը անօրինակ է մեր պետության պատմության մեջ:

Նկատել տամ, որ մեր ռազմական թաքնված ուժը երեւան հանողը եւ գործածողը Ռազմական նախարար Ռուբեն Տեր Մինասյանն է: Այս մարդը հեղափոխական մեծ անցյալ ունի, կտրուկ է, անվախ եւ վճռական: Հենց որ Ռուբենը ստանձնեց զորական նախարարի պաշտոնը, մի այնպիսի փորձանք եկավ մեր դեռ թույլ պետության գլխին, որ եթե մի ուրիշը լիներ, գուցե ամեն բան կորած լիներ. Նա առանց գլուխը կորցնելու, կարողացավ մի քանի օրվա ընթացքում տականքների ապստամբությունը խեղդել իր բնի մեջ: Տաճկահայերին, մասնավորապես սասունցիներին ու մշեցիներին, ծանոթ է Ռուբենը, որ մատի մի շարժումով կարող է այդ հերոսական ժողովրդի երիտասարդ ուժերը իր շուրջը համախմբել, որպես ամենավըստահելի տարր:

Լինելով փախստական-հեղափոխական՝ նախարար Ռուբենը գըլխավորապես իր գործողության կենտրոնը արել էր Սասունը եւ Մուշի դաշտը. Նա լավ է ճանաշում այդ ժողովրդին եւ սիրում է նրանց: Նույնքան եւ կարելի է ասել ավելին, ճանաշում է քրդերին, որոնց այնքան գովասանք էր շռայլել իր մի հոդվածում, որ ուսումնասիրական փորձ էր քուրդ ժողովրդի բնութագիծը երեւան բերելու համար:

## 12 հուլիսի

Գլխավոր շտաբը հաղորդում է, որ հուլիսի 12-ին վաղ առավոտյան կրիվը վերսկսվում է ավելի կատաղի բնույթ ստանալով, սակայն ժամը 5-ին Բեյուք-Վեդին ընկնում է, եւ թաթարները, թողնելով ամեն բան, փախչում են Դավալուի ուղղությամբ։ Մենք կորցնում ենք 5 սպա սպանված, եւ 6 վիրավոր, մեր ընդհանուր կորուստը լինում է մոտավորապես 200 հոգի։ Թաթարների կորուստը դեռ պարզ չէ, բայց, համենայն դեպս, ասված է հեռագրում՝ մերինից շատ է։ Կռվի դաշտում թշնամին թողել է 100 դիակ, իսկ վիրավորներին կարողացել է տանել։ Այսպիսով Զանգիբասարից հետո ընկավ Բեյուք-Վեդին, որ արատ էր բերում մեր պետությանը եւ Բանակին։ Այժմ մեր ճանապարհը բաց կարելի է հարել դեպի Նախիջենան, որի համար նույնապես ահազին արյուն ենք թափել։ Իմ կարծիքով թաթարները, այդ երկու ամրացած որչերից պոկ գալով այլեւս ոչ մի լուրջ դիմադրություն չպիտի ցույց տան մեր խելազար բանակին, որ գնում է հա գնում։ Մեր շտաբում այն կարծիքն է տիրում, որ Գայլի Դրունքի մոտ լուրջ կրիվներ կարող են պատահել։ Այո, կարող են, եթե թաթարները սարսափահար չփախչեն. ինչպես մենք փախանք երգրումից։ Եթե մենք դժբախտություն չունենայինք Ղարաբաղն ու Զանգեզուրն ունենալ մեր կողքին, այն էլ սովետական իշխանության տակ, մենք ահազին հաջողություններ կունենայինք։ Սեպուհի կարծիքով, եթե այն բոլոր ծախսերը՝ ռազմամթերք եւ մարդկային հսկայական զոհերը, որ կառավարությունը տվեց Ղարաբաղն ու Զանգեզուրը ազատելու, գործածվեր Տաճկահայաստանը գրավելու, այժմ եթե ոչ ամբողջ, գոնե մի մասը գրաված կլինեինք։

## 17 հուլիսի

Այս իինգ օրվա ընթացքում նշանակալից դեպքեր չկան։ Ռազմաճակատներում ընդհանրապես խաղաղ է, եթե հաշվի չառնենք տեղական բնույթի մի քանի փոքրիկ ընդհարումներ սահմանամերձ շրջաններում։

Մեր առաջխաղացությունը Նախիջենանի ուղղությամբ անարգել շարունակվում է եւ մենք նորանոր գյուղեր ենք գրավում առանց լուրջ դիմադրությունների։ Նախիջենանի թաթարները տեսնելով, որ

զանգիբասարցիները եւ բեյուք-Վեդիցիները անողոքաբար հետապընդկում են մեր քաջարի Բանակի կողմից եւ տարերային խուճապով Արաքսի ու Երկաթուղու գծի Երկայնքով նահանջում են դեպի Զովֆա, միտք են հղացել պատվիրակություն ուղարկել եւ խնդրել, որ հայկական կառավարությունը իրենց ընդունի որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, որի համար նրանք վար կդնեն իրենց գենքերը եւ կկատարեն կառավարության բոլոր իրամանները: Թաթար պատվիրակությունը հանդիպել է Գայլի-Դրունքի մեր զորաշղթային, եւ իրամանատարությունը նրան թույլ է տվել անմիջապես մեկնել Երեւան, բանակցելու կառավարության հետ:

Սիլիկովի զորամասը, որ շարժվում էր Նոր-Բայազետից Նախիջեվանի զավառը գրավող զորամասին օգնելու՝ արդեն հասել է Գայլի-Դրունք եւ կապվել է մյուս զորամասի հետ: Հրամանատար Սեպուհը շատ մեծ ցավ է զգում, որ այս մեծ զործողությունների ժամանակ չի գտնվում իգդիրի շրջանում: Նա ասում է, որ եթե հայ չարազործները Ղազախ-Շամշադինի շրջանից հանգստացնեին մեզ, նա վաղուց գրաված կլիներ Կողբի աղահանքերը եւ իր զորամասերը իգդիրից կհաներ Արարատի փեշերի բարձունքների վրա՝ քրդերին շպրտելով դեպի Բայազետ:

Կողբի գրավումը չի ճշտվում, հակասական լուրեր են հասնում: Սասունցիները տեսնելով, որ քրդերը Կողբը դատարկում են, մի հանդուզն հարձակումով մտնում են այնտեղ, թալանում, կողոպտում եւ ելի ետ քաշվում: Մրանից կարելի է եզրակացնել, որ կառավարությունը Կաղզվանի ուղղությամբ լուրջ զործողությունների չի դիմել, այլ այդ գրավումը տեղական բնույթ է կրել:

Բայց այս բոլորից հետո, Կողբի գրավումը մի առանձին դժվարություն չի ներկայացնում: Վերջին Երկու շաբաթվա մեր հաջողությունների հետեւանքով, մեր փողերի գինը 50 տոկոսով բարձրացրել է, բայց դժբախտաբար ապրանքների գները դեռ չեն իշել: Զարաշահները (սպեկուլյանտներ) տեսնելով, որ ահազին վնաս են կրում, զաղտնի կերպով մեր բոնիրը կրում են արտասահման, վալյուտան դարձյալ իշեցնելու ի վնաս մեզ, այդ իսկ պատճառով, Ելեմտական նախարարությունը մի խիստ հայտարարությունով արգելել է ճամփորդներին 5000 ռուբլուց ավելի փող ունենալ՝ մեր Երկրից դուրս մեկնելիս: Մեր վալյուտայի բարձրացմանը մեծապես օգնում է մեր պետական փոխառությունը թե Երկրի ներսում եւ թե արտասահմա-

Նում: Վրաստանի հայաշատ մեր քաղաքներում կանայք իրենց ուսկի եւ արծաթ զարդերը նվիրաբերում են հայկական պետական գանձարանին:

Կան մարդիկ, որոնք երբեք լավատես չեն մեր ապագայի նկատմամբ, միշտ տրտնջալով ասում են, որ այսինչ կամ այնինչ նորաստեղծ փոքր պետությունները մեզանից շատ նպաստավոր պայմաններում են գտնվում:

Ոչ ոք իրավունք չունի մեզ համեմատելու մեր հարեւան հանրապետությունների հետ: Մենք բացառիկ պայմաններում ենք ապրում: Այդպիսի կույրերին միայն մի պատասխան կարելի է տալ. Վեց հարյուր տարվա ընթացքում մենք ե՞րբ ենք այնպիսի բախտավոր օրեր տեսել, քան այն րոպեից, երբ ստեղծեցինք մեր սեփական կառավարությունը:

Մեր անցյալը միշտ եղել է տարտամ, անորոշ եւ հուսահատական, իսկ մեր ԱՆԿԱԽ-ԱԶԱՏ պետական օրից, մեր ապագան հետզհետե պարզվել է եւ պայծառացել: Այն դաժան հանգամանքներում, որ մենք ձեռք առանք մեր ճակատագրի տնօրինությունը, եթե մի ուրիշ ցեղ կամ ժողովուրդ լիներ՝ չեր կարող այնպես պատվով դուրս գալ, ինչպես հայ ժողովուրդը: Մեր հանրապետության ամրապնդումը ոչ թե տարիներով, ամիսներով եւ շաբաթներով է առաջ գնում, այլ, թող զարմանք չպատճառի, եթե ասեմ՝ օրերով եւ ժամերով է առաջ ընթանում:

## 19 հուլիսի

Երեկ գիշեր գլխավոր շտաբը հաղորդեց, որ Օլթիի ուղղությամբ թուրք կանոնավոր ասկյարները, թվով 200 հոգի, երկու գնդացիրով փորձել են հարձակվել մեր դիրքերի վրա, բայց մեր գինվորների կողմից ետ են մղված: Հարձակումը տեղի է ունեցել ամսի 16-ին, իսկ հաղորդագրությունը մենք ստացել ենք երկու օր հետո, ինչպես երեւում է կապը կտրված է եղել: Մյուս ճակատներում նշանակալից ոչինչ չի պատահել: Ուղիղ մի ամիս է, որ Ղազախ Շամշադինի շըրջանի «բոլշեվիկյան» արկածախնդրությունը վերջացել է, բայց օր չի անցնում, որ մենք վերջնագիր չստանանք այս կամ այն գիծը չեզոք հաշվելու պահակները այստեղից վերացնելու: Եվ բնորոշն այն է, որ նրանց վերջնագիրը միշտ վերջանում է սպառնալիքով: Բայց

ցարդոչ մի գործողության շենանցել, չնայած, որ նրանց վերջնազրի տված ժամանակամիջոցը միշտ էլ լրացած է եղել, եւ մեր պատասխանները՝ խիստ եւ կտրուկ: Տեղին է նկատել, որ բոլշեվիկները իրենց արարքներով նման են այն շնիկների, որոնք անցորդի վոահաշում են իրենք իրենցից վախենալով:

Գլխավոր շտաբը ի տեղեկություն մեզ հաղորդում է. - «Կիրովը ամեն տեսակ միջոց ձեռք է առել դադարեցնելու Աղրբեցանի գորքերի առաջխաղությունը Զանգեզուրի վրա: Հարկավոր է կենտրոնացնել ուժերը եւ պաշտպանել սահմանները»: Այս խոսքերը բառացիորեն Կիրովինն են, որ ասել է Թիֆլիսի մեր ներկայացուցիչ Բեկզադյանին, իսկ վերջինս նույնությամբ հաղորդել է Երեւան կառավարությանը: Այսպիսով Ղարաբաղը ժամանակավորապես մնում է սովետական իշխանության տակ, իսկ Զանգեզուրում մենք անբախտություն ունենք սահմանակից լինելու նրանց:

## 20 հովհանուս

Իցեւանից գնդապետ Հակոբյանը հեռախոսագրում է, որ Եվլախի շրջանում թաթարների եւ բոլշեվիկների միջեւ կատաղի կոհիվներ են, իսկ Ղազախում լսվում է գնդացրային կրակոցի ձայն: Բոլշեվիկները առաջարկել են վրացիներին շտապ կերպով վերանորոգել Պոյլի կամուրջը: Եվլախից եւ Ղազախից նոր եկած մեր գործակալները նույնն են հաստատում, ինչպես ճշտվում է եւ այն, որ բոլշեվիկները թե հայերին եւ թե թաթարներին զորով մոբիլիզացիայի ենթարկելով ուղարկել են լեհական ճակատ: Աղրբեցանում խուճապ է տիրում, եւ բոլշեվիկները ռազմական բոլոր հարկավոր մթերքները տենդու կերպով տեղափոխում են: Ինչպես երեւում է, լեհական ճակատում գլխավոր եւ վճռական ճակատամարտեր են տեղի ունենում, որոնց ելքը դեռ հայտնի չէ:

## 27 հովհանուս

Ուղիղ մի շաբաթ է, որ օրագրիս մեջ ոչ մի տող չեմ գրել, որովհետեւ աշքի ընկնող դեպքեր չեն պատահել:

Մեր պետական նավակը հաջող է ընթանում, չնայած, որ հյուսիսից թե հարավից եկած ալիքները վտանգավոր են եւ ահարկու: Սա-

կայն հայ ժողովրդի մակույկը շատ է տեսել օվկիանոսի գոր ալիքներ, որոնք մերթ նրան բարձրացրել են իրենց զագաթը, մերթ իշեցրել օվկիանոսի խորանունողը: Հին լողորդներ ենք մենք, մեզ ոչինչ չի կարող վախեցնել, բացի հոգնածությունից, բայց վերջին հանգամանքը եւս մտահոգիչ չէ, որովհետեւ ցամաքը երեւում է, փրկարար փարոսի լույսը հետզհետեւ պայծառանում է, առավոտ է բացվում մեզ համար:

Վեց հարյուր տարի է, որ լողում ենք եւ չենք խեղդվել, եւ այդ պարագան պատահական չէ, այլ համառ եւ անդուլ աշխատանքի հետեւանք է: Մի քիչ էլ աշխատանք, մի քիչ էլ կորով, եւ մենք հասած կլինենք մեր առաջադրած նպատակին:

Մեր ռազմաճակատներում տեղական բնույթ կրող կոհվներ են տեղի ունենում, այժմս մեր կարեւորագույն գորաճակատները Ղազախ-Շամշադինն է եւ Շարուր-Լախիշեւանը: Առաջինը ցարդ խաղաղ էր, բայց այդտեղ նորից դավեր են նյութում մեր դեմ: Մեզ հանգիստ չեն տալիս եւ շարունակ զբաղեցնում են մեզ իրենց ավագակային ասպատակություններով: Այսպես, օրինակ, օր առաջ թաթարները, թվով վեց հարյուր հոգի, հարձակվել են Պուղ գյուղի վրա եւ զրավել են այն, մեր պահակները, բնական է՝ պիտի տեղի տային իրենցից հարյուրապատիկ ուժերի առաջ: Այդ ավագակախումբը բաղկացած է զլխավորապես այն թաթարներից, որոնք չեն ուզում զինաթափվել Աղրբեցանում եւ Նրանցից, որոնք սրանից մի երկու ամիս առաջ քշվել են մեր երկրից դուրս: Սրանց ղեկավարում են «մուսավաթականները», որոնք շարունակում են հետապնդել իրենց դժոխային նպատակները, այն է՝ Հայաստանի դիակի վրայով կապվել Մուստաֆա Քեմալի ուժերին:

Մեր հակա-հետախուզական վարչության գործակալները Աղրբեցանից հակասական տեղեկություններ են բերում, ոմանք ասում են, որ սովետական իշխանությունը ամեն շանք թափում է Հայաստանը ներսից եւ դրսից պայթեցնել եւ միանալ քեմալիստների հետ, իսկ ոմանք ճիշտ հակառակն են պնդում, որպես թե նրանք այդպիսի լուրջ մտադրություն չունեն եւ այլն: Սակայն իրականությունը մեզ բոլորովին այլ բան է ասում: Սովետական իշխանությունը իրապես ամեն կերպ խլուրդային աշխատանք է թափում կապվելու Անատոլիայի միլիտարիստների հետ, կռվելու Եվրոպական բռնակալների դեմ: Կարմիրների խստությունները Աղրբեցանում բոլորովին խորտակեց

թուրք-թաթարների սպասելիքները: Նրանք կարծելով, որ Ադրբեյջանը խորհրդային հայտարարելով մեծ հարված կհասցնեն Հայաստանին, բայց նրանց սին հույսերը ցարդ եւ հետազայում ոչ արդարացել են, ոչ էլ պիտի արդարանան:

Երեկ մեզ մոտ եկավ սովետական Ադրբեյջանի հակա-հետախուզական կազմակերպության կառավարիչ գանձակեցի Սողոմոն Գրիգորյան-Հովհաննիսյանը, տեսակցություն ունեցավ Սեպուհի հետ, որ տեւեց երկու ժամ: Բավական կարեւոր եւ հավանական տեղեկություններ տվեց բոլշեվիկների գործունեության մասին ընդհանրապես եւ բոլշեվիկ Ադրբեյջանի մասին մասնավորապես: Նա կարծես մեր մեջ խախտեց դեպի բոլշեվիկները տածած թերահավատությունը եւ վստահեցրեց, որ Ռուս եւ այլազգի իսկական կոմունիստները շատ լավ են տրամադրված Հայաստանի հանդեպ եւ նրանք բոլորովին մտադրություն չունեն քայլելու Հայաստանի վրա: Սակայն բոլշեվիկյան քողի տակ թաքնված մուսավաթականները եւ հայ ժողովրդի ծոցից վիճածները ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում իրականացնելու Հայաստանի կործանումը: Մարդկային խղճից ու արդարությունից հալածված այդ թշվառականները ել պրովոկացիա, ել աներեւակայելի ստեր չի մնացել, որ բաց շթողնեն թե մամուլի միջոցով եւ թե բերանացի Հայաստանի մասին, որպես թե այնտեղ կատարվող ահաբեկումների, ճնշումների եւ այն բանվորական ու զյուղացիական կրկնվող ապստամբությունների մասին, որոնք, իբր թե ճնշվում են ամենաբարբարոսական կերպով:

Սողոմոն Հովհաննիսյանը հայտնեց նաեւ, որ եթե բոլշեվիկները ուժեր են կենտրոնացնում Հայաստանի սահմանի վրա, այդ ոչ թե հարձակման դիմելու նպատակով է, այլ իրենց սահմանները պաշտպանելու եւ Հայաստանից երկյուղ կրելու պատճառով: Եվ այսպես, եթե հավատանք Հովհաննիսյանի ցուցմունքներին, բոլշեվիկները մեզ հաշվի են առնում: Մտնելով Ղարաբաղ ու Զանգեզուր, նրանք՝ այդ մանկամիտ քաղաքանազետները, սկսեցին զինաթափել հայ զյուղացիությանը, ենթադրելով, որ սրանք եւս վախսկութ թաթարների պես անբարբառ պիտի ինազանդեն այդ ապօրինի կարգադրությանը: Բայց ազատասեր հայ լեռնական ժողովուրդը ծառացել է նրանց դեմ եւ այնտեղ սկսել է ներքին կռիվ, որի հետեւանքով բոլշեվիկները անամոթաբար թողել են Զանգեզուրի սիրտ Գորիսը:

Այսպես, բոլշեվիկներին գրկաբաց ընդունող Ղարաբաղն ու Զան-

գեղուրն արթնության նշաններ են ցույց տալիս եւ իրենց կաշվի վրա փորձով համոզվեցին, որ Նախկին Ռուսաստանն է եկողը՝ նոր հագուստով։ Շարուրը ամբողջապես մաքրվեց մեզ թշնամի տարրերից, որոնք բույն էին դրել երկաթուղագծի երկու կողմերը։ Այժմ մեր քաջարի Բանակը անարգել շարժվում է Նախիջենանի վրա։ Շայթախտ կայարանը եւ Խոկ գյուղը ամսի 25-ին, համառ կռվից հետո, գրաված են մերոնց կողմից։

Աղրբեցանից եկողները ասում են, որ մեր արշավանքը դեպի Զուլֆա-Թավրիզ երկաթուղագիծը ուրախությամբ է ընդունվել այնտեղ, բացառությամբ թաթարների։ Զուլֆա-Թավրիզ երկաթուղու կարեւոր գծի գրավումով ուրախանում ենք եւ մենք, եւ բոլշեվիկները, եւ անզիացիք։ Մեր ուրախությունը ամենքի համար շատ պարզ է, բայց վերջին երկուսի դիվային ուրախությունը մութ է, շատ մութ ամենքին։ Իմ կարծիքով բոլշեվիկները իրճվում են, որ մենք երկաթուղագիծը ազատում ենք հակա-հեղափոխական տարրերից, իսկ մեզ հետ, նրանց կարծիքով, ի վերջո հաշիվ տեսնելը հեշտ է, որովհետեւ ռուսամոլ ենք, եւ եթե մի փառավոր օր զուտ ռուսական զորամասեր շարժվելու լինեն Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրայով դեպի Շարուր-Նախիջեն եւ ապա Պարսկաստան, մենք առանց զնդակ արձակելու պիտի ասենք «հրամեցեք»։

Բայց «կոմունիստ» աշխարհակալները շատ են սխալվում։ Մեր առաջվա պլատոնական սերն ու համակրանքը հանդեպ Ռուսաստանի փոխվել է ատելության ու վրեժինդրության, մենք հիմա քաջ գիտակցում ենք, որ եթե սրանից հետո, եթե նորից մեզ վիճակվի խմել ստրկության թույնը, դրա միակ պատճառը Ռուսաստանն է, լինի նանոր, թե իին, հեղափոխական թե ռեակցիոն։ Թուրք-թաթարական ամեն տեսակի վտանգներին մենք այժմ ի վիճակի ենք դիմագրավելու եւ նույնիսկ հակահարված տալու, եթե Ռուսաստանը, այդ կեղծ կարմիր հազար Ռուսաստանը մեր կռնակից մեզ չհարվածի։

Գալով Անզիացին, պիտի ասեմ, որ նրա ուրախությունը բխում է ոչ թե նրանից, որ նա մարդասիրաբար ցանկանում է, որ Հայաստանի խաչելիությունը վերջանա ու այդ գրկած սրբությունը ազատ եւ անկախ կյանք վարի դարավոր ստրկությունից հետո, այլ նրանից, որ նա հանձինս Հայաստանի ուժեղության եւ անկախության՝ տեսնում է անզիական տիրապետության պաշտպանություն։ Հանձինս մեզ նա տեսնում է մի պատնեշ Ռուսաստանի դեմ, բոլշեվիկյան հա-

մաճարակի դեմ, որ սպառնում է ողջ Եվրոպան հիմնահատակ անել, որից հետո ծովերի թագուհին ստիպված պիտի լինի քաշվել-կծկվել Բրիտանական նեղ, անարեւ ու մառախչապատ կղզիներում եւ լաց լինել իր անցած փառքի վրա: “Պետք է նկատել, որ Եվրոպան, այդ անատամ քավթառը, հանձինս Անգլիայի եւ իր վարչապետ Լոյդ Չորջի, մեզ երկար տարիներ խաբելուց եւ խոստումներով կերակրելուց հետո, հայտարարեց, որ հայերը իրենց հույսը իրենց վրա թող դնեն: Այս հայտարարությունից ուղիղ երեսուն տարի առաջ հայ ժողովուրդը իրաշալիորեն գիտակցել էր, որ իր միակ հույսը, իր միակ ապավենը ինքն է, իր բազուկը: Դրան որպես ապացույց թող բարի լինի «մեծ» քաղաքագետ Լոյդ Չորջը կարդալու հայ ժողովրդական այն երգը, որ ասում է. «Համոզված ենք որ միայն գենքով կահայի փրկություն»:

Թուրքիան տեսնելով, որ մենք սրարշավ առաջանում ենք Նախիցեանում, որտեղ մեր զորքերի առջեւից փախչում են 150 հազար զինված եւ անզեն խուժանը, ուզում է կասեցնել մեր արշավանքը, դրա համար էլ Օլթիի ուղղությամբ մոտ 200 լավ զինված ասկյարներ 4 զնդացիրներով հարձակվել են մեր դիրքերի վրա, բայց ետ են շըպըրտվել:

Անգլիացիների խոստացած ռազմամթերքը արդեն Բաթում է հսկել:

40000-ոց բանակը լավագույն կերպով սպառագինելու եւ զգեստավորելու համար է: Մեր պետության ամենացավալի կողմն էր, որ բուժվեց: Այժմ ռազմամթերքի հոգսը վերացած կարելի է համարել, մնում է հաց՝ նա էլ ապահովված է համարյա, շնորհիվ բարեբեր երկրի եւ այն հաղթությունների, որ մի ամսվա ընթացքում մենք ունեցանք Շարուր-Նախիցեան ճակատում: Հայաստանի բոլոր թշնամիները թող սրանից հետո զգույշ լինեն եւ շխաղան մեր պետության ամենանորբ լարերի հետ, այլապես մենք նրանց գենքով կզգուշացնենք: Զգույշ, շատ զգույշ թող լինեն:

### 31 հուլիսի

Ղազախ-Շամշադինում մեր Նախկին դրությունը վերականգնված է, մենք նորից վերագրավեցինք Զիլը: Թաթար իրոսակախումբը, որ բաղկացած էր հինգ հազար հոգուց, փախել է եւ ցրիվ եկել:

Հրամանատար Սեպուհը, Զիլը թշնամու ձեռքն անցնելուց հետո, այս շրջանում զորահավաք հայտարարեց, որ իմ կարծիքով միանգամայն ավելորդ էր, որովհետեւ լուրջ վտանգ չէր սպառնում Զիլի զորավումը եւ հետո զորահավաքի ազդեցությունը ընկնում է, երբ ամեն մի չնշին ռազմական զործողության ժամանակ զորակոչ է հայտարարվում ու զորացրում է տեղի ունենում, իենց որ դրությունը վերականգնվում է: Պարաբաղում եւ Զանգեզուրում հայ զյուղացիությունը տեղ-տեղ ապստամբվել է բոլշեվիկյան իշխանության դեմ: Սիլիկյանի զորամասը հրաման է ստացել շարժվելու Զանգեզուրի վրա, նրան ենթարկվում են Դրոն եւ Նժդեհը իրենց զորասյուներով:

Նախիցեանում մեր առաջխաղացությունը կանգ է առել, եւ թաթարները մի քանի անգամ նույնիսկ հարձակման են անցել: Լուրեր են պտտվում, որ սովետական մի գունդ 4-թնդանոթով անցել է Նախիցեան եւ միացել Խալիլ Բեյի թափթփուկ քանակին: Ինչպես երեւում է, քաղցած սովետականները Աղոքեցանի ամբողջ կենսամթերքը սպառելուց հետո աչք են տնկել Նախիցեանի վրա, ուր այնքան շատ հաց կա:

Կողքի շոշանում նոր ռազմական զործողություններ են սկսվել. առաջին իսկ հարձակմանը մերոնք գրավել են Կողբ տանող կամուրջը, որ շատ կարեւոր ռազմական նշանակություն ունի: Սարիղամիշի ուղղությամբ թուրքերը փորձել են անցնել մեր շղթան, բայց ետ են շպրտվել: Մեր այս շշմեցուցիչ հաջողությունները հայկական զաղութերում, մասնավորապես Վրաստանում, մեծ ոգեւորություն են առաջ բերել: Համարյա ամեն օր տասնյակ ընտանիքներ վերադառնում են, վերջնականապես վերաբնակվում Հայաստանում: Առայժմ կյանքը մեզ ժպտում է:

## 1 օգոստոսի

Ինձ զարմացնում է մի հանգամանք, որ մեր զորամասերը կանգնել են Նախիցեան քաղաքից 13 վերստի վրա, բայց ցարդ չեն կարողացել մտնել քաղաք, չնայած, որ մեր զրահապատ գնացքը հետախուզության համար հասել է Նախիցեանի կայարանը եւ դիտել է, որ քաղաքը արագ կերպով պարպվում է թշնամուց. ոմանք անցնում են Արաքսը՝ ուղեւորվելով դեպի Մակու, իսկ ուրիշները դեպի Զովֆա: Ինչ-որ խորհրդավոր զործողություններ են տեղի ունենում

այնտեղ, որի բնույթը դեռ հայտնի չէ, եւ որը ինչպես երեւում է այնքան էլ նպաստավոր չէ մեզ համար: Սովետական այն գունդը, որ հաջողել է անցնել Նախիջենան, անշուշտ որոշ եւ նախորոշված նպատակով է, որ մեզ նույնպես անհայտ է մոււմ: Համենայն դեպս նրանց ներկայությունը Նախիջենանում երբեք մեզ համար նպաստավոր չի կարող լինել: Այսօր երեկոյան ժամը 7-ին ամեն բան պարզվեց...

«Օգոստոսի մեկի Նախարարական նիստում որոշվեց վերացնել բոլոր արտոնությունները եւ 20-32 տարեկան հասակ ունեցողները ենթարկել գորակոչի՝ ի նկատի ունենալով Հայաստանին ըսպառնացող վտանգը:

Կառավարությունը առաջարկում է բոլոր պետական, հասարակական, ինքնավար իիմնարկություններին եւ ազգաբնակչությանը օգոստոսի երկուսից հաշվել ծառայությունից ազատ 1899 թվին ծընվածները, հաշվելով մինչեւ 32 տարեկանը՝ ուղարկելու համար ռազմաճակատ, իսկ նրանց փոխարինել ավելի բարձր տարիք ունեցողներով եւ կամ կանանցով: Այն բոլոր երիտասարդները, որոնք սույն հրամանը հայտարարելուց հետո 48 ժամվա ընթացքում, այսինքն մինչեւ օգոստոսի 3-ը ժամ 12-ին չեն ներկայանա զինվորական ատյանին, կհամարվեն դասավիճներ»:

Ահա այն հեռագրի պատճենը, որ մենք ստացանք երեկոյան: Մեր Հայրենիքին սպառնացող վտանգի պատճառը չի ասված հեռագրում, դրա համար էլ շատ ենթադրությունների առիթ տվեց ինձ: Մեկ մտածում եմ, որ նոր արշավանքներ ենք սկսելու դեպի Տաճկահայաստան կամ մեր բանակի պակասը լրացնելու համար է, կամ երեխ ուզում են պահեստի բանակ կազմել: Մեր ներկա ուժերը շատ են հոգնել՝ այս ու այն ճակատ շպրտելով: Բայց այս բոլոր ենթադրություններից գուցե եւ ոչ մեկը ճիշտ չէ, սակայն հույս ունեմ, որ շուտով պիտի պարզվի այդ մեծ վտանգի պատճառը: Եվ ես չեմ սխալված: Մի ժամ շանցած պառլամենտի անդամ Արշակ Հովհաննիսյանի անունով ստացվեց մի հեռագիր, որով հաղորդվում է, որ Դրոն Սիսիանում ջարդելով բոլշեվիկյան երկու էշալոն (երեխի գորասյուն) գրավել է Անգեղակոթը, Բազարշայ եւ Բորիսովկա գյուղերը, այսպիսով նա կտրել է Նախիջենանում գտնվող սովետական գնդի ճանապարհը: Կարմիրները, Խալիլ Բեյի ջարդված բանակի հետ միանալով, վերջնագիր են ներկայացրել մեր հրամանատարությանը, որ անմի-

շապես պարպենք Շարուր-Նախիջենի ամբողջ գավառը, որ այնքան զոհերի զնով ձեռք ենք բերել: Սովետական նենգավոր իշխանությունը կամաց-կամաց իր ժանիքները բաց է անում Հայաստանի հանդեպ: Աննպատակ չէր, որ նրանք մոտ երկու ամիս է, որ բանակցում են մեր պատվիրակների հետ, բայց ցարդ հաշտություն չկապեցին, իիմա էլ ուզում են բանակցությունները Մոսկվայից տեղափոխել Երեւան, այդ մասին լիազորել են Լեզրանին, որ Աղստաֆայից արդեն Թիֆլիս է հասել: Զուր հույսեր, նրանք ձգձգում են բանակցությունները, որպեսզի կարող լինեն իրենց արածն անեն եւ մեզ դնել կատարված փաստի առաջ: Սակայն լավ իմացեք ցարական հոգով եւ «կոմունիստական» վերարկու հազած աշխարհակալներ, հայ ժողովուրդը ձեզ եւս արժանի պատասխան կտա իր բազուկով, որ տասնյակ տարիների անընդհատ կրիվների ընթացքում այնքան ջլապինդ եւ ճկուն է դարձել: Մխիթարականն այն է, որ Դրոյի կողմն են անցել հայ զյուղացիները, որոնք շատ կարճ ժամանակում ճաշակեցին «կոմունիստ» տարրերի բռնակալական լուծը:

Դաշնակցական կենտրոնական կոմիտեն հայտարարել է Հայաստանում կուսակցական զորահավաք, որ է՛լ ավելի նշանակալից է եւ ապացուցում է այն, որ իրոք մեր հայրենիքին սպառնացող վտանգը իսկապես լուրջ է: Ես անձնապես հոռետես չեմ, եւ չգիտեմ ինչու հաստատ համոզված եմ, որ փորձության այս բաժակն եւս կանցնենք: Հաց ունենք, ռազմամթերքը իր ժամանակին հասավ, փառք մեր իմաստության, կառավարությունը վերացրեց բոլոր արտոնությունները, որի շնորհիվ դասալիքների ահազին լեզեռներ եր ստեղծել եւ նոր առիթ եր տալիս տրտունջների, թե ինչու՝ անխտիր բոլորը չեն մտնում բանակ:

Այս դժբախտ լուրը ստանալուց անմիջապես հետո մի ուրիշ ոլորբախտություն եկավ մեր շտաբի զիսխին: Բանն այն է, որ Սեպուհը տուն գնալիս ձիուց վայր է ընկնում եւ ոտքը ցավացնում է այն աստիճան, որ ուրել է եւ ստիպված է անկողին ընկնել, որից անկասկած տուժում է այս շրջանի զորահավաքը: Օգտվելով այս հանգամանքից, մեր շտաբի պետ փոխգնդապետ Պալյանը եւ մյուս անպարտաճանաչ սպաները ընկած քեֆերի ետեւ մեկ-մեկ երեւում են եւ իսկույն կորչում: Շտաբում մնացել են Սեպուհի համհարզ Մուշեղ Թամրազյանը եւ մի քանի երկրորդական ծառայողներ. փաստորեն Մուշեղն է վարում շտաբի ամբողջ գործերը: Ես զարմանում եմ, որ Սեպուհը այս

բանի վրա ուշադրություն չի դարձնում, չնայած, որ մի քանի անգամ այդ մասին նրան ասված է: Սպարապետի շտաբից նոր միայն պաշտոնական հաղորդագրություն ստացանք զորաճակատների մասին. համարյա ամեն տեղ անփոփոխ է, բացի Զանգեզուրից, որ մեր զորքերը Դրոյի գլխավորությամբ ամսի 1-ին գիշերը, համար կռվից հետո, զրավել են Երիմ թափան, Ահմեդյուրդը եւ Անգելառ գյուղը, որոնք ռազմական հսկայական նշանակություն ունեն: Մեր առաջխաղացությունը շարունակվում է:

## 2 օգոստոս

Շամշադինում Մանելի զորամասի պահակներից չորս հոգի հրացաններով անցել են թշնամու կողմը: Այս առաջին դեպքն է, որ պատահեց հուլիսի 31-ին: Սովետականները, ինչպես երեսում է, շփում ունեն մեր պահակների հետ, որ մեր սպայությանը դեռ ծանր չէ:

Մեպուիծ կարգադրեց, որ Մանելը մեր կողմից պրոպագանիստներ ուղարկի կարմիրների մեջ նրանց նույն ձեւով կազմալուծելու, ինչպես նրանք աշխատում են մեզ անել: Դրա արդյունքը այն եղավ, որ այսօր իրենց հրացաններով Մանելին ներկայացրել են երկու կողակներ, որի մասին հայտնվեց Սպարապետին: Սակայն վերջինս հեռագրում է, որ այդ բանի վրա լուրջ ուշադրություն պիտի դարձնել, որովհետեւ նրանք սովորաբար միտումներով են փախչում մեր կողմը: Սակայն ամենից հետաքրքրականն այն է, որ այսօր ժամը 13-ին մենք Բաքվից Ղազախի վրայով մի վերջնազիր ստացանք Հայաստանի զորքերի Հրամանատարության անունով, որի բովանդակությունը հետեւյալն է.

«Խորհրդային սոցիալիստական Ադրբեյջանի դեմ  
զործող հայկական զորքերի հրամանատարությանը  
Բաքու,  
մեկը օգոստոսի  
13 ԺԱՄ 20 ՐՈՒՅՆ:

Զանգեզուրի եւ Շարուր-Նախիջենանի գավառներում ազգամիջյան ջարդ է տեղի ունենում հայերի եւ թուրք-թաթարների միջեւ,

որի հետեւանքով ոչնչանում են խեղճ եւ անպաշտպան աղքատների ընտանիքները, փշանում են ամբողջ գյուղեր եւ ավաններ, թափվում է հազարավոր գյուղացիների արյուն: Այդ հաշվեմաքրումի դադարեցման խաղաղ իրավակարգ հաստատելու համար, վերոհիշյալ գավառներում մեր կողմից մտցված է Կարմիր բանակին պատկանող գործ, որը իր հետ տարել է հաշտության դրոշակ այդ շրջանների բոլոր աշխատավորների համար, այնինչ ձեր կողմից ակտիվ գործողություններ են ձեռք առնված մեր գորքերի դեմ, որով դուք մարտահրավեր եք անում Կարմիր բանակին, որը բնավ չի ցանկանում մտնել ռազմական գործողությունների մեջ ընդդեմ Հայաստանի բանվորների եւ գյուղացիների: Բայց մենք ձեզ պետք է նախազգուշացնենք, որ եթե ձեր կողմից կտրուկ միջոցներ ձեռք չառնվեն դադարեցնելու ակտիվ գործողությունները մեր գորքերի դեմ, այն ժամանակ մենք ստիպված կլինենք ընդունել մեր գորքերի դեմ ուղղված հարվածը, որին մենք պիտի պատասխանենք մի շարք ավերիչ հարվածներով: Պատասխանի ենք սպասում ոչ ուշ քան օգոստոսի 5-ին: Այս ժամանակամիջոցում պետք է դադարեցվի ռազմական գործողությունները:

№2447-11-րդ կարմիր բանակի հրամանատար Վասիլենկո,  
զինվորա-հեղափոխական խորհրդի անդամ Շուկին»:

Ղազախից գնդապետ Հակոբյանին բերել են այս հեռագիրը Եւ սպասում են, Սպարապետից դեռ պատասխան չի ստացվել:

Զորակոչը առայժմ հաջող է գնում, բայց դեռ ժամանակը չի լրացել, որ արդյունքը հայտնի լինի:

Զանգեզուրում մեր առաջխաղացությունը շարունակվում է, թշնամին ցույց է տալիս համառ դիմադրություն: Ամբողջ գիշեր տեւող կռվից հետո, Դրոյի զորամասը գրավել է Ղարաքիլիսա (Սիսիան) գյուղը, Ղարա-Ղայա եւ մի շարք կարեւոր բարձունքներ, վերցրել ենք գերիներ եւ վիրավորներ: Նրանք պատմել են, որ իրենց հրամայված է Նախիջեւանի վրայով միանալ կարմիր թուրքերին: Ծիշտ է, թուրքերը կարմիր ֆես ունեն եւ նրանց մահասարսութ ձեռքերը ներկված են հայ կանանց եւ երեխաների արյունով, եթե «կոմունիստների» կարմիր ածականը թուրքերի հասցեին այս մտքով է գործած-

ված, մենք լիովին հասկանում ենք, իսկ եթե «տուվարիշչորեն» է գործածված, այդ մեզ անհասկանալի է, նույնիսկ ծիծաղելի:

Անգեղակորթի ճանապարհին մենք թշնամուց խլել ենք մի զնդացիր, 11 ձի եւ ռազմական ուրիշ ավար: Սիսյանցիներից 200 հոգի միացել են մեզ, եւ ժողովրդի տրամադրությունը հետզհետեւ բարձրանում է: Մենք գտնվում ենք Գորիսից 15 վերստի վրա: Դրոն խնդրում է սավառնակ ուղարկել թուրիզիկներով, հայ գյուղացիությանը բաժանելու համար:

### Յ օգոստոս

Սովետական Ադրբեյջանի տված վերջնազրին դեռ պատասխանված չէ: Երեւի պատասխանը ուրիշ գծով է տրված, բայց այդ մասին մեզ պիտի հայտնեին, որովհետեւ թշնամու պարլամենտորները սպասում են իցեւանում:

Մեպուիը դեռ պառկած է, մինչ շտաբի գործերը օրեցօր բարդանում են, մի կողմից զորակոչը, մյուս կողմից զինվորական այլ խնդիրները խճճվում են իրար: Շտաբի սպաների անպարտաճանաշությունը ու անտարբերությունը քանի զնում անհանդուրժելի է դառնում: Նրա բացակայության պատճառով շտաբի շենքը ուղղակի դատարկ է, թվում է, թե ամեն բան վերցացել է, եւ կյանքը մտել է իր հունը: Այնինչ իրականության մեջ այդպես չէ. մեր կյանքը ելի սկսվել է ալեկոնձվել շնորհիկ բոլշեվիկ-թուրք-թաթարական միացյալ վերջնազրի:

Շարուր-Նախիջենի շրջանում թուրք-թաթարները, քաջալերված «կարմիրների» ներկայությամբ, սկսել են հակահարձակման դիմել: Այս զորակոչի առթիվ ահազին եռուգեռ է սկսվել Հայաստանի կենտրոններում, մասնավորապես Երեւանում, Պարսում եւ Ալեքպում: Ամբողջ երիտասարդությունը արձագանք է տալիս զորահավքին, դասալքությունը, որ առաջ համատարած ցավ էր, վերացել է, շնորհիկ այն բանի, որ կառավարությունը զինապարտների վերաբերմամբ խիստ միջոցների է դիմում եւ վերացրել է ամեն տեսակի արտոնությունները, որոնք դուք էին բացում անարգ դասալքության: Հայ ժողովրդի ամենալկտիացած դասը՝ դերասանները առաջինը եղան այս փոքրիկ քաղաքում, որ հանկարծ ներխուժեցին շտաբը եւ հայտնեցին, որ իրենք ազատվում են զորակոչից, որովհետեւ դերասաններ են: Այստեղի տկարամիտ սպաները արժանի պատասխան

չկարողացան տալ այդ կես մարդ երկոտանիներին:

Ես չկարողացա համբերել, բերանս բացի եւ նրանց ոտից մինչեւ գլուխ լվացի... Նրանք, իհարկե, զարմացան, որ այդպէս խիստ խոսող ես եմ, գրականության եւ գեղարվեստի մոտիկ կանգնած մի մարդ: Որովհետեւ խոսքերս նրանց հասցեին շատ խիստ էին, ես ուզում եմ արձանագրել եւ երկար վիճաբանությունից հետո ասացի: «Այժմ դարձյալ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցն է հրապարակի վրա դրվում, ուզում եք զորակոչից ազատվել եւ ձեր սովորական միմոսությամբ պարապել: Մեր ժողովրդի շիհնելուց հետո ես թքել եմ ձեզ էլ, ձեր թատրոնի վրա էլ»: Սրանով ել վերջացավ վեճը, եւ նրանք խայտառակաբար թողին շտաբը:

#### 4 օգոստոս

Այսօր ստացվեց Ադրբեյջանի վերջնագրի պատասխանը Նազարբեկյանի ստորագրությամբ, որի մոտավոր բովանդակությունը հետևյալն է, «Մեր զորքերը պաշտպանում են պետական սահմանները, թե արտաքին եւ թե ներքին թշնամիներից: Բնական է, որ ձեր զորքերը պիտի հանդիպեին մեր բանակի դիմադրությանը, քանի որ նըրանք մտել են Հայաստանի անվիճելի հողամասերը: Մեր անկախության դեմ գնացող ապստամբների եւ թշվառների դեմ առանց ազգի, կրոնի եւ դասակարգի խտրության մեր զորքը ծառանում է: Ինչ վերաբերում է տերիտորիալ հարցերին, դա զորքերի զործը չէ: Մենք ունենք կառավարության ներկայացուցիչներ, որոնք վիճելի հողամասերի համար բանակցում են սովետական իշխանության հետ: Ավերված գյուղերի, եւ ավանների խեղճերի ընտանիքների եւ գյուղացիների կոտորածի մասին պիտի ասել, որ այդ բոլորը եղած են խռովարների եւ թշնամիների նահանջից հետո: Մեր զորքերը մտնելուց հետո, ընդհակառակը, պաշտպանվել եւ խնամվել են անպաշտպան ընտանիքներ կառավարության հաշվին»:

Գլխավոր շտաբի օգոստոսի զորաշարժականը ասում է, որ մեր շեշտակի հարվածի տակ Բուղդա թափայից եւ Էլիա թափայից, Մանքենդի կողմից եկող քոչվոր թուրքերը ջարդված են ու շպրտված: 16 ժամին զորասյունը մոտեցավ Արփա-Գյաղուկի գծին՝ գրավելով Էանթափա, Դաշթափա, Ալիպթափա եւ Ուզթափ: Մինչեւ 20 ժամին հրացանային, թնդանոթային ու գնդացրային ուժեղ կոիվ է եղել: 24

ժամին մեր շեշտակի ճնշումով, որն արեց Թարխանովի հեծելազորը, թշնամին ջարդվեց: Թշնամուն հետապնդող Թարխանյանի հեծելազորը թշնամուց վերցրել է զնդացիրներ: Երեկոյան ժամը վեցին մեր զորամասերը հաղթականորեն գրավել են Գորիս քաղաքը, որով վերջացած կարելի է համարել Զանգեզուրի գրավման գործը: Այսպիսով մեր գործերը Զանգեզուր-Նախիջենան զծի վրա ավելի քան հաջող են գնում: Նախիջենան լույս աշխարհ թշնամու հեծելազորը բացարձակապես կտրված է իր զորամասից եւ գտնվում է պաշարման դրության մեջ:

## 12 օգոստոս

Մի շաբաթից ավելի է, որ ոչինչ չեմ գրել օրագրիս մեջ, եւ այդքան կարճ ժամանակամիջոցում շատ գետեր հոսեցին եւ շատ բան փոխվեց թե մեր ռազմաճակատներում եւ թե մեր արտաքին քաղաքականության մեջ: Դեպքերը այնքան արագ եւ հակասական են ընթանում, որ մարդս շշմում է: Մենք, որ օրերի եւ նույնիսկ ժամերի հարց էինք համարում Նախիջենան-Զովֆա երկաթուղագծի գրավումը, այժմ ներկայանում է մի անկարելիություն: Սովետական նենզավոր քաղաքականության շնորհիվ մենք ստիպված ենք թողնել այդ ճակատի գործողությունները եւ կենտրոնանալ Զանգեզուրի վրա եւ առանց վերցինիս գրավման, իհարկե, Նախիջենանի գրավումը անմիտ է: Բայց բանն այն է, որ ամսի 8-ին Սպարապետի շտաբից մեզ քաշած պաշտոնական հեռագիրն ասում է, Դրոն Գորիսից նահանջել է թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ: Ցավալին այն չէ, որ մենք այդ քաղաքը վերագրավելուց հետո թողինք, այլ այն, որ մեր Զանգեզուրի գորամասը դատարկել է ամբողջ Զանգեզուրը եւ քաշվել Դարալազյազի սահմանը: Թաթար-թուրք «կոմունիստների» խորհրդով ռուս խրտվիլակ կոմունիստները իրենց արածը արին: Մի քանի փորձերը ցույց տվին, որ ամենահաջող ռազմական գործողությունների ժամանակ բանակցություններ վարելը՝ թեկուզ ի նպաստ մեզ, միշտ վատ հետեւանք է ունեցել: Նախիջենանի թաթարները մեր կառավարությունից ավելի քաղաքագետ գտնվեցին: Նրանք մեր բոլոր պահանջները ընդունելու տրամադրություն ցույց տվին, Երեւան եկան, խորհրդակցեցին, վերադարձան, մինչ այս մինչ այն սովետականները թաթարների դրդմամբ կարողացան

զորք շպրտել և ախիցելան եւ մեր առաջխաղացությունը դադարեցնելուց բացի, վերջնագիր Ներկայացրին դատարկել ամբողջ Շարուր-և ախիցելանը: Այստեղ նորից սկսվեցին նոր բանակցություններ, նոր վերջնագրեր, մինչեւ որ Զանգեզուրն էլ գրավեցին, կապ հաստատելով սովետական 11-րդ կարմիր բանակի թափթափուկների հետ, որոնք Զանգեզուրի մեր վերագրավումով կտրվել էին Բաքվից օգնություն ստանալու հնարավորությունից: Եթե մենք այն թափով առաջ խաղայինք, ինչպես առաջ՝ առանց բանակցությունների, այժմ գրաված կլինեինք և ախիցելան-Զուլֆա երկաթուղագիծը, որ առեւտրական տեսակետից մեզ համար հսկայական նշանակություն ունի:

Երբ մենք Զանգեզուրում հաջողություններ ունեինք, մեր կառավարությունը երկու ներկայացուցիչներ ուղարկեց՝ Զամայան եւ Բաբալյան Թիֆլիս, որպեսզի լեզրանի հետ ժամանակավոր հաշտություն կնքեն, մինչեւ Շանթի պատվիրակության գալը: Մի կողմից բանակցություններ են վարում մեզ հետ, մյուս կողմից՝ նենզավոր սովետականները զորքեր են կուտակում Զանգեզուրի դեմ մեզ հարվածելու: Վերջապես ստացանք պայմանագրի պատճենը եւ նոր հաղորդվեց մեզ Սպարապետի շտաբից: Պայմանը ձեռնտու չէ մեզ համար. Ղարաբաղն ու Զանգեզուրը «ժամանակավորապես» կտրվում են մեզանից: Այուս ճակատներում այն սահմանորոշ գծերն են մոռամ մեր ձեռքը, որտեղ մինչեւ այժմ կանգնած են եղել մեր զորքերը: Նախիցելանում մեր սահմանն է Շայթախտ կայարանը ներփակաբար, մեզ է վերապահվում Նախիցելան Զուլֆա երկաթուղագծից օգտվելը: Բացի այդ, այն բոլոր զինվորները, որոնք մինչեւ այս պայմանի կնքումը մնացել են սովետական շրջաններում, կարող են վերադառնալ Հայաստան՝ իրենց գենքերով: Ահա պայմանագրի ամբողջ էռլեցունը: Այս պայմանագիրը դեռ չստացած՝ օգոստոսի 8-ին տեղեկություն ստացանք, որ Դրոյի զորամասը Զանգեզուրը ամբողջապես թողել է թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ: Եվ անստույգ տեղեկություններ կան, որ մարդկային ահազին կորուստներ ունենք, բացի ռազմական ահազին պաշարից, որ թողել ենք Զանգեզուրում:

Ներկայումս չկա մի մարդ ողջ Հայաստանում, որ չհասկանա այս ստորացուցիչ պայամանգրի ավելի քան նենզ, ստոր նպատակները: Սակայն ի՞նչ անենք, զտնվում ենք ամենաանպաստ դրության

Այս եւ պետք է ընտրենք երկու չարյաց փոքրագույնը: «Կոմունիստ» Ադրբեյջանի բեգերը, Տաճկաստանի հակահեղափոխական փաշաներն ու ռուս ցարական մարդիկ, «կոմունիստ» վերարկու հազած, հասան իրենց նպատակին:

## 18 օգոստոսի

Սովետականների հետ համաձայնություն կնքելուց հետո ռազմաճակատներում գործողությունները դադարեցված են թե՛ւ, բայց մենք զի՞նված խաղաղություն ենք պահում, որովհետեւ մեր թշնամին այնքան նամարդ է, որ ամեն հարմար րոպէ կարող է հարձակման անցնել: Ամսիս 16-ին Ղազախից ավտոմոբիլով տեղս եկան Ադրբեյջանի ներկայացուցիչները, որոնք երեւան անցան բանակցություններ վարելու: Նրանց հետ եկավ եւ Ադրբեյջանի մեր դեսպանի սուրհանդակը կարեւոր եւ անձեռմիտելի կապոցներով: Ես առիթ ունեցա տեսնվելու սովետական Ադրբեյջանի ներկայացուցիչ Դովլաթյանի եւ նրա անձնական քարտուղարի հետ: Առաջինի հետ կես ժամ խոսակցություն ունեցա սկզբունքային հարցերի մասին:

Բաժանվելիս նա ասաց, որ ավելորդ է շարունակել այս խոսակցությունը, որովհետեւ իրար չպիտի կարողանանք համոզել: Սակայն հետաքրքրական այն է, որ նրանք խիստ ու անուղղակի կերպով պախարակվեցին հրամանատարի կողմից:

## 20 օգոստոսի

Երեկ ներքին գործոց նախարարի օգնական Թորոսյանը հեռագրեց, որ Տաճկաստանը ամսիս 10-ին Անտանտի առաջարկած հաշտության պայմանագիրը երկար ձգձգումներից հետո վերջապես ստորագրեց: Դարավոր արեւելքի բռնակալը ծունկի եկավ արդարության առաջ եւ արցունքը աշքերին իր իսկ ձեռքով ստորագրեց իր մահավճիռը: Եվրոպական պետությունների ներկայացուցիչների հանդիսավոր նիստում հաստատվել եւ հայտարարվել է Միացյալ եւ ԱՆԿԱԽ Հայաստանի ճանաչումը:

Այսօր տեղի ունեցավ մի հսկայական միտինգ զարնիզոնի հրամանատարի եւ հոծ ժողովրդի մասնակցությամբ, ուր խոսեցին քաղաքական հոսանքների զի՞նվորության եւ սպայության ներկայացուցիչնե-

րը: Ոգեւորությունը մեծ էր: Բաղաքիս քաղաքագլուխը կարդաց մի հեռագիր, որով իմացան այն փառավոր հաղթությունները, որ տարել էին Կիլիկիայի հինգ հազարանոց մեր փոքրիկ բանակը, ջարդելով քեմալիստների օղակը, նրանք զրավել են մի շարք քաղաքներ եւ ապահովել Կիլիկիայի անկախությունը: Այսպիսով իայ ժողովրդի հերոս փոքրաթիվ զորքը ամեն ճակատներում անժխտելի հաղթություններ է տանում:

## 23 օգոստոսի

Սովետականների հետ ժամանակավոր հաշտություն կնքելուց հետո, նրանց ռազմաճակատներում կրիվները դադարել են: Այդ իսկ պատճառով Սեպուհը Սպարապետից թույլտվություն է ստացել տասնհինգ օրով արձակուրով գնալ: Երեւի իշխանությունը նորից հանձնվում է թուլամորթ զորավար Խանկալամյանին: Օգտվելով այդ հանգամանքից ես եւ Մուշեղ Թամրազյանը Սեպուհից թույլտվություն ստացանք Երեւան մեկնելու նույնըան ժամանակամիջոցով: Ստեփանը վաղուց է, որ իգդիրում է, նրա բացակայության պատճառով նրա հարյուրակ այրուձին համարյա թե կազմալուծված է: Դիլիջանից ձանձրացել ենք եւ մայրաքաղաքին կարոտել: Չորս ամսվա ընթացքում շատ բան է փոխվել, եւ մեր քաջարի Բանակի անօրինակ հաջողություններից հետո հետաքրքրական է Երեւանը տեսնել, այն Երեւանը, որ սրանից մի տարի առաջ ահազին զոհեր տվեց Բեյութեղին զրավելու, բայց չկարողացավ, իսկ այսօր, օհ, այսօր մենք նույնիսկ համարձակություն ունենք մեն-մենակ զրավելու Տաճկահայատանը:

Ճիշտ է ասված, երբ մենք շրջապատված էինք բարեկամ պետություններով միշտ պարտություն էինք կրում, իսկ երբ մեն-մենակ մնացինք՝ հաղթեցինք մեր բոլոր թշնամիներին:

Արդեն պատշաճ վկայականներս ստացաւ վաղը, եթե ավտոմոբիլ լինի, անպայման մեկնելու եմ: Սեպուհը, որ մեկնեց Ղարաքիլիսա՝ Ալեքսանդրապոլ գնալու, վերադարձավ, որովհետեւ Ղարաքիլիսայի ճամփի կեսին ավտոմոբիլը փշացել է: Մուշեղը չի ուզում նրանից առաջ մեկնել, վախենալով, որ շատ փող կծախսի, իսկ ես չեմ կարող մնալ, ընտանեկան հանգամանքներս ինձ իրամայում են գնալ:

Շտաբում շշուկներ կան, որ Սեպուհը զնում է չվերադառնալու

պայմանով: Այդ ի նկատի ունենալով, ես ու Մուշեղը որոշեցինք իրերս հետներս տանել:

Մենք ուրախ ենք, որ իրամանատարը որոշել է այս ճակատից տեղափոխվել մի այլ ճակատ: Զինվորականի համար ավելի անտառելի բան չկա, քան այն, որ նա շարունակ միեւնույն ճակատում մընա: Նա մտադիր է Ղարս-Սարիղամիշ տեղափոխվել, իսկ մենք ցանկանում ենք Զանգեզուր-Ղարաբաղ, տեսնենք, որը կհաջողվի: Վերջին անգամ Մուշեղն ու ես գնալու ենք Դոտոնտո համերգի, այնտեղ կպատահենք ծանոթ կանանց եւ օրիորդների, որոնց ձեռք առնելը մեզ հաճույք է պատճառում:

## Ելենովկա 24 օգոստոսի

Այսօր երեկոյան ժամը 5-ին հասանք Ելենովկա մոլոկանի մեծ գյուղը: Դեռ վաղ առավոտյան երեւան գնացող ճանապարհորդների մեծ բազմություն էր սպասում ավտո-գարաժի դռան մոտ: Մեկ բեռնակիր այդքան ճանապարհորդ: Ո՞ր մեկը պիտի մեկներ եւ որը մնար: Բայց շոֆերները իրենց գրպանի գործը գիտեն եւ նրանք բոլորին էլ տեղ տվին եւ մեզ ձկների նման իրար վրա ածած ճամփա ընկան: Շոֆերները այնքան փշացած դասակարգ են կազմում, որ նրանք ավելի շուտ պատրաստ են զինվորական գործերով եւ զինվորական ավտոմոբիլով գնացողների առաջ արգելքներ հարուցել, քան մասնավոր մարդկանց, որոնցից փող են ստանում: Մեր հաղորդակցությունը շատ է անկանոն եւ դա բնական է, որովհետեւ ոչինչ չունենք, երկաթուղին չի գործում, նավթ եւ մազութ չլինելու պատճառով: Մեզ հետ ճամփորդողների մեծ մասը ուրախությամբ երկաթուղով կզնար երեւան, քան շռնդացող բեռնակիր ավտոմոբիլներով, որ ամեն քայլափոխում շոֆերների քմահաճույքով ժամերով կանգնում է ճամփաներին:

Նոր-Բայազետի գյուղացիները համարյա գրկված են այս տարվա իրենց ցանքսերից, որովհետեւ դաշտային մկները փշացրել են արտերը: Այս շրջանի օդի առողջությունը, հողի բերրիությունը եւ բնության գեղեցկությունը ինձ հիացրին:

Մինչ Արարատյան դաշտի եւ Նախիջեւանի ցանքերը վաղուց վերցված են, իսկ այս շրջանում արտերը մեծ մասամբ կանաչ են: Վերջապես բլուրների բարձրությունից ճանապարհը կամաց-կամաց

մոտեցավ պատմական Գեղամա լճին, Երեւաց Սեւանա վանքը, որ գեղեցիկ նյութ է մատակարարել մեր դրամատուրգ Լեւոն Շանթին, որ հիմա թողնելով «Հին Աստվածները» Մոսկվա է մեկնել «ՆՈՐ Աստվածներ» որոնելու համար:

Խեղճ հայ գեղարվեստագետ, Ե՞րբ վերջապես դու պիտի ազատվես քեզ տիաճ գործերից եւ Նվիրվես քո ստեղծագործությանը, քո բնական ձայնին: Մենք բոլորս գրելը մեկ կողմ թողած աշխատում ենք ազատանկախ ընթերցողներ պատրաստել ապագա երջանիկ գեղագետների համար: Մեր հետնորդ գրողները ապերախտ կլինեն, եթե չկարողանան արժանապես զնահատել ժամանակակից հայ գրողին, որ միաժամանակ եւ զինվոր է, եւ դիվանագետ, եւ հասարակական գործիչ, հեղափոխական: Մենք պարծենում ենք մեր գործով, որ իրազործում ենք Ռաֆֆու, Պամառ-Քաթիպայի, Նալբանդյանի եւ ուրիշ հոչակավոր գրող-հեղափոխականների գաղափարները: Եթե մի բոցե այդ անմահ հոգիները զլուկները վեր բարձրացնեն ու նայեն Արարատի ձյունապատ զագաթին ծածանվող հանրապետական դրոշակին, կասեն,

«Մեծ ենք մենք եւ Մեծ են եղել Մեր իղձերն ու Երազանքները, բայց ավելի ՄԵԾ ու արժանավոր են մեր կրթած սերունդները, որոնք համառ կամքով ու անպարտելի վճռականությամբ իրազործել են այն, ինչի մասին միայն երազել ենք թղթի վրա»:

## Երեւան, 30 օգոստոսի

Հայաստանի մայրաքաղաքում եմ արդեն, կես տարի առաջ տեսած քաղաքը բոլորովին ուրիշ տեսք ունի, կյանքը եռում է, զաղթականներ չեն երեւում փողոցներում, այժմ նրանց փոխարինել են Հայաստանից դուրս գտնվող զաղութների ազգաբնակչությունը, մեծամասամբ ունետրներ: Ներկայումս Հայաստանը մի փոքրիկ լճի է նման, որը հետզհետե մեծանում, ծավալվում է զաղութների հոսանքներով: Երկրագնդի ամեն ծայրերից զալիս են, իա զալիս, եւ շնորհիվ այդ հանգամանքի, բնակարանի ճգնաժամը զնալով ավելի ու ավելի սուր կերպարանը է ստանում:

Իմ ընկեր համհարգ Թամրազյանը, որ պիտի ինձ հետ գար ամսի 23-ին, այսօր հասավ Երեւան, շուտով կզա եւ Սեպուհը, եւ ինչպես

Երեւում է, միասին մեկնելու ենք Իգդիր: Պետք է ճիշտ խոստովանեմ, որ առանց Թամրազյանի ես ժամանակը այնքան ուրախ եմ լի չեմ անցկացնում, նրա զալուց հետո ժամանակը շուտ է սահում: Մենք իրար լավ ենք հասկանում, նա ազնիվ, մաքուր եմ համսունական անհոգ տիպերից է, նրա հետ կարելի է տարիներով ապրել՝ առանց ընդհարվելու: Ազատամիտ է եմ լուրջ:

#### Իգդիր, 4 սեպտեմբերի

Այսօր հասանք Իգդիր: Երեւան գալով Սեպուհը մի քանի օր մնաց այնտեղ, որից հետո Թամրազյանին եմ ինձ վերցնելով եկավ Իգդիր՝ Բրիզադայի գործերին ծանոթանալու: Ծանապարհին իրամանատարը պատմեց, որ ինքը տեսնվել է վարչապետ Օհանջանյանի եւ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հետ, նրանք խնդրել են, որ Սեպուհը չիրաժարվի Դիլիջանի շրջանից, իսկ Սեպուհը ուղարկել է նրանց, որ իրեն տեղափոխեն կամ Ղարաբաղ-Զանգեզուրի եւ կամ Ղարսի ռազմաճակատը:

Նախարարները գտել են, որ Դիլիջանի ճակատը ավելի վտանգավոր է եւ կարեւոր, ուստի պնդել են, որ նա դարձյալ շարունակի այնտեղ մնալ, որտեղից եւ սովետականները կարող են միշտ մեզ զզալի հարված հասցնել: Սեպուհի հարցը վերցնականապես դեռ վճռված չէ, երեւի նախարարական խորհուրդը առանձնապես կզբաղվի այդ հարցով:

Զարմանալի թող շթվա, երբ ասում եմ նախարարները «խնդրել են»: Սեպուհը, ինչպես ինքն է ասում, կարող է վերցնականապես թողնել զինվորական ասպարեզը եւ հեռանալ, որովհետեւ նա թեեւ ի պաշտոնե գեներալից էլ բարձր է, բայց պարտավոր չէ ծառայել, եթե ցանկություն չունենա: Այդ իսկ պատճառով, նրանք նախարարները չեն կարող իրամայել, այլ կարող են միմիայն խնդրել: Պետք է խոստովանել, որ մենք էլ չենք ուզում այս շրջանը մնալ, այժմ այստեղ համարյա թե գործ չկա անելու, իսկ Սեպուհը սիրում է շարունակ գործել, մանավանդ, որ երկիր գրավելու հարց կա, եւ նրա հզոր բազուկը ավելի ուժ եւ եռանդ է ստանում ավելի շատ տաճկական ճակատում: Այս ճակատը թողնելու գլխավոր պատճառներից մեկն էլ այն է, որ Սեպուհը լաց ի սիրտ է կռվում իր հարազատ եղբայրների

դեմ, ինչպես նաև արտահայտվում՝ հայի արյուն թափելը, ինչքան էլ վատ, հայրենամերժ լինեն նրանք, Սեպուհի համար շատ դը-վար է:

Առհասարակ բոլորն էլ վստահաբար ասում են, որ եթե Սեպուհը շարժվի Զանգեզուրի եւ Ղարաբաղի վրա՝ այդ խճճված հողային խնդիրը վերջնականապես կլուծվի հօգուտ մեզ:

Ըստ սովետական ժամանակավոր պայմանագրի, որ օգոստոսի 10-ին կնքեցինք, մենք իրավուն չունենք Զանգեզուր-Ղարաբաղի վրա շարժվել, չնայած, որ այդտեղի հայ աշխատավոր մասսան, ճաշակելով ռսի լուծը, այն ռուսի, որին այնքան ձգտում էր, վերջնականապես հիասթափվել է եւ ամենօրյա իր ուղարկած պատվիրակ-ներով զահլաներս տանում է:

Սակայն իմ կարծիքով դեռ վաղաժամ է Ղարաբաղ-Զանգեզուրին օգնության հասնելը, թող նա վերջնականապես ծծի այն սեւ մրուրը եւ ինքը առանց տատանվելու համոզվի, թե ում զիրկն է ընկնելու:

Իգդիրում մենք միայն երկու օր մնացինք: Հետեւյալ օրը տեղի ունեցավ եզիդ 100 կամավորների եւ մի հիսնյակ հետեւակների գորահանդեսը: ճաշից հետո հրամանատարը դուրս եկավ նրանց նայելու իր շքախմբով: Նա հայերեն եւ թուրքերեն մի տաք ճառ արտասանեց, որ ծածկվեց կեցցեներով: Նա իր ճառում շեշտեց, որ ինչպես հայը, նույնպես եւ եզիդ ժողովուրդը հավասարապես հեծծել է տաճիկ բռնակալության լծի տակ եւ հիմա այդ ժողովուրդները իրենց անմահ զավակների արյունով ձեռք են բերել ազատություն-անկախություն սիզապանծ Մասիսի ստորոտում: Հայաստանի հանրապետությունը սեփականություն է ինչպես հայ, նույնպես եւ եզիդ ու այլ ճնշված ժողովուրդների՝ ազգերի ու ցեղերի համար, որոնք ապրում են նրա հողի վրա եւ որոնք իրենց սրտի մոտ են զգում այդ երկիրը:

Ապա հրամանատարը հիշեցրեց եզիդիներին, որ Հայաստան կոչված երկիրը սա չէ միայն եւ, որ մայր Հայրենիքի կարեւոր եւ մեծ մասը դեռ գտնվում է նույն բռնակալների ձեռքում եւ արցունքը աշքերին սպասում է մեզ, որ գնանք ու փշրենք նրա շղթաները: Եզիդ զինվորները հայ մարտիկին խանդավառ ցույցեր սարքեցին եւ ուխտեցին իրենց եղբայր հայ զինվորների կողքին կռվել եւ մեռնել, քանի դեռ վերջնականապես չէ իրազործվել Հայաստանի Միացյալ եւ Անկախ Սուլբ զաղափարը: Զորահանդեսից հետո զորքը, սպայությունը եւ ժողովուրդը ցրվեց ուրախ տրամադրությամբ:

Մի քան նկատելի էր, որ հայ գինվորականությունը նրանց վրա շատ բարձրից էր նայում, ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ մեծն Ռուսաստանը նայում էր մեր կամավորական անկանոն խմբերին: Չմոռանամ հիշատակել, որ Սեպուիը նրանց սպա մարզիչներ կարգեց եւ խոստացավ նրանց նոր հազուստ եւ կոշիկներ տալ:

Ստեփան Ծաղիկյանը, որ այստեղից մի քանի ամիս առաջ մեկնել էր Իգդիր, կարգի էր բերել իր ձիավոր հարյուրակը, որ նրա բացակայության պատճառով քայլայվել էր, մեզ տեսնելով շատ ուրախացավ: Նա գոհ էր Իգդիրից եւ զերծ մոծակների սարսափից, որ այնքան ահ ու դող էր ազդում եւ հրամանատարին եւ Ամիրյանին: Մուշեղն ու ես ուրախությամբ կմնայինք այստեղ, եթե հրամանատարը թույլատրեր:

Այնտեղ ստացվել էր Կողբի աղահանքերը գրավելու ծրագիրը, որ կազմել էր գնդապետ Վերիլովը եւ որին հանձնվել էր այդ գործողությունները վարելու ընդհանուր հրամանատարությունը: Ի տեղի հրամանատարի գնդապետ Խուդաբաշյանին էր հանձնվում ճակատի ղեկավարությունը: Նա լուրջ, բարեխիղճ եւ հանդուզն գինվորական էր, որին բոլորն էլ անխտիր հարգում էին:

Այդ երկու օրը շիմացանք ինչպես անցավ Իգդիրում: Օգոստոսի 6-ին ճաշից հետո թողինք Իգդիրը եւ վերադարձանք Երեւան, որտեղից մի քանի օր հետո Սեպուիը Դիլիջանի վրայով Ալեքպոյ անցավ, իսկ ես ու Մուշեղ Թամրազյանը եկանք Դիլիջան: Առայժմ ոչ ես եւ ոչ էլ նա շտաբի գործերին չենք խառնվի, բայց շտաբի պետ Պալյանը ստիպում է Մուշեղին, որ գործերը անհապաղ ստանա, չնայած այն բանին, որ հրամանատարը թույլատրել էր Մուշեղին մի երկու շաբաթ հանգստանալ: Ամիրյանը եւս շուտով այստեղ պիտի գա: Նրան մենք հանդիպեցինք Երեւանում, որ Ալեքպոյից էր եկել եւ մտադիր էր մի քանի օրով Իգդիր գնալ:

Դիլիջան, 20 սեպտեմբերի

Այստեղ աշուն է կատարյալ, ամպամած, անձրեւային աշուն: Ամռանոցավորները վերադարձել են, կյանքը մեռել է այստեղ եւ ամեն ինչ տաղտկալի է: Ամառվա զով, գեղեցիկ եւ պայծառ օրերը այ-

լեւ չկան: Տխուր է, շատ տխուր: Այդ տխրությունը ավելի եւս զգալի է մանավանդ այն պատճառով, որ մեր շտաբի դրությունը անորոշ է. չգիտենք, վերջապես, այստեղ պիտի մնանք, տեղափոխվենք իզդի՞ր, թե՞ մի ուրիշ ռազմաճակատ: Դեռ ամսիս 9-ին մեր քաջարի Բանակը գրավեց Կողբի աղահանքը, ուր Նրան լուրջ դիմադրություն ցույց չէ տված:

Արեւմտյան ճակատում խայտառակ պարտությունից հետո, Բաքվի բոլշեվիկները Դիլիջանի ճակատում նոր ավանտյուրայի են դիմել: Նրանք օգտվելով այն հանգամանքից, որ այս ճակատից մեր պահակային գումարտակը ուղարկվեց Երեւան՝ հարձակման դիմեցին եւ գրավեցին Աքսիբաբայի ձորը: Հրամանատարի կողմից միջոցներ են ձեռք առնված դրությունը վերականգնելու: Այստեղ մի բան պետք է շեշտել, որ Նրանք այս երրորդ անգամն է, որ մեր դեմ նոր գործողություններ են սկսում ուղիղ ամեն ամիս մի անգամ, կարծես ռոճիկ ստանալու համար:

## 26 սեպտեմբերի

Ամսիս 22-ին, 23-ին վերջնականապես մաքրվեց Աքսիբաբայի ձորը՝ ներս խուժած ռուս-թաթարական հորդաներից:

Գնդապետ Խաչատրյանը, որին հանձնված է Ղազախի ամբողջ զծի պաշտպանությունը, իր զորամասով հարձակման էր անցել եւ թշնամու համար մեծ կորուստներով ետ քշել Նրանց:

Խաչատրյանը, միանգամայն վերականգնելով մեր սահմանի նախկին դրությունը, նույնիսկ գրավել էր Աղրբեջանին պատկանող Սաթըլմըդ սարը, բայց օգոստոսի 10-ի համաձայնագիրը խախտած չլինելու համար դարձյալ ետ էր քաշվել մեր սահմանը: Այժմ մեր դրությունը ավելի քան կայուն է: Այդ կռվում մենք ունեցել ենք երկու սպանված, մի քանի վիրավորներ եւ գերի ենք տվել: Թշնամու կորուստը համեմատաբար ավելի մեծ է: Երեկ իշեւանից պաշտոնապես հաղորդվեց, որ ռուսները իրենց թնդանոթներով քաշվում են Ղազախ: Մի քանի ստույգ տեղերից եկած լուրերը հաստատում են այդ:

Օլթիի ուղղությամբ առաջին անգամ՝ ամսի 18-ին մենք անհաջողություն ունեցանք, թշնամին հարձակման անցնելով գերազանց ուժերով ստիպել է մերոնց մինչեւ տասը վերստ ետ նահանջել: Գըլխավոր շտաբի պաշտոնական հաղորդագրությունը ավելի մանրա-

մասնություններ չի տալիս: Մեր գորամասերի խմբավորում է կատարվում:

Այսօր ծածկագիր հեռագրով Գլխավոր շտաբը հաղորդում է, որ սեպտեմբերի 25-ին Սարիղամիշի մեր գորամասը հարձակվել է Բարդուսի լեռը ոիրք բռնած թշնամու վրա եւ քշել է նրան մի քանի կարեւոր կետեր գրավելով, բայց հետո ես է նահանջել, որովհետեւ թշնամու պահեստի օգնական մասը շուտ է վրա հասել: Մենք ունեցել ենք 8 սպանված եւ 23 վիրավոր, իսկ թշնամին 300 դիակ է թողել կրվի դաշտում, մի բան, որ ես չեմ հավատում: 300 սպանված տվող կողմը մի 900 էլ վիրավոր տված կլինի, որ հավանական չէ:

Օլթիի ուղղությամբ մեր կազմակերպված եւ թարմ ուժերը նոր միայն սկսել են շոշափման մեջ մտել թուրքերի հետ: Նույն ճակատի առաջին պարտության մանրամասնությունները այժմ հայտնի են, թեեւ շտաբը չի հաղորդում: Սկզբում կտրելով մեր նահանջի ճանապարհը եւ կենտրոնից հարձակման դիմելով՝ թշնամուն հաջողվել է վերցնել մեզնից 6 խցանավոր թնդանոթ, մի թեթև ավտոմոբիլ եւ այլ ավար, այդ կռվում մենք տվել ենք մոտ 60 սպանված ու վիրավոր, որոնց թվում 3 երկրաշափ սպանված եւ անհայտ կորած:

Մեր այս պարտության գլխավոր պատճառը թույլ հսկողությունն է եղել եւ անփութությունը:

Հո չի կարելի հակառակորդին այդքան էլ արհամարհել եւ անհոգ նստել: Վերջապես Տաճկաստանը, որին մենք իիմա սկի հաշվի չենք առնում, այնուամենայնիվ ունի կանոնավոր գորք, նրանք 10 տարի է, որ կոհիվների մեջ են եւ կոփված են:

Այս անգամ Օլթիի գրավումը անխուսափելի պետք է լինի, այլապես թշնամին շփացած կամրանա այդտեղ եւ ձմեռը մեզ հանգիստ չի տա: Մի փառավոր ջարդ, եւ թշնամին կկորցնի իր ռազմընդունակությունը եւ մեզ հնարավորություն կստեղծի ձմեռը հանգստանալու, կազմակերպվելու եւ գարնանը առաջ խաղալու երկրի ներսը:

Մեր գլխավոր եւ ամենավտանգավոր թշնամու՝ ռուսի գլուխը խառնված է ներքին եւ արտաքին ճակատներով, այդ կողմից ապահով ենք: Մնում է մեր դարավոր թշնամին՝ Տաճկաստանը, նրա հետ այժմ մենք կարող ենք մեր պատմական խճճված հաշիվները տեսնել:

Մեպուից դեռ չի վերադարձել, եւ մեր դրությունը անորոշ է:

Դիլիջան-Ղարաքիլիսա գորամասերի շտաբի պետի պաշտոնակատարը Ներկայումս Մուշեղ Թամրազյանն է, ես էլ գրագրի պաշտոնվ եմ նույն շտաբում: Փաստորեն այս շրջանի հրամանատարը դեռ Սեպուհն է, թեեւ գործերը ժամանակավորապես վարում է գեներալ Խանկալամյանը: Ամիրյանը պիտի գար, բայց մինչեւ այսօր նրանից ոչ մի տեղեկություն չկա: Շտաբի բոլոր գործերը ծանրացել են Թամրազյանի եւ Օհաննեսյանի վրա: Մեր շտաբում աշխատող փոխտեղակալ Թոթոլյանը եւ Ավետիսյանը, որոնք ուզում էին այստեղից պոկ գալ Երեւան տեղափոխվելու համար, հակառակ նրանց կամքին ուղարկվեցին Աքսիբաբայի գլխապետ Խաչատրյանի տրամադրության տակ: Շտաբի նախկին պետ փոխզնդապետ Պալյանը վերջնապես տեղափոխվում է Երեւան պաշտոնավարելու:

Շտաբի պետի պաշտոնը ստանձնելով՝ վարատար Թամրազյանի առաջին գործն եղավ պաշտոններից արձակել մեզ մոտ աշխատող երկու վարձու օրիորդներին, որոնք իսկապես վարձ էին ստանում, օգտվում էին զինվորական մթերքներից, բայց գործ չէին կատարում: Գրագրի պաշտոններից 7-րդ գնդի շարքերն ուղարկվեցին նաեւ երկու ուրիշ երիտասարդ գրագիրներ, որոնք սիլիբիլի անելուց զատ չէին աշխատում: Երկուսն էլ տաճկահայեր էին, մեկը՝ վանեցի, մյուսը՝ իզմիրցի: Նրանք դժգոհությամբ հեռացան, բայց հրամանը հրաման էր եւ պիտի կատարվեր: Մտավորական Երեւակայելով՝ նրանք կարծում էին, որ զինվորական ծառայությունը հանար բան է:

Եվ վերջապես դժգոհելու ինչ բան կա, շարքերում մարդս ավելի օգտակար կարող է լինել իր հայրենիքին, քան սեղանի շուրջ նըստած՝ այս կամ այն հրահանգը, բավարարագիրը կամ հրամանը արձանագրելով: Զարմանալի բան, շարքերը մտնել ցանկացողներին չեն ուղարկում, իսկ դժգոհներին հատկապես ուղարկում են, կարծես դրանով ուզում են ասել, որ զինվորական ծառայության մեջ մարդ իր գլխի տերը չէ: Ահա թե ինչ ասել է զինվորական ծառայություն:

## 29 սեպտեմբերի

Ամսի 28-ին, զիշերը թուրքերը հարձակման անցան Սարիղամիշի մեր գորամասի աջ թեւի վրա եւ համարյա միաժամանակ Փենակից Շիրոք լեռան վրա, որը ընկնում էր Կոստրից 10 վերստ հարավ-ա-

բեթելը եւ Բարդուսից Զիարեթ եւ Չեմբարտաղ սարի վրա: Առավոտյան թուրքերին հաջողվեց Նեղելով մեր զորամասերը զրավել այդ կետերը: Սարիղամիշի զորամասի աջ թեւը ետ է քաշվում դեպի Վերիշան գյուղը եւ Չումուրլու սարը, որը Սարիղամիշից 5 վերստ դեպի արեւմուտք է ընկնում: Նույն օրը առավոտյան թուրքերը մեծ ուժով՝ թնդանոթներով ու սավառնակներով, կռվով զրավել են Կարառուրգան սահմանորոշ գյուղը:

Սարիղամիշի զորամասի ձախ թեւը ստիպված նահանջել է դեպի Սաղանլուխի լեռնաշղթան: Ղարաղուրտի ուղղությամբ նկատվել են թշնամու հետախուզական ուժեղ խմբեր: Տաճիկների կողմից հարձակվում են 9-րդ եւ 12-րդ տաճկական դիվիզիաները:

Մի ուրիշ հեռագրում, որ Սպարապետից է, նախազգուշացնում է Դիլիջան-Ղարաքիլիսայի զորամասի պետին, որ սա լուրջ հսկողություն կատարի, որ կարմիրները նույնպես հարձակման չանցնեն:

Այսօրվա մի երկրորդ հաղորդագրությունը ասում է, որ Սարիղամիշի մեր զորամասը Նովո-Սելիմ գյուղի մոտ չունենալով հարմար ուիրքեր, ետ քաշվեց Կոշավա-Պուսքար սարը, Ազիարա, Վերին եւ Ներքին Բոթանլիի եւ Բեռնա: Թշնամին գտնվում է Սուլո-Դաշկայա, Բազարտան-Բեցիտ, Կարախստամազ: Մերտենեկի զորամասի առաջապահը ետ է քաշվում դեպի Բեզլի Ահմեդ գյուղը: Կաղզվանի զորամասը 18 ժամին Պիսլինա կայարանից դուրս կգա Բեզլի-Ահմեդ, արդ զորասյան շարժումը խանգարվում է զաղթականների մեծ հոսանքի պատճառով:

Փիլոսի, Մուրադ-Խանի եւ Աբգարի ձիավոր կամավոր խմբերը փախել, ցրվել են:

Մի ուրիշ հեռագրում Սպարապետը շտապ կերպով պահանջում է 7-րդ ամբողջ գունդը, որ ներկայումս ճակատ է բռնել Շամշադինում բոլշեվիկների դեմ եւ այդպիսով միայն 6-րդ կանոնավոր գունդն է մնում այս ճակատը, որին պիտի լրացնեն նոր զորահավաքով:

Կարառուրգանի, Սարիղամիշի, Կաղզվանի ռազմաճակատները թողնելուց հետո թուրքերը արագ կերպով մոտեցել են Ղարսի դռներին, 1918 թվի պատմությունը մինչեւ այստեղ նույնությամբ կրկնվել է, բայց սրանից հետո Հայաստանի Հանրապետական Բանակը զորվ պիտի շուրջ տա պատմության անիվը ի փառս ազատության եւ անկախության:

Մազաշափի անգամ շեմ կասկածում, որ Հայաստանը իր Վճռա-

կան եւ վերջնական հարվածը պիտի տա մեր դարավոր ոխերիս թշնամուն՝ հակահեղափոխական Տաճկաստանին: Ես մարգարե չեմ, բայց այդպես պիտի լինի, որովհետ եւ ուրիշ կերպ չի կարող լինել, եթե անզամ Ամենակարողը այլ կերպ ցանկանա:

Մեր նախարարական խորհրդի այսօրվա նիստը որոշել է ամբողջ Հայաստանը հայտարարել պատերազմական դրության մեջ եւ անխըտիր գորահավաքի ենթարկել 20-ից մինչեւ 35 տարեկանները: Այս ցույց է տալիս, որ Վտանգը այնքան էլ սպառնալից չէ, որովհետեւ հայ ժողովուրդը ընդունակ է ծերերին ու պառավներին, ծծկեր երեխաներին եւ կանանց գենքի տակ կանչել հակառակ դեպքում: Երեկ մեր հրամանատար Սեպուհից հեռագիր ստացանք, որ գորական նախարարի կողմից շտապ կանչված է Երեւան, թեւ 39 աստիճան տաքության մեջ է եղել, բայց անսալով նախարարին, մեկնել է մայրաքաղաք: Արդեն պարզվեց, որ մեր Բրիգադան էլի մնալու է իգդիր: Երեւի հրամանատարը շուտով ինձ ու Մուշեղին էլ է կանչելու: Երեկ մոռացա արձանագրել, որ այս գծով Ղարսի ճակատը մեկնեցին մեր լավագույն զինվորական պետերը՝ գորավար Սիլիկյան, զնդապետ Վեքիլյան, զնդապետ Շահմազյան, Նրանց հետ էին նաեւ մշեցի Սմբատ եւ Արտուշ-խան, որոնք լավ պարտիզաններ են համարվում: Ինչ ուզում է լինի, մեր կամավոր զնդերը խուճապ զցողներ եւ առաջին փախչողներ են, ափսոս այն փողին, որ նրանց վրա ծախսվում է: Այսօր անցավ, վաղը տեսնենք ինչ կբերի Հայաստանին:

### 30 սեպտեմբերի

Երեկվա ու այսօրվա սպայակույտի պաշտոնական հաղորդագրությունները նույնն են, մենք ոիրք ենք բռնել Բեկի-Ահմեդը, որ մեր երկրի բերդաքաղաքից ընդամենը 15 վերստի վրա է (Երեք ժամվա հեռավորություն): Կարճ ասած, մեր դարավոր թշնամին ծեծում է Ղարսի դուռը, բայց նրա անարգ բռունցքի հարվածները պիտի շախախսվեն մեր բերդաքաղաքի պողպատե դարպասի մոտ, ուր արդեն հսկում է Հայկական Հանրապետության փոքրաթիվ, բայց քաջարի Բանակը:

1920 թվականը հայկական Բանակի ըննության թվականն է. այս թվին մենք շարդեցինք աղբբեցանական 40.000-նոց բանակը եւ ետ շպրտեցինք Զանգեզուր Ղարաբաղի ճակատներից, նույն թվի

մայիսին ներքին դավադիր ապստամբությունը, որ բռնկվեց ողջ Հայաստանում՝ իր բնի մեջ խեղովեց, ապա մենք ՂազախՇամշադինի ճակատում ամոթալի պարտության մատնեցինք ռուս-հայ-թաթար երկու համառ եւ չորս թույլ գրոհները, որոնց միակ նպատակն էր ընկըճել Հայաստանը եւ հայ ժողովրդի դիակի վրայով ձեռք մեկնել Մուստաֆա Քեմալ փաշային, եւ այս նույն թվին մենք թուրքերից մաքրեցինք Զանգիբասարը, Վեդին, Շարուրի ամբողջ զավառը եւ Ղարա-Ղայլեի ձորը, որոնք մեկ-մեկ պալարներ էին մեր մանուկ Հանրապետության, այս բոլորից հետո մենք գրավեցինք Փենեակի ածխահանքերը, Կողբի աղահանքը, որոնք կենսական նշանակություն ունեն մեզ համար:

Թշնամին օգտվելով այն բանից, որ մեր ճակատները ընդարձակվել են 5անգամ ավելի շատ, քան առաջ էր եւ այն հանգամանքից, որ մեր փոքրաթիվ Բանակը ցրված է այս ու այն կողմ, դրան ավելացրած եւ այն, որ նավթ ու քարյուղ չլինելու պատճառով մեր հաղորդակցությունը բոլորովին կանգ է առել՝ նա կարճ ժամանակամիջոցում խոշոր ուժեր է կենտրոնացրել Ղարսի ուղղությամբ, որ մեզ մահացու հարված հասցնի, բայց այդ նրան բնակ չի հաջողվի, որովհետեւ հայ ժողովուրդը երբեք տրամադիր չէ մեռնելու եւ այն էլու՞մ ձեռքով՝ թուրքի, մի ժողովուրդ, որը իր մահվան զալարումների մեջ է, մի պետություն, որից ոչինչ չի մնացել փաստորեն:

Չէ, մենք պիտի հաղթենք թշնամուն Ղարսի պատերի տակ ինչ զնով էլ որ լինի: Հայ երկիրը ոտքի է կանգնած, նա այժմ ներկայացնում է մի ընդարձակ ռազմաճակատ, ուր մարդ թե կին, ծեր թե մանուկ, զիտուն թե տգետ, շինական ու քաղաքացի, որպես մի մարդ ոտքի են ելել կամ մեռնելու եւ կամ ապրելու՝ վերջնականապես մեռցնելու այն զազանին, որ իր հոգեւարքի մեջ ուզում է մեզ էլ իր հետ տանել, որովհետեւ նա՝ մեր թշնամին, անզամ իր սատկած վիճակում էլ մեզանից չի ուզում պոկ զալ:

Երկորի ծանր կացությունը գիտակցելով՝ մեր նախարարները ըստ իրենց սեպտեմբերի 27-ի նիստում կայացած որոշման, ցրվեցին երկրի զանազան մասերը: Նրանցից մի քանիսը վաղը այս գծով պիտի մեկնեն իրենց նշանակված վայրերը:

## 1 հոկտեմբերի

Այսօր առավոտյան տեղս ժամանեց Ելեմտից նախարար Աքրահամ Գյուլխանդանյանը, ճանապարհների Եւ հաղորդակցության նախարար Զամալյանը, երկրագործության նախարար Վրացյանը Եւ խնամատարության նախարար Բաբալյանը, նաեւ լուսավորության նախարար Գ. Ղազարյանը: Առաջինը մնում է Շիլիցանում, որին ենթարկվում են զինվորական, քաղաքացիական մյուս բոլոր իշխանությունները, մեկ խոսքով նա կատարյալ դիկտատոր է, նույն բարձրագույն լիազորություններով Զամալյանն ու Ղազարյանը մնալու են Ալեքպոյ, իսկ Վրացյանն ու Բաբալյանն՝ Ղարս:

Նախարար Գյուլխանդանյանը այսօր երեկոյան տեղական Դաշնակցական ընկերների ընդհանուր ժողովում գեկուցեց ներկա մոմենտի մասին, որի ընթացքում ասաց, որ կառավարությունը որոշել է Ղարսը պահել այնքան ժամանակ, քանի դեռ այդ ճակատը պաշտպանող զորամասի 3/4-րդ մասը չի ջարդվել, բացի այդ Ղարսի ռազմաճակատը մեկնող բարձրաստիճան զորականներից սկսած մինչեւ հետին սպան անձնական պատասխանատվություն են կրում, եթե առանց հրահանգի իրեն հանձնված ճակատը կամ դիրքը թողնի, եթե անզամ իմանա, որ անկարելի է պահել: Ուրիշ խոսքով, նահանջել բառը իսպառ վերացված է մեշտեղից, եթե այդ հարմար չի գտնում ընդհանուր հրամանատարությունը:

Որովհետեւ համայն Հայաստանը գտնվում է զինվորական դրության մեջ՝ բոլոր հանցավորները հանձնվելու են զինվորական-դաշտային դատարան:

## 2 հոկտեմբերի

Ղարսի ուղղությամբ առայժմ խաղաղ է, բացի տեղական բնույթ կրող առաջապահների թեթեւ ընդհարումներից:

Մենք դեռ Ղարսում ուժեր ենք կենտրոնացնում ընդհանուր հարձակման անցնելու համար: Թշնամին ձգտում է պաշարել մեր թեւրը, բայց անօգուտ:

Թուրքերից նախաձեռնությունը կորզելու համար՝ մերոնք այսօր հարձակման են անցել Եւ նրանց հաջողվել է վերագրավել մոլոկանի Նովո-Սելիմ գյուղը, բայց ռազմագիտական նկատառումներով ելի

թողել են այն թշնամուց ճնշվելու: Շատ հասկանալի է, որ մեր իրամանատարությունը այդպիսով խաղեր է սարքում թշնամուն համոզելու, որ մենք անկարող ենք լուրջ գործողություններ սկսելու, եթե մեզ հաջողվեց այդպիսով թշնամուն կուրացնել, նրա ուժերը կենտրոնացնել Ղարսի տակ եւ ապա ընդհանուր հարձակման անցնելով, վերջապես ջախչախել թշնամու կենդանի ուժը, որից հետո նա ուշի չի գա մինչեւ առաջիկա գարուն:

### 3 ԻՆԿՈՄԲԵՐԻ

Դիլիջանի կառավարության լիազոր նախարար Գյուլխանդանյանը նախարարապետ Օհանջանյանից մի հեռագիր ստացավ, որով վարչապետը հայտնում է, որ Ղարսում մեր դրությունը ամուր է, կտրուկ միջոցներ են ձեռք առնված շուտով լիկվիդացիայի ենթարկելու տաճկական ավանտյուրան: Հայաստանի շորս ծայրերից կամավորներ են գնում դեպի Ալեքպոյ ու Ղարս:

Կամանդարմը մեզ հայտնում է, որ մեր պատժից զորամասի շտաբը, որ ցարդ գոյություն ուներ եւ ղեկավարում էր Դիլիջանի ռազմաճակատի ամբողջ գործերը՝ անմիջապես հանձննենք զորավար Խանկալամյանին եւ մենք շտապենք մեկնել մեր զորամասերը: Սրա պատճենը հաղորդված է Սեպուհին Ալեքպոյ: Տեսնենք իրամանատար ինչ կարգադրություն կանի իմ եւ Մուշեղի նկատմամբ: Ինչպես երեւում է, մեզ կանչելու է իր մոտ կամ Ղարս կամ Ալեքպոյ, բայց որքան ուրախ պիտի լինենք Ղարս գնալով:

Համազասպի զորամասից մի ծածկագիր ստացանք, որով հաղորդվում է ի գիտություն, որ Բասարգեշարում թշնամու հետախուզական խմբեր են երեւացել, մեր հետախույզները պատահելով նրանց, կռվի են բռնվել եւ քշել նրանց, որոնք թողել են մի հուսարական գըլխարկ, որով պարզվում է, որ նրանք ռուսներ են եղել: Ինչպես երևում է, Աղրբեցանից մեզ խփելու մտադրություններ կան: Այդ հեռագրի հիման վրա զորավար Խանկալամյանը իրամայեց Ղազախ-Շամշադինի մեր երեք զորամասերի պետերին իշեւան՝ փոխզնդապետ Խաչատրյանին, Թաուգ-Կալա՝ գնդապետ Մանեւին եւ Միխայլովկա փոխզնդապետ Ահարոնյանին, որ սրանք զգոն լինեն եւ հըկողությունը ուժեղացնեն:

Ղարաքիլիսայից եկողները պատմում են, որ Թիֆլիսից 800 կա-

մավորներ են եկել: Նրանք եկել են մինչեւ Սանահին վրացական երկաթուղագծով, իսկ այստեղից՝ ոտքով: Նավթ ու մազութ շունենալու պատճառով, մեր երկաթուղագիծը համայն Հայաստանում այս քանի շաբաթ է, որ իսպառ կանգնել է: Այս է, որ մեր մեջքը ջարդում է: Եթե մեր երկաթուղին բաներ, մենք ոչ մի թիզ հող չեինք զիջի թուրքերին: Սա էլ հաղորդակցության նախարարի անհեռատեսության արդյունքն է: Նեղ օրվա համար մեր երկիրը միշտ պետք է անձեռնմխելի պաշար ունենա զորաշարժի համար, բայց այդ չի արված: Այսպես էլ անտերություն կլինի՞... Ինձ մնար, ես Զամալյանին առաջին հերթին ռազմադաշտային դատարանի կիանձնեի:

Կարմիր տեռոր ու դիկտատուրա, ահա միակ միջոցը, որով մեզ պիտի հաջողվի մի անզամ եւս ջարդելու մեր երկու դարավոր թշնամիներ թուրքին եւ ռսին, իսկ ներքին թշնամուն շնչել անզամ թույլ չպետք է տալ:

Մահ, անխնա մահ, մեր ներքին ցածրհոգի թշնամիներին... Բարեբախտությունն այն է, որ բոլշեվիկ Ռուսաստանին լեհերն ու Վրանգելը ջարդում են, այլապես մենք բոլորովին պիտի կորչենք:

Եթե հույները ներկայումս նույնն անեին քեմալիստների նկատմամբ, մենք լավ դաս կտայինք թուրքերին: Մի ուրիշ ուրախացուցիչ պարագա էլ այն է, որ ներկայումս ոչ-ոքի վրա հույս շունենք դրած, մեր հույսը մենք ենք, դրա համար էլ պիտի հաղթենք անպատճառ:

Մեր այս ճգնաժամի պահին, Ադրբեյջանի թուրք-թաթարները, որոնց քշել ենք մեր երկրից դեռ մայիս ամսին, իսպառ հիմարացել են. Նրանք համախոսականով խնդրում են մեր կառավարությանը, որ սա նրանց ընդունի որպես հպատակներ եւ թույլ տա ապրելու Աքսիբաբայի ձորում: Նրանք խոստանում են կատարել իրենց քաղաքացիական ամեն տեսակ պարտականությունները: Սակայն ո՞վ է նրանց թույլ տվողը: Մենք լավ զիտենք, թե սրանք ինչպիսի քաղաքացի կարող են լինել մեր հանրապետությանը: Նրանց համար այս անհանդուրժելի զիջողությունը երկու տեսակետից կարելի է մեկնաբանել. կամ այն Է՞նրանք տանել չեն կարող բոլշեվիկյան կարգերը, կամ թէ ուզում են նորից մեր տակը փորել:

Բայց դառն փաստերը գալիս են ապացուցելու, որ ավելի շատ առաջինն է այդ խոր պատճառը:

Այդպես լինելով հանդերձ՝ մենք նրանց ոչ լավն ենք ուզում, ոչ

էլ վատը. թող մեզ հանգիստ թողնեն եւ թույլ տան, որ մենք մեզ համար եւ իրենք իրենց համար ապրեն: Սա է ուղիղ եւ միջին ճանապարհը:

#### 4 հոկտեմբերի

Իգդիրի շրջանում թուրքերն ու քրդերը զլուխ են բարձրացրել, նրանք նույնիսկ հարձակման են դիմել այսօր, բայց ետ են մղվել մերոնց կողմից: Այնտեղ հիմա գործում է Դրոն, այն մարդը, որն անցյալ տարի 25 ձիավորներով իգդիրից դուրս քշեց 500-ից ավելի քուրդ խուժանին, որոնք ուզում էին կտրել մեր զորքի ճամփան եւ տիրել նրանց:

Դրոն իր հայրենիքումն է եւ այնտեղի յուրաքանչյուր քարն ու թուփ նրան քաշածանոթ է:

Հիմա մեզ հարկավոր է 10.000-անոց տաճկահայ մի թարմ բանակ Ամերիկայից, Բալկաններից եւ այլ զաղութերից եւ Տաճկահայատանը այս անզամ կզրավենք: Նրանց ափ հանեինք Տրապիզոնից եւ կտրեինք Քեմալի թափթափուկ բանակի մսացորդների նահանջի ճամփան եւ լախտի վերջին հարված իշեցնեինք թուրքիայի զլխին:

Այս բանը անհնար չէ, բայց չգիտեմ ինչ են մտածում արտասահմանյան մեր պատվիրակությունն ու հազար ու մի հայանպաստ կոմիտեները, որոնք մեզ աջակցում են միայն բարեմաղթություններով ու հազար ու մի դատարկ, խրախուսիչ խոսքերով: Մեզ շոշափելի աջակցություն է հարկավոր, կենդանի ուժ: Միթե՝ այսքան տարրական բան չեն ուզում հասկանալ այդ հաստագլուխները, որոնք ահա երկու տարի է շփում ունեն Եվրոպայի լայիրշ, պոռնիկ քաղաքագետների հետ: Այսօրվա ստացված պաշտոնական զորաշարժականն ասում է, որ Սարիղամիշի ուղղությամբ մեր հետախույզների եւ զրահապատի հետախուզությունը շարունակվում է: Մեր սավառնակները հաջող ռումբ են զցել Եոլ-Քեղմազ գյուղի վրա: Մերտենեկի ուղղությամբ թուրքերը փորձում են Զարուշատի մահմեդականությանը կազմակերպել՝ մեր դեմ գործելու նպատակով: Սուրմալուի զորամասը հոկտեմբերի 3-ին, կեսօրից հետո հակահարձակման անցնելով՝ քրդերին Բսալֆալու գյուղից դուրս շպրտեց: Քրդերի կողմից գրոհում էին 600 ձիավոր եւ հետեւակ 6 զնդացիրներով: Հոկտեմբերի 4-ին քըրդերը հարձակում գործեցին Սոքուտլու, Փիրսաղ եւ Ազարակ գյուղերի վրա ու նեղել են մերոնց: Կրիվները շարունակվում են: Այսօր

Երեկոյան հեռագիրը լուր բերեց, որ ընկել է Կողբը, որով աղահանքերը Նորից ընկան քրդերի ձեռքը:

## 6 Իոկտեմբերի

Հրամանատար Սեպուիծ Ղարսից հեռագրում է Շիլիցանի զորամասի շտաբի պետ Վարատար Թամրազյանին, որ սա համաձայն ընդհանուր հրամանատար Նազարբեկյանի կարգադրության շտաբը լիկվիդացիայի ենթարկելով հանձնի գեներալ Խանկալամյանին, որը Նորից նշանակվել է Շիլիցան-Ղարաքիլիսա զորամասի հրամանատար: Հեռագրում ասված է, որ շտաբը հանձնելուց անմիջապես հետո պետք է տեղափոխվենք Ղարս:

Երբ Թամրազյանը այս հեռագրի բովանդակությունը հաղորդեց ինձ, ես շատ ուրախացա, որովհետեւ Շիլիցանի անձրեւային եղանակները մի կողմից եւ համարյա անգործությունը մյուս կողմից ձանձրացրել են: Այժմ Ղարսի ճակատը ավելի հետաքրքրական է, որովհետեւ այնտեղ գործ կունենանք մեր դարավոր թշնամու՝ թուրքի հետ, որը իր վերջին թափթափուկ ուժերը հավաքած՝ իր հոգեւարքի վայրկյանին, ուզում է մեզ էլ իր հետ մահվան հանձնել: Այսօր եւեթ պատրաստություններ տեսանք շտաբը հանձնելու: Վաղը, վերջապես, գործերը կստանձնի Խանկալամյանի շտաբը:

Ղարսի վերջին նահանջը սարսափելի տպավորություն է թողել այստեղի հայ ազգաբնակչության վրա. Նրանք վախենում են, որ մեր հանրապետական բանակը չկարողանա կասեցնել այդ մեծ վըտանզը եւ ստեղծվի 1918թ. դրությունը, բայց ես անձնապես համոզված եմ, որ հակառակը տեղի պիտի ունենա:

## 8 Իոկտեմբերի

Շտաբը հանձնեցինք եւ պատրաստվում ենք վաղը մեկնելու, եթե 7-րդ զունդը այս գիշեր Շամշադինից գնա:

## Ղարաքիլիսա, 9 Իոկտեմբերի

Այսօր երեկոյան հասանք Ղարաքիլիսա: Մենք բեռնակիր ավտոմո-

բիլով եկանք, իսկ 7-րդ գունդը մինչեւ հիմա ճանապարհի կեսը ալ-  
տոմորիլով, իսկ մացած կեսը՝ ոտքով:

Ղարաբիլիսան, որպես Հայաստանի նշանավոր կայարան, յան  
տպավորություն պիտի թողներ, սակայն, ցավոք սրտի պետք է ա-  
սել, որ բացասական տպավորությունը այնքան ուժեղ էր, որ դրանով  
կարելի է պարզ պատկերացնել, թե ինչ վիճակի է մեր Երկաթուղին,  
շնորհիվ այն բանի, որ մենք չունենք ոչ նավք եւ ոչ էլ մազութ: Այ-  
սօր գիշերվա 12-ին Ղարաբիլիսա ժամանեց Լեզրանի գնացքը մոտ  
100 հոգի շքախմբով: Գնացքը, որով եկավ սովետական ներկայացու-  
ցիչը, շքեղ էր, որով առաջ ճանապարհորդում էին միմիայն ռուսա-  
կան ցարերը: Գնացքը կանգնելուն պես, հայ զինվորականները  
շրջապատեցին նրան: Գոհացում տալով իրենց հետաքրքրությանը՝  
երկու կանանց հետ գնացքից վար իջավ Լեզրանի անձնական քար-  
տուղար Աշոտ Հովհաննիսյանը, որի հետ խորհրդակցեցինը գնդա-  
պետ Իշխանյանը, Մուշեղ Թամրազյանը եւ Ես: Առաջինը ձեռք տա-  
լով Ա.Հովհաննիսյանին ասաց.

- Ձեր աշակերտին չե՞ք ճանաչում:

- Իմ աշակերտները ռուսադիրներ չեն կրում, պատասխանեց նա,  
այդպիսով կատարելով իր կոմունիստական պարտականությունը:

Այդ խոսքի վրա Ներկաները՝ սպաներ թե զինվոր, չափազանց  
զայրացան եւ ամեն կողմից մի-մի դժգոհության ձայն լսվեց անկապ: Ապա Թամրազյանը բերանը բաց արեց եւ ասաց այն ամենը, ինչ-որ  
կարելի էր եւ հարկավոր ասել սովետական ներկայացուցիչին:

- Դուք կոմունիստներ չեք, այլ թալանչիներ, ավագակներ, դուք  
միայն քանդում եք առանց ստեղծագործելու, ստանում եք անարդար  
կերպով եւ Ձեր իշխանությունը հաստատել եք միլիոնավոր անմեղ  
ժողովրդի արյան ու արցունքի վրա, իսկ Ձեր վերաբերմունքը հան-  
դեպ հայ բազմատանց ժողովրդին՝ բացարձակորեն թշնամական  
է, որովհետեւ համաձայն Ձեր ի լուր աշխարհի հայտարարած սկզբ-  
բունքների՝ մեր ազատատեսչ ժողովուրդը կամենում է ազատ ու  
անկախ ապրել, ուզում է թոթափել թե թուրքի եւ թե ռուսի ստրկական  
լուծը: Դուք պարզապես խաղալիք եք դարձել զանազան Հուսեյնովնե-  
րի ձեռքը, որոնք Ադրբեյջանի բանտերը լցրել են հայ մտավորականնե-  
րով, դրան ի պատասխան հայ կառավարությունը իր հերթին բոլշե-  
վիկ ինտելիգենտներ է բանտարկում: Հայ կառավարությունը առա-  
ջարկեց, որ փոխանակություն լինի, բայց Հուսեյնովը մերժեց ձեր՝

հայ կոմունիստների համաձայնությամբ, Եւ իհարկե, ի՞նչ է կորցնում նա, երկու կողմից ել տուժողը հայ մտավորականն է:

Ապա Իշխանյանը խոսք բացեց Ղարսի ուղղությամբ քեմալիստների շարժման մասին, որոնք ձգտում են Հայաստանով կապ հաստատել բոլշևիկների հետ: Լեզրանի ներկայացուցիչը կմկմալով շժութեց այդ փաստը, որ առիթ տվեց ներկաների զայրույթին:

- Մեր դիակների վրայով միայն կարող եք միանալ քեմալիստներին, ասաց մեկը:

- Ստոր դավաճաններ, - ասաց մի սոսկական գինվոր: - Ի՞նչ ուզում եք արեք, բայց մենք պիտի ապրենք, թող կորչեն Ձեզ պես դավարճանները, - կամաց ձայնով ասաց մի երրորդը, Ե» ունի չուզելով քաղաքավարության սահմանից դուրս գալ:

- Մենք քեմալիստներին կը շենք, իսկ բոլշևիկների քիթ ու բերանը նույնպես պիտի ջարդենք, ինչպես ջարդեցին լեհերը, - ասաց տողերիս գրողը:

Այս խոսքերիս վրա՝ գնացքը շարժվեց Եւ փափկասուն կանայք, որ, ըստ երեւույթին երեւույթին բոլշևիկների հարճերն էին, Աշոտ Հովհաննիսյանին ներս քաշեցին, վախենալով, որ ինքնադատատանի չենթարկվի: Մի քանի րոպեից գնացքը մեկնեց Երեւան, իսկ մենք հրաման ստացանք նստել ապրանքատար Վագոններ, Ալեքպոյ մեկնելու համար:

## Ալեքպոյ, 10-12 հոկտեմբերի

Այս երկերեսանի, այլասերված քաղաքը առաջին անգամ տեսել եմ 1914թվին Եւ շատ վատ տպավորություն եմ ստացել: Այս անգամ տպավորությունը լավ էր նրանով, որ քաղաքը ամբողջապես հայկական է դառել, փողոցների անունները փոխվել են հայկականով, ժողովուրդը ոգեւորված է Եւ բոլորն ել անխտիր մեկնել են ճակատ, Նըրանք տաճիկը տեսել են 1918 թվին Եւ հիմա կարծեմ այնպես իդեալական կարծիքի չեն թուրքերի մասին:

Ղարս-Սարիղամիշ ճակատի գլխավոր շտաբը գեներալ Սիլիկյանի ղեկավարությամբ այստեղ է, որն առայժմ միմիայն զբաղված է նորահավաք զինվորներին դասավորելով, զգեստավորելով Եւ խմբավորումով: Բանի մոտենում ենք Ղարսին, այնքան դրությունը լուրջ ենք գտնում: Ղարսի անկումը մազից է կախված եղել, բայց հրաշքով թե

մի աներեւույթ ուժով փոկված է եղել: Հայաստանի որ քաղաքը որ իշեանում ենք, Ներկայացնում է մի կատարյալ ռազմադաշտ, ամբողջ տղամարդիկ զորահավաքի են Ենթարկված, ամենքը մի նպատակի են գնում՝ կռվել թշնամու դեմ վճռականությամբ, տեսնենք թե հայկական վճռականությունը ինչ աստիճանի ուժեղ է:

## Ղարս, 16 հոկտեմբերի

Վերջապես Ղարսում ենք: Հայաստանի այս հնամյա բերդաքաղաքը դարերի ընթացքում շատ բաներ է տեսել, նա ականատես է եղել թուրքերի, տեսել է ռուսներին: Շնորհիվ հայազգի քաջ զորավարների, ազատվելով հյուսիսի եւ հարավի բռնակալներից, նա, վերջապես երկու տարի է, որ գտել է իր իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին, որին այնպես շուտ չեր մոռացել: Պարզապես պիտի պաշտպանեն այդ քաղաքը հայերը, թե՝ ոչ, այդ ցույց կտա շատ մոտիկ ապազան: Ղարս հասնելով, ես ու Մուշեղը ներկայացանք մեր Բրիգադայի շտաբի պետ Զիլինգարյանին, որը երկար ու հանգամանորեն տեղեկացրեց մեզ իրամանատար Սեպուհի եւ կառավարության միջեւ եղած միջադեպը, որ նորից գալիս է ապացուցելու հայկական վատ-հոգությունը եւ նեղարտությունը:

Բանն այն է, որ երբ Սեպուհը պառկած է լինում Ալեքպոյում, ճիշտ այդ ժամանակ տեղի է ունենում մեր խայտառակ նահանջը Կարառուզանից եւ Կաղզվանից մինչեւ Բեզլի-Ահմեդ, այսինքն Ղարսի պատերի տակ: Այդ նահանջի ժամանակ թե մարդկանց, թե պաշարի ու ռազմամթերքի ահազին կորուստ ենք ունեցել: Կորուստներ, որոնք մեր ներկա տնտեսական քայլայված դրության վրա չեն կարող չանդրադառնալ: Այդ կռիվների թե ականատես զինվորականներն ու ժողովուրդը եւ թե Ղարսի ազգաբնակչությունը այդ նահանջի ամբողջ պատասխանատվությունը առանց մազաշափ տատանվելու վերագրում են զորավարներ Հովսեփյանի եւ Փիրումյանի: Սրանք զբաղված լինելով ներքին դավադրություններով եւ իրենց գրպանները լցնելու անվայել եւ ստոր գործերով՝ անտես են արել ճակատները եւ մեր երկիրը դրել են այսպիսի վտանգի առաջ: Նրանք իրենց խուճապային հոգեբանությամբ անզամ մտածել են Ղարսի պես Բերդաքաղաքը առանց կռվի թողնելու: Իրերի այսպիսի դրության ժամանակ Ղարս է գալիս զորավար Սեպուհը եւ խուճապի առաջն առնում:

Չնայած, որ բերդաքաղաքում պաշտոնական հայտարարություն է տրված լինում, որ ազգաբնակչությունը անմիջապես պարզի քաղաքը, ճանապարհին հանդիպելով Ղարս մեկնող Սեպուհի ավտոմոբիլին, փախչողների մեծագույն մասը կես ճամփից վերադառնում է, վստահ լինելով, որ «քանի Սեպուհը Ղարսում է, քաղաքին ոչ մի վըտանգ չի կարող սպառնալ»:

Զարմանալի է հայ ժողովրդի հոգեբանությունն ու բնագոր, նա չի հավատում հայ Բանակի քիչ թե շատ անուն հանած գորավարներին, սպայությանը եւ նույնիսկ իր զավակներից կազմված Բանակին, բայց լիապես հավատում է Սեպուհի անձնութաց անձնավորությանը:

Հայ ժողովուրդը զինվորականների շարքում անկեղծ, վճռական եւ հայ ժողովրդի օգտին անկաշառ գործող միմիայն տեսնում է Սեպուհին, եւ այդ է պատճառը, որ ամեն ինչ մարմնացել է այդ մեկ մարդու մեջ: Եվ իրավունք ունի, եւ չի սխալվում...

Միջադեպը, որի մասին վերետում հիշատակեցի հետեւյալն է.

Այն օրից, երբ Սեպուհը վերջապես խեղդեց բոլշեվիկների ապրատամբությունը Հայաստանում ընդհանրապես եւ Դիլիջանի շրջանում մասնավորապես, ցանկանում էր տեղափոխվել կամ Ղարաբաղ-Զանգեզուրի կամ Ղարսի ճակատը, որի համար այդ հարցը դրվեց նախարարական խորհրդին, բայց մինչեւ թուրքերի առաջխաղացությունը որոշակի պատասխան չտրվեց: Երբ թուրքերի կողմից սկըսվեց այդ շարժումը, Սեպուհին հատկացրին իր նախկին ռազմաճակատը՝ իգորի ուղղությունը: Հենց որ տաճիկների առաջխաղացությունը սուր կերպարանը ստացավ՝ հարկ տեսնվեց Սեպուհի Բրիգադան ամբողջապես շպրտել Ղարսի ճակատը, որի հետեւ վանքով Բրիգադայի մասերը, որոնք ցրված էին զանազան ճակատներում, ամեն կողմից կենտրոնացրին Ղարս, որտեղից պիտի մեկնեն ռազմաբեմը:

Կառավարությունը կարգադրում է, որ Սեպուհը իր առանձին Բրիգադայով ենթարկվի Ղարսի ճակատի գորահրամանատար Սիլիկյանին, սակայն Սեպուհը մերժում է, պատճառաբանելով, որ առհսարակ ինքը վստահություն չունի մեր գորավարների վրա, որոնց հանձնված է ամբողջ բանակը, հետեւաբար հայ ժողովրդի ճակատագիրը: Բայց ի նկատի ունենալով վայրկյանի լրջությունը եւ Հայրենիքին սպառնացող վտանգը՝ համաձայնվում է միայն մի պայմանով, որ իրեն վստահված Բրիգադան, որ բաժան-բաժան էր եղած, միացվի եւ իրեն տրվի Զարուշատ-Աղբաբայի գծով կտրելու թշնամութիկունը:

Ալեքպոլում Սիլիկյանի հետ տեսակցության պահին Սեպոնց նույն պահանջն է անում, որը հարգվում է առաջինի կողմից: Սիլիկյանը ավելացնում է, որ Սեպուի Բրիգադայի 2-րդ գումարտակով խսկույն մեկնի Զարուշատ-Աղբաբա մինչեւ մյուս մասերի առաքումը: Սեպուի վատահ Սիլիկյանի խոսքին, մի գումարտակով զնում է չորս կողմից շրջապատված հոծ մուսուլմանական ազգաբնակչությամբ շրջանը: Այնտեղ մեզ թշնամի տարրերը աղ ու հացով են դիմավորում հրամանատարին բեկերի ու աղաների զիսավորությամբ եւ հայտնում իրենց հավատարիմ-հպատակությունը մեր կառավարությանը: Ինչպես ասացի, Սեպուի խնդիր էր դրված այդ վտանգավոր գծով անցնելու թշնամու թիկունքը, միայն այն ժամանակ, եթե Բրիգադան լրիվ կերպով կիամախմբվի Զարուշատում: Սիլիկյանը հակառակ իր որոշման եւ տված խոստման՝ հաղորդում է Սեպուի խնդիրը, որ իբր թըշնամին այդ կողմերը ուժեր չունի եւ Սեպուի կարող է այդ խնդիրը կատարել մի գումարտակով եւ Ամբատի կամավոր խմբերով:

Սեպուի, պարզ բան է, չի ընդունում այդ առաջարկությունը եւ պարզաբանում է, որ այդքան ուժով այդպիսի դժվարին եւ պատախանատու ռազմական խնդիր կատարել ավանտյուրա է պարզապես: Ուրիշ ավելի կարեւոր պատճառաբանություններից մեկն էլ այն է լինում, որ ինքը Բրիգադայի հրամանատար է եւ ոչ թե գումարտակի պետ: Ղարս զալով, Սեպուի ուղիղ հեռագրաթելով մի խիստ պատախան է տալիս Սիլիկյանին եւ իր վերաբերմամբ այդ ամենը համարում անձնական հաշիվների մաքրում եւ ինտրիգներ, որոնց շնորհիվ մենք այնքան կորուստներ տվինք եւ հսկայական հողամասեր թողինք թշնամուն, առանց լուրջ դիմադրության:

Իր արդար զայրույթը թափելուց հետո, Սեպուի հրաժարվում է փոքրաթիվ գորամասով կատարելու այդ բարդ առաջադրանքը:

Գեներալ-լեյտենանտ Սիլիկյանը Սեպուի պատախանում է, որ ինքը հրամանատարի հետ ոչ մի անձնական հաշիվ չունի եւ, հետեւաբար այդ բոլոր կարգադրությունները դավադրություններ չեն ուղղված Սեպուի դեմ, այլ լոկ գործի օգտակարությունն է ի նկատի ունեցած: Սիլիկյանը Սեպուի հրաժարման եւ նրա մատնանշած պատճառաբանությունների մասին մանրամասն հաղորդում է կառավարությանը ի գիտություն:

Նախարարապետ Օհանջանյանը, ծանոթանալով իրերի դրությանը, ուղիղ հեռագրաթելով մի կարճ ու կտրուկ հրաման է տալիս Սե-

պուիին, որի բովանդակությունը հետեւյալն է. «Հրամայում եմ անմիջապես կատարել ձեզ վրա դրված պարտականությունը Եւ Ենթարկվել Սիլիկյանին, հակառակ դեպքում դուք պատասխանատու կլինեք կուսակցության Եւ Բյուրոյի առաջ»:

Սեպուիը ուղիղ հեռագրաթելով մի երկար պատճառաբանված բացատրություն է տալիս վարչապետ Օհանջանյանին, որի մեջ նաև երեւան է հանում այս վերջին նահանջի պատճառները Եւ երբեմնի ռուս բանակի հայազգի զորավարների չինովնիկական անփույթ վերաբերմունքը դեպի հայ ժողովուրդն ու հայկական հանրապետությունը Եւ այն թշնամական վերաբերմունքը, որ նրանք առանձնապես տածում են դեպի նախկին հեղափոխական հերոսներն ու ռազմիկները: Սեպուիը իր պատճառաբանված բացատրության վերջում ավելացնում է, որ ինքը ցանկանալով ցանկանում է այս բոլոր հարցերը Բյուրոյի ըննության հանձնել, որի առաջ նա անպայման կարդարանա, որովհետեւ 25 Եւ ավելի տարիների ընթացքում իր ռազմահեղափոխական զործունեությունը եղել է հօգուտ հայ ժողովորդի ազատագրության Եւ նրա բարօրության, իսկ եթե պարզվեց, որ Հայրենիքի այս ծանր օրերին ինքը ամենափոքր չափով անիրավացի է իր պահանջների մեջ Եւ անարդար մեր զորավարներին մեղադրելու մեջ՝ ուրախությամբ կախաղան կբարձրանա, եթե այդ պահանջում է Հայրենիքի շահը: Սեպուիի այս վերջին գրության պատասխանին սպասում էինք բոլորս սրտատրով ու անհամբեր Եւ մեր կառավարությունը կամ վերջնապես պիտի հարգեր Սեպուիի արդար պահանջները Եւ կամ պիտի ընդուներ նրա հրաժարականը, որ մեծ հարված կլիներ ռազմաճակատին, ի վնաս մեզ, ի շահ թըշնամու: Սակայն պատասխանը ուշանում էր:

Սեպուիի Եւ հրամանատարության միջեւ ծագած այս անցուդարձը հայտնի էր ժողովրդին Եւ պետք է խոստովանել, որ անսահման հուզված էր: Տներում, փողոցներում, հավաքատեղիներում զինվորականներ, ժողովուրդ Եւ մտավորականներ խոսում, վիճում Եւ ըննադատում էին մեր հրամանատարությանը, նրա սարքած այս անախործ միջադեպի համար Եւ այն էլ այն ժամանակ, երբ թշնամին կանգնած է մեր բերդաքաղաքի դարպասների մոտ: Ժողովրդի մեջ տրամադրություն կար նույնիսկ ցույցեր սարքելու, վարչապետին բողոքի հեռագիրներ տալու Եւ պահանջելու, որ Սեպուիի պահանջը կատարվի Եւ նա իսկույն ռազմաբեմ ելնի: Սակայն վերջնական պատասխան

չստանալը ժողովրդին ետ էր պահում իր մտադրություններից, որ կարող էր նոր դժբախտության դուռ բանալ մեր առանց այն ել վճառնգված հայրենիքի առաջ:

Ժողովուրդը այնքան վատ էր տրամադրված դեպի զորավարներ Հովսեփյաննու Փիրումյանը, որ երբ վերջինիս ավտոմոբիլը, ճակատից վերադառնալիս, բախվեց հակառակ կողմից արագ եկող բեռնակիր ավտոմոբիլին եւ Փիրումյանը իր ոտքը ջարդեց՝ ժողովուրդը այդ լուրը իրար հաղորդելով ասում էր.

- Մեծ հանցավորները պատժում են, բայց ափսոս ավտոմոբիլներն են փշանում:

Այդ օրերը Սեպուհը թեթեւ հիվանդ էր, երբ ես ներկայացա նրան, նրա առանց այն ել կնճռու ու զայրույթ արտահայտող դեմքը ավելի խոճոր էր բարկությամբ եւ մեր փոքրոցի զորավարների իրար դեմ լարված դավադրություններով:

Նախ ես նրա առողջությունը հարցրի եւ ապա խոսք բացի նախարարների պատասխանի մասին:

- Դեռ պատասխանը չի ստացվել, ասաց իրամանատարը, - բայց պարզ է, որ այսքան ուշանալուց հետո դրական չի լինելու: Իսկ այդ դեպքում ես կանցնեմ Ալեքպո, իրացան կվերցնեմ եւ մտնելով ինքնապաշտպանների խումբը (ինքնապաշտպանների խմբակներ կազմվեցին ամեն քաղաքներում, երբ Հայաստանում ընդհանուր զորակոչ հայտարարվեց: Դրանք զիսավորապես ծերեր էին. հերթով պահակ էին կանգնում փողոցներում եւ կարգ պահպանում) պահակություն կանեմ, որպես զինակոչի շենթարկվող տարեց մի անհատ: Այս խոսքերի վրա այնքան զգացված էի, որ էլ չեի ուզում զանազան հարցեր տալ եւ բացի այդ զգուշանում էի նեղել հիվանդին: Այդ ճընշող լրությունը գուցե երկար տեսեր, եթե նրա զորամասի սպաներից մի քանիսը ներս չմտնեին: Հարմար առիթ համարելով, ես աննկատ դուրս եկա: Այդպիսի անորոշ դրության մեջ մեր իրամանատարությունը իրաման տվեց, որ մեր Բանակը բովադակ ճակատներում դիմի ընդհանուր հարձակման ամսիս 14-ին, որը եւ կատարվեց նույնությամբ: Այդ օրը առաջին անգամ լինելով մեր մոտ 25 հազարանոց Բանակը շոշափման մտավ երկու դիվիզիոնն թուրք կանոնավոր եւ նույնքան խուժան թշնամու հետ եւ նրանց համառ դիմադրությունը կոտրելով՝ 5 վերստ ետ մղեց, բայց որովհետեւ հակառակորդի դիրքերը իշխող էին եւ մեր զորամասերը դեռ կանոնավոր շնմբավորված՝

կանգնեցրին իրենց առաջին առաջխաղացությունը, որից օգտվելով թշնամին հակահարձակման է դիմում եւ մերոնց ետ մղում իրենց դիրքերը եւ որոշ մասերում ավելի խորանում մեր ճակատից ներս:

Այս փոքրիկ անհաջողությունից հետո մերոնք ունենում են 100-ի չափ սպանված եւ վիրավոր:

Դարսում թե զորքի եւ թե ժողովրդի տրամադրությունը ջերմաչափի պես խւկույն իջավ, եւ ժողովրդի մեջ մասնավոր խուճապ սկսվեց:

Այդ կռվից պարզ երեւաց, որ մեր զինվորները չեն կռվում, իսկ հակառակորդը՝ ընդհակառակը: Չկռվելով հանդերձ՝ խմբովին դասալքություն կար, այնպես որ չորս կողմից ինքնապաշտպանության խմբակները, որ մեկ-մեկ պահապան իրեշտակներ էին Բերդաքաղաքի համար մասնավորապես, իսկ Հայաստանում՝ ընդհանրապես, տասնյակներով դասալիքներ էին բերում գիշեր թե ցերեկ:

Մարդ ուղղակի ապշած է մնում. մեր Բանակը իրաշալիորեն հազնված է Անգլիայից նոր ստացված հազուստներով, սպառագինված է լավ, ինչպես եւ պարենավորված: Ապա ինչո՞ւ չեն կռվում, ի՞նչ է պատճառը: Առաջ մենք բոլորս էլ հավատացած էինք, որ եթե տաճկական ճակատում ունենանք մի տաս հազարանոց բանակ, առանց այլեւայլության կզրավենք Տաճկահայաստանը, բայց այժմ կրկնակի է մեր ուժերը եւ թշնամին 15-18 վերստի վրա է, եւ մենք դժվարանում ենք քշել:

Հայը ծայրահեղության խաղալիք է, հավասարակշռված չէ նրա հոգին եւ միօրինակության խորթ. մի փոքրիկ հաղթությունից մեծ հաղթանակներ է ստեղծում եւ աննշան պարտություններից մասսայական խուճապի է ենթարկվում:

Այդ առաջին պատճառն է, երկրորդն այն է, որ հայը շափազանց անձնապաստան լինելով զարմանում է, թե ինչպես կարող է ինքը կռվի գնալ եւ հաղթվել, եւ երբ որ այդպես է պատահում՝ թշնամուն, եթե վերջինս նույնիսկ չնշին ուժ ներկայացնի, պատկերացնում է անհաշիկ եւ այդպիսով քողարկում իր խայտառակ պարտությունը: Մեզ համար մեծ բախտավորություն էր, որ 14-ին թշնամին ընդհանուր հակահարձակման չդիմեց, այլապես կարող էր լուրջ վտանգներ ստեղծվել եւ դրությունը ավելի եւս բարդանալ:

Սեպուհը դեռ սկզբից դեմ էր այդպես շուտափույթ ընդհանուր հարձակման անցնելուն, նրա կարծիքով, ճակատից եթե հարձակվելու լինենք բնավ չենք իաջողի, եւ այդպես էլ եղավ: Նա գտնում

էր, որ մեր ուժեղ հարձակումները պետք է կատարվեն թեթերից, յա-նավանդ ձախից, որտեղ մենք անպատճառ պետք է անցնենք թըշ-նամու թիկունքը եւ այդպիսով ստիպենք նրան թուլացնել կենտրոնը եւ ապա հարվածել նրա կենդանի ուժերին: Սակայն ինչ-ինչ պատ-ճառներով հրամանատարությունը հարմար էր գտել այլ կերպ որո-շելու ընդհանուր հարձակման ծրագիրը:

Ղարս, 18 հոկտեմբերի

Սեպուհին զորամաս տալու անորոշությունը մեզ եւս տարտամ դրության էր մատնել: Շտաբը չի գործում, ամեն բան խառնվել է ի-րար: 14-ի անհաջողության հետեւանքով այսօր Ղարս ժամանեց Հայաստանի Բանակի ընդհանուր հրամանատար Նազարբեկյանը, որը Սիլիկյանի ու նրա շտաբի մի քանի սպաների հետ շրջելու է մեր ամբողջ ճակատը: Նրա ներկայությունը շատ է կարեվոր: Նա հան-րածանոթ է մեր դարավոր թշնամուն, ու որից շարդ են կերել դեռ 1914 թվին:

Նազարբեկյանի հետ եկել էր զորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, որտեղից նա կարեւոր զազտնի նպատակներով մեկ-նել է Թիֆլիս կարճ ժամանակով: Արժանահիշատակ աղբյուրներից տեղեկացա, որ նա վրացիների հետ դաշն կրելու է գնացել:

Երեւանում սովետականների հետ մեր բանակցությունները այն-քան էլ հաջող չեն ընթանում: Նրանք մեզանից տրանզիտ են ուզում Հայաստանի վրայով կապվելու քեմալականների հետ: Նույնը ա-ռաջարկել են վրացիներին, որով մեր եւ նրանց քաղաքական նպա-տակները եւ շահերը զուգադիպում են իրար եւ զինվորական դաշն կրելու գործը հեշտանում է եւ հրամայական պահանց է դառնում:

Եվ իսկապես շատ սխալ արած կլինեն թե մեր եւ թե վրացի ժողո-վը ըստի ճակատագիր կռող քաղաքագետները, եթե իրար մեծ զիցում-ներ չանեն եւ ամեն կերպ չշանան այդ դաշինքը զլուխ բերել:

Էլ ո՞ր օրվան են սպասում: Բոլշեվիկ-իսլամական վտանգը հա-վասարապես սպառնում է երկու հարեւան հանրապետությունների գոյությանն ու անկախությանը:

Նազարբեկյանի Ղարս զալը, մասնավորապես Սեպուհի եւ կա-ռավարության միջեւ ծագած միջադեպը հարթելու տեսակետից մեծ նշանակություն ունի: Նա վերջնականապես լուծելու է այդ անախոր-մությունը: Հավանաբար դրականապես:

Ուրախությամբ եմ արձանագրում, որ հաջող կերպով լուծվել է Սեպուհի գործը: Նա տեսնվել է Նազարբեկյանի հետ եւ ամեն բան բացատրել: Վերջինս Սեպուհի եւ նրա ռազմական տեսակետների հետ լիապես համաձայն է եղել եւ ավելացրել է, որ ինքն էլ է հակառակ եղել այդպես շտապ ընդհանուր հարձակման դիմելու, բայց նախարարների մի քանիսի ստիպմամբ եւ խորհրդով կատարել է այդ ռազմական վիճվածքը:

Սեպուհը նշանակվում է Մերտենեկի գորամասի հրամանատար եւ նրան վստահված է մոտ չորս հազար, որոնցից միայն կեսն է կանոնավոր, իսկ մյուս կեսը կամավոր զինվորներ են Ամբատի ղեկավարությամբ: Այսօր Սեպուհը հրամայեց տեղակալ Ամիրյանին եւ ավագ համհարգ Թամրազյանին պատրաստություններ տեսնել եւ կազմել դաշտային շտաբ, վաղը անհապաղ ռազմաբեմ ելնելու համար:

Գրագրի պաշտոնով էլ ես պիտի գնամ, մի բան որ իմ լիակատար ցանկությունն է:

Ի՞նչ ունեմ, որ պատրաստություն տեսնեմ. Ես եմ ու իմ զինվորական պայուսակը: Ուզած ժամանակ կարող եմ ճանապարհ ընկնել:

## 21 հոկտեմբերի, Պրոխլադնոյե

Հրամանատարի կարգադրությամբ նրա նախկին ձին հատկացվեց ինձ Ռատինովկա գնալու համար: Շաղիկյանի ձիավոր հարյուրակից երկու խոտորջուրցի զինվոր գործով ետ մնացին, որոնց հետ կեսօրից հետո ճամփա պիտի ընկնենք: Անսպասելի կերպով Թամրազյանը հրաժարվում է գնալ եւ այդ բանը պատճառաբանվում է նրանով, որ իրեն լավ ձի չի տրվում: Սակայն պատճառները ուրիշ են: Նա իրեն վիրավորված է զգում, որ հրամանատարը հարկ եղածին չափ կարեւորություն չի տալիս նրան:

Այսօր երեկոյան ժամը չորսին ապահով հասանք Պրոխլադնոյե մոլոկանի գյուղը, որտեղ պիտի հանգստանանք, որպեսզի առավոտ ճամփա ընկնենք եւ առանց ձիերը հոգնեցնելու հասնենք մեր նշանակված տեղը:

Կես ճամփին հրամանատարը եւ դաշտային շտաբի պետ Ամիրյանը հանդիպեցին մեզ, որոնք Ռատինովկա էին գնում:

Եղանակը խոնավ է ու անձրեւային, իսկ մենք հանգստանութեալ մի մոլոկանի պարպված տանը, ուր գետեղված է սանիտարական ճյուղը:

Առայժմ այստեղ միայն երկու ֆելիշերներ կան, որոնք մեզ լավ ընդունեցին, եւ մեր ծախսով փառավոր ընթոիք արինք ու պառկեցինք հատակին փռված խոտերի վրա: Առավոտյան մեկնելու ենք այստեղից:

## 22 Իոկտեմբերի, Ռատինովկա

Հասանք առաջավոր դիրքերը եւ իշեւանեցինք Ռատինովկա մոլոկանի գյուղը, որ թշնամուց 4վերստ հեռավորության վրա է: Մենք հակառակորդից բաժանվում ենք բլուրների կարճ շղթայով: Նրանց դիրքերը իշխող են եւ հարմարավետ: Ինձ հետ երբեք չեր պատահել, որ այսքան մոտ լինեի թշնամուն:

Ամեն բան դեռ նոր է կանոնավորվում. շտաբի համար հարմար շենք դեռ չի ճարվել, հրամանատարը գետեղված է մի փոքրիկ սենյակում, ուր եւ լինում է գրագրություն: Նրա ննջարանին կից մի նեղ սենյակում հաստատված է հեռագրաթելի ապարատը, իսկ մյուս կեսում աղյուսե վառարանի կտրում ապրում է տանտիրուիի պառավ մոլոկանը իր փոքրիկ թոռան հետ: Մեր հեռագրատան ծառայողները ընդիանուր առմամբ խոսում են ռուսերեն, գրությունների մեծ մասը նույն լեզվով է կատարվում եւ օ՝, զարմանք, մոլոկան ընտանիքը նստած այստեղ լսում է ամեն բան, եւ այդ ժամանակ, երբ թշնամին չորս վերստի վրա է, եւ մոլոկան դավադիր տարրը օրեցօր սպասում է նրանց զալուն: Նրանք հրաշալի կերպով կարող են լրտեսել մեր ուժերը եւ լեռներին, ճանապարհին քաջածանոթ լինելով՝ ամեն բան հաղորդել մեր թշնամուն: Սակայն ինչպես երեւում է, դա ժամանակավոր բան է, բայց ինչ էլ որ լինի, այդպես էլ պետք է լիներ թեկուզ մի վայրկյան:

Հրամանատարի զալուց հետո այդ բոլորը կարգադրվեց մի քանի ժամվա մեջ: Մոլոկան համայնքների վերաբերմունքը դեպի մեր Հանրապետությունը ամենուրեք խիստ թշնամական է, բարեբախտաբար ռազմիկ ժողովուրդ չի լինելով, լուրջ վտանգ կամ վախ չեն կարող ազդել մեզ՝ թիկունքի անապահովության տեսակետից:

Մեպուիի այս ճակատի հրամանատար նշանակվելու առթիվ

զինվորների եւ սպաների մեջ եռ ու գեռ, կենդանություն եւ վստահություն է նկատվում: Բոլորի տրամադրությունը բարձր է, եւ ամեն ոք իրեն այլեւս ապահով է զգում:

Նոր տուն բռնագրավվեց՝ երկու մեծ եւ մի փոքր սենյակներից բաղկացած: Վերջինը ծառայում է որպես հրամանատարի կայան եւ ննջարան: Նրան անմիջապես կից սենյակը, որը միաժամանակ ծառայում է շտաբի աշխատողների ննջարան, գետեղված է շտաբի գրասենյակը, իսկ մյուսում գետեղված են հեռախոսները, ուր եւ ապրում են հեռախոսիչները: Հեռախոսի ապարատները գետեղված են փողոցի վրա նայող պատուհանի մոտ, որտեղից փողոցում լսվում էր հաղորդագրությունները: Սակայն հրամանատարի կարգադրությամբ ապարատները հաստատվեցին սենյակի մյուս անկյունը, որտեղից ավելի հարմար է՝ եւ ռազմական գաղտնի կարգադրությունները, եւ հաղորդագրությունները անհասանելի են մնում կողմնակի զինվորականների ու անձերի համար:

Շտաբում ծառայող զինվորականները այսօր գործերը վերջնապես բաժանեցին՝ շտաբի պետ նշանակվեց երբեմնի թուրքական եւ այժմ հայկական զինվորական դասընթացների ուսանող փոխտեղակալ Մկրտիչ Մկրյանը, տնտեսական եւ դատաստանական մասը վերցրեց տեղակալ Գրիգոր Ամիրյանը, իսկ զորաշարժականը մնաց ավագ համհարզ վարատար Մուշեղ Թամրազյանին: Իսկ ավագ գրագրի պաշտոն հանձնվեց շտաբի փորձառու գրագիր Վահան Բիբարյան անունով մի կարճահասակ երիտասարդի, որ ռուսաց բանակումն էլ նույն պաշտոնն էր կատարում: Նա ունի մի բարերդի Նորիկ զինվոր օգնական, իսկ ես միմիայն զբաղված եմ օրագիր գրելով եւ ազատ ժամերին երբեմն էլ գրագրություններ եմ անում, որով գործին շատ մեծ օգտակարություն չեմ բերում:

Ստեփան Շաղիկյանը նույնպես այստեղ է իր ձիավոր հարյուրակով, որի ձիավորների թիվը իշել է մինչեւ 24-ի, բայց դեռ «ձիավոր հարյուրակ» անունը մնացել է այդ խմբի վրա: Նա ամեն կերպ աշխատում է ձիավորների թիվը հասցնել էլի հարյուրի: Տեսնենք այդ կիացողվի նրան, թե՝ ոչ: Մինչեւ օրս մեր զորամասի ճակատում հանգիստ է: Բացի հետախույզների թեթեւ ընդհարումներից, որ սովորական երեւոյթ է դարձել պատերազմի միջոցին:

Մեր Եւթշնամու բռնած դիրքերի Եւ ուժերի դասավորումը հետեւյալ պատկերն է Ներկայացնում:

Թշնամին բռնում է Դեմուր-Կափե գյուղ-Կայնըխ սար-Կորան-Դադ Կսարաբա-Ալթան Բուլաղ գյուղ Եւ Շաքի սար գիծը մինչեւ Կափար-Թեփե սարի ստորոտը: Նրա ուժերն են մոտավորապես կանոնավոր մի հետեւակ գունդ, 500 ձիավոր, 2 թնդանոթ Եւ տեղական անկանոն ուժեր: Մերտենեկի զորամասի պարտականությունն է՝ ապահովել Ղարսի զորամասի աջ թեւը: Մեր Ճախ թեւում՝ Սամավաթ գյուղում գտնվում է մանեւրային պահեստի ուժը, իսկ աջ թեւում՝ Վրացական մասերը Գեղլաբերդ գյուղում: Մեր զորամասի աջ ռազմագիծը պահում է Սմբատի 700 հետեւակ Եւ ձիավոր կամավորական զորասյունը, որի պարտականությունն է բռնել Խաս-Քեռյ գյուղ Ներառյալ Բիշլիք Եւ Մուզալ գյուղերի արեւմտյան բարձունքները: Զախ ռազմագիծը բռնում է ութերորդ գնդի հրամանատար փոխգնդապետ Բաղդասարյանը, որն ունի շորս գումարտակ, 10 գնդացիր, մի ձիավոր խումբ Եւ շորս թնդանոթ: Բաղդասարյանին խնդիր է դրված բռնել 1050.60 բարձրությունից անմիջապես հարավ-արեւելք գտնըվող Եայլա-Ներասքալ 1112.5 բարձրության Կարա-Թառին գյուղը, Չուլլու գյուղ Եւ Ալթան-Բուլաղ գիծը Ներառյալ, Եւ կատարվող անընդհատ հետախուզումներ Դեմուր-Կափեի, Կայնըխ սարի, Կոյքոն Դադի Եւ Կոնդուկսու ու Շաքի գյուղերի ուղղություններով Եւ հարմար առիթին շարդել թշնամուն:

Պահեստի Եւ հանգստացող ուժերը գնդապետ Սըրմաքեշյանի ղեկավարությամբ 4 թնդանոթով Եւ 35 ձիավորով մում է թիկունքը:

## 24 հոկտեմբերի

Այսօր հրամանատարը Երկու քուրդ հետախույզ ուղարկեց թշնամու թիկունքը: Երկուսն էլ տեղացի ծերուկներ Են: Նրանց ընտանիքը պատանդ է մեզ մոտ, որպեսզի նրանց վրա դրված պարտականությունները ճշտությամբ կատարվեն: Նրանց հանձնվեց «Մուսավաթ» կուսակցության կոչերի մի կապոց Եւ թուրքերեն լեզվով գրած մի նամակ քուրդ բեկի, որ այժմ մեր դեմ կռվում է: Հրամանատարը այն միտքն է հայտնում նամակում, որ քուրդ բեկը իր աշիրաթով վերա-

դառնա եւ բնակվի Հայաստան, առանց վախենալու պատժից: Նը-րանք խաղաղ եւ հանգիստ կարող են ապրել ինչպես ապրում եին առաջ, քանի դեռ մոլորության մեջ չեին ընկել:

Վերջերս, ամեն մի զորաշարժական տեղեկությունից հետո, նախազգուշացնում են հրամանատարին, որ նա արթուն եւ զգաստ լինի իր ճակատի վրա եւ թշնամական հարձակման դեպքում արժանի պատասխան տա:

Կատաղի կոհիվներ են տեղի ունենում Սուրմալուի շրջանում: Թշնամին հգդիրի ճակատից ուզում է պատռել մեր շղթան եւ շարժվել Երեւանի վրա: Նրան հաջողվել է գրավել հգդիրի շրջանի համարյա բոլոր զյուղերը: Մերոնք տեղի են տալիս նրա գերազանց ուժերի առաջ: Մեր զորամասերը նույն ճնշման տակ են նաեւ Էջմիածնի, Ղարս-Սարիղամիշ ճակատի եւ Կաղզվանի ուղղության վրա:

## 27 Իոկտեմբերի

Մերտենեկի մեր զորամասը թնդանոթաձգության բռնվեց թշնամու հետ: Այս ճակատում մինչեւ այսօր սովորական հետախուզություններ եւ թեթեւ ընդհարումներ եին: Ամսի 26-ին հգդիրի ճակատում մեր զորասյունը Դրոյի ղեկավարությամբ ետ է գրավել այն բոլոր զյուղերը, որոնք խլված եին թշնամու կողմից 24-ին: Թուրքերը այստեղ կատարյալ պարտություն են կրել: Նրանք այժմ ձգտում են շարժվել Սարդարապատի վրա Ալեքպոյ-Ղարս երկաթուղագիծը ձեռք ձգելու դիտավորությամբ եւ մեր զորքերի կռնակն անցնելու պարզ նկատառումով: Մեր թիկունքն անցնող տաճկական զորամասը ղեկավարում է Խալիլ-Բեյը: Նրանք արդեն բավական առաջանալով գրավել են Ազատ եւ մի շարք ռազմական նշանակություն ունեցող կետերը:

Մեր հրամանատարությունը մեզ շրջապատող թշնամուն Երեւան է հանել այն ժամանակ, երբ վերջինս հասել է Ալեքպոյ տանող Երկաթգծից Երեք շորս վերստի վրա: Հանդուգն թշնամու այդ համարձակ քայլը՝ առաջխաղացությունը կանգնեցնելու համար նրա դեմուղարկվել է պահեստի մի պատկառելի ուժ գնդապետ Մազմանյանի հրամանատարությամբ: Վաղը մեր ուժերը շոշափման մեջ կմտնեն մեր թիկունքը անցնող թշնամու հետ՝ վճռական ջարդ տալով նրան: Հենց հիմա Ղարսից հեռախոսով հայտնեցին մեզ, որ հաղորդակ-

ցությունը Ալեքպոլի հետ խզված է: Զարմանալի բան. մի՞թե թշնամին կարողացել է արդեն կտրել երկաթուղագիծը եւ հեռագրաթելերը: Պարզ երեւում է, որ թշնամին ձգտում է Ղարսի-Ալեքպոլի մեջտեղից կտրել մեր թշնամու<sup>1</sup> հավանական նահանջի ճանապարհը եւ միանալ Զարուշատի եւ Աղբաբայի մուսուլմանության հետ:

## 28 Իոկտեմբերի

Այսօր ցերեկվա ժամը 12-ից սկսած բովանդակ ճակատի վրա կատաղի կռիվներ են: Սամավաթի ուղղությամբ թնդանոթամարտ է, նույնն է եւ մեր ճակատում: Թշնամու շարժումներից պարզվում է, որ նա պատրաստվում է հարձակման դիմելու: Սակայն դեռ որոշ ոչինչ հայտնի չէ, ոչինչ չի կարելի եզրակացնել մինչեւ զորաշարժական տեղեկություն չստանանք: Թնդանոթամարտը դադարեց ցերեկվա ժամը երկուսին, իսկ երեկոյան պաշտոնական հաղորդագրությունը ստացանք 5-ին, որի բովանդակությունը անմիտարական է: Թշնամին մեզ հանել է մեր դիրքերից Սարիղամիշի, Սամավաթի եւ Անիի ուղղություններով ու սպառնում է Ղարսին: Արդեն ծրագրված է կռիվներ մղել բերդաքաղաքի պարիսպների տակ: Գնդապետ Իշխանյանի գունդը Սամավաթից նահանջել է Պրոխլադնոյե գյուղը, որով մեր դրությունը վտանգվում է:

Մեզ նախազգուշացրին նահանջի պատրաստվելու: Ծիշտ պատասխան կտրվի 8-ին. կմատնանշվի մեր նոր դիրքերը, որ պիտի բռնենք: Շտաբում բոլորս էլ ոտքի վրա ենք՝ սպասողական դրության մեջ: Ժամը 8-ը անց է արդեն, բայց Ղարսից կարգադրություն չունենք: Ահա իրամանատարին կանչեցին հեռախոսի մոտ: Հարեւան սենյակից լսվում է կցկտուր, բայց կարեւոր խոսակցություն: Ինչպես երեւում է մի քանի խոսքից, այս գիշեր նահանջելու ենք:

Մազրա կայարանի գրավումը չճշտվեց, թեեւ կարծում էին, որ Ալեքպոլի եւ Ղարսի միջեւ կապը կտրվելու պատճառը այդ էր: Այդ ուղղության վրա կտրված մի քանի հեռագրասյունները վերականգնված են, ինչպես նաեւ շինված է երկաթուղագծի քանդված կամուրջը՝ մեր զրահապատի կողմից: Զրահապատը կապ է պահպանում Ալեքպոլի եւ Ղարսի միջեւ: Դրությունը ճգնաժամային է, բայց բոլորովին անհուսալի չէ:

<sup>1</sup> Հավանաբար, բառն ավելորդ է (Ա.Հ.):

Այս գիշեր նահանջի հրաման տրվեց: Ցուցմունքներ ստացանք նաեւ մեր բռնելիք դիրքերի մասին: Մինչեւ Օգերո հետ պիտի քաշվենք՝ բռնելով նրանից հյուսիս գտնվող բարձունքները: Շտաբը պիտի տեղափոխվի Մալայա Վարանցովկա եւ Զլառուզայից Վարանցովկա ճանապարհների հավասար հեռավորության վրա եւ այստեղից հեշտ է դեկավարել թե կրիվները եւ թե կապ պահպանել, եւ թե մատակարարել զորամասերը պարենով եւ ռազմամթերքով: Սմբատի կամավորական զորամասի պարտականությունն է հսկել Աղբաբա-Զարուշատ տանող ճանապարհները եւ պաշտպանել մեր աջ թեր:

Մեզ համար տիսուր գիշեր է, մեր սրտից արյուն է կաթում, եւ առանց թշնամու կողմից ուժեղ ճնշում լինելու Մերտենեկի զորամասը պարտված է առանց մի գնդակ արձակելու. թողել է իր դիրքերը եւ ետ քաշվել 15 վերստ: Ուղիղ 10 օր է, որ այստեղ եմ, բայց ոչ մի գիշեր այսպես լուսնկա եւ պարզ չէ եղել: Լուսինը հավասարապես լուսավորում է մեր նահանջող բանակի եւ առաջ խաղացող թշնամու ճամփան:

Գյուղում կենդանություն է տիրում: Պահեստները հապճեպորեն դատարկվում են, զինվորները արագորեն շարժվում են այս ու այն կողմ: Կենդանություն է տիրում նաեւ շտաբում. լրաբեր ձիավորներ են գալիս ու գնում կարեւոր հանձնարարություններով: Հրամանատարը իր շտաբի սպաների հետ պատրաստություններ է տեսնում նահանջելու: Փոխզնդապետ Բաղդասարյանի խումբը դեռ առաջավոր դիրքերումն է: Նա իր գնդով ամենից ուշ պիտի թողնի դիրքերը եւ արիերգարդի դերը պիտի կատարի:

Զի չլինելու պատճառով ինձ վիճակվեց կառքով նահանջել մեր զորամասի բժիշկ Ավելյանի հետ, որ բարի, առաքինի, բայց վախեկոտի մեկն է: Մոլոկանները իրճվում են մեր անակնկալ նահանջի առիթով: Հակառակի պես այս գիշեր պարզ է եւ լուսնկա: Գիշերվա ժամը 3-ին հասանք Օգերո կոչված կայանը, որ իր անունը առնում է իր քով գտնվող լճակով:

Այստեղ իրարանցումը ավելի մեծ է, եւ որքան դեպի ետ ենք գալիս, այնքան խուճապը զգալի է եւ ծանր: Մեպուիին իրամայված է նոր դիրքեր բռնել Օգերոյի բարձունքներում, իսկ շտաբը տեղափոխել Տրոցկի: Կեսօրին հասանք Պրոխլադնոյե գյուղը, ուր քաշված են

մեր զորամասերը եւ որտեղ գտնվում է զորավար Հովսեփյանի շտաբը:

Այստեղ է եւ 7-րդ քաջարի գունդը, որ իր համարձակ կռիվներով Սամավաթում համարյա կեսն է մնացել: Գնդապետ Իշխանյանը շատ հոգնած դեմք ուներ: Նա միայն մի քանի խոսք փոխանակեց ինձ հետ եւ ապա շարունակեց իր զործերը: Նա 48 ժամ կոպ-կոպի չեր տվել եւ էլի կարիք չեր զգում քննելու: Մեր կառքով Տրոնկի հասանք, ուր գտանք մեր շտաբը տեղավորված մի մեծ եւ բավական մաքուր տան մեջ (ընդհանրապես մոլոկանները մաքուր են ապրում):

### 30 հոկտեմբերի

Երկու օր է, որ թնդանոթների որոտը մեզ ջղայնացրել է: Ղարսը դիմադրում է: Իրիկվանից մեր բոլոր դաշտային զորքերը կռվով նահանջել են Բերդը: Լուրեր են հասնում, որ թշնամին կտրել է Մազրայի գիծը, որով ոչ միայն պաշարել է Ղարսի մեր զորքը, այլեւ փակել է մեր զորամասի նահանջի ճամփան:

Այսօր ցերեկվա ժամը 12-ին թուրքերը խուժել են բերդաքաղաք: Խուճապը մեծ է եղել եւ շատերը չեն կարողացել փախչել: Բաղաքի առումը հանկարծակի է եղել, որով եւ անհնար է եղել դուրս գալու մեր շտաբների ծառայողներին, ժողովրդի մեծ մասին եւ օ՝, խայտառակություն, այնտեղ են մնացել նաեւ Ղարսի ճակատի ընդհանուր շտաբի պետ գնդապետ Վերիլով, խնամատարության նախարար Բաբալյան, զինվորական նախկին նախարար զորավար Արարատյան եւ զորավար Փիրումյան եւ ուրիշ շատ ու շատ զինվորականներ ու հասարակական գործիչներ: Բոլոր որբանոցները նույնությամբ մնացել են ամերիկյան ծածանվող դրոշակի տակ:

Ծրագրված է այսօր երեկոյան ժամը 8-ին դարձյալ նահանջել: Մեր զորամասին հրամայված է Աղբաբյով անցնել, իսկ գեներալ Հովսեփյանը իր զորամասով պիտի նահանջի խճուղով դեպի Ալեքպոլ:

Ղարսի առման մասին ճիշտ մանրամասնություններ չկան: Եկողները ահաբեկված տալիս են հակասական տեղեկություններ, բայց մի բան պարզ է, որ այդ պոռնիկ բերդաքաղաքը չի կարողացել դիմանալ նույնիսկ մի քանի ժամ:

Մեր կորուստները հսկայական են. ահազին գերիներ են մնացել, առանձնապես տուժել է հինգերորդ գունդը, որի մեծագույն մասը

շարդվել է թշնամու կողմից:

Այս գիշեր ժամը 10-ին հասանք Ղարսաշայի այն կամրջի մոտ, որտեղից Ալեքպոյի խճուղին բաժանվում է Աղբաբա տանող ճամփից: Զինվորները խառնված զաղթողների հոծ բազմությանը, ուզում են փախչել: Բայց չորրորդ Բրիգադայի զինվորա-ոստիկանական առաջապահ վաշտը վարատար Ավետիսյանի ղեկավարությամբ կանգնած է կամուրջի մոտ եւ թույլ չի տալիս, որ ամբոխ դարձած զինվորները փախչեն: Այստեղ կատարվում է զտումն: Զինվորները խումբ-խումբ կանգնած վիճում են մթության մեջ եւ դժգոհ են, որ իրենց ուզում են Աղբաբայով տանել: Բայց իրամայված է այդպես նահանջել եւ այդպես էլ պետք է լինի, որովհետեւ, եթե մի զորասյունը հոծ իսլամի բնակվող Աղբաբայով չանցնի, նրանք կարող են մեր նահանջի ճանապարհները բռնել եւ երկու կրակի մեջ առնել մեր հետնապահ զորամասերը:

Վերջապես, մի քանի ժամ սպասելուց հետո, շարժվեցինք առաջ եւ կես գիշերին ապահով հասանք Օրշանկա մոլոկան մեծ գյուղը, ուր հանգստացանք մենք՝ Ճիավորներս, իսկ աբոզը կանգ չառնելով առաջ շարժվեց: Մոլոկանները, վախենալով թալանվելուց, իրենց ամբողջ անասունները դուրս են բերել դաշտ: ճանապարհին հանդիպած կովերն ու եզներն քշում են մեր զինվորները, որպես մսացու, իսկ պատահած Ճիերը հեծնում են, չնայած, որ Ճիերի առաջին երկու ոտքերը նեղ շղթայով կապված են իրար: Փախչող սրիկա զինվորները, շղթաները բաց անելու գործիք չունենալով, քարերով են կոտրում եւ այնպես բաց անում:

### 31 հոկտեմբերի, Կիզիլ-Չախչախ

Ապահով կերպով հասանք հայկական այս կեղտոտ, դատարկված եւ մռայլ գյուղը, որ երկաթուղագծին մոտ է: Ցերեկով մենք Կարաուրգանի կիրճով անցնելիս, Բաշքադիկլարի կողմից լսվում էր սարսափելի թնդանոթաձգություն եւ գնդացրային ուժեղ կրակ եւ այնքան մոտիկ, որ թվում էր, թե թշնամին կտրել է մեր եւ մյուս զորամասերի նահանջի ճամփան: Նախքան Կարաուրգանի ձորով անցնելը, որտեղից հոսում է Ղարսաշայք, հարկ եղավ Ճիավորներ ուղարկել մեր դիմացի իշխող բլրաշարքը բռնելու: Հետախուզությունը հաջող անցավ, ապա ուղարկվեց հարյուր զինվոր դիրքերը ուժեղացնելու, ո-

րոնց մեջ էի եւ ես: Այստեղ եւ հոգեկան մեծ ապրումներ ունեցա, որ չեմ կարող հիմա գրի առնել: Երբ բարձրացանք մեր 15 ձիավորների կողմից բռնված բլրաշարքերը, ականատես եղանք մեր զրահապատ զնացքի եւ մեր փոքրիկ զորամասի կռվին: Բաշքատիկլար կայարանում թշնամին խոշոր ուժերով ճգնում էր պատռել մերոնց շղթան եւ հարձակվել մեզ վրա, բայց Նրա կատաղի հարձակումները եւ էին մղվում զրահապատի կողմից: Վերջում թշնամուն հաջողվեց գրավել կայարանը, բայց հենց որ զրահապատը հասավ Նրանց, դուրս շըպըրտեց այնտեղից, եւ թշնամին սկսեց նահանջել: Կռիվը տեւեց մինչեւ մութն ընկնելը, երբ Սեպուհի զորամասն ու աբոզը հաջողությամբ դուրս եկան Աղբաբայի դաշտով:

Ցեխի եւ խճուղու անկանոնության պատճառով, թեեւ բավական ռազմամթերք թափեցինք, բայց մարդկային կորուստներ քիչ եղան: Այս գիշեր հրաման ստացվեց զորավար Սիլիկյանից, որ մեր զորամասով անցնենք Փիրվալի, Կիզիլ-Չախչախի ճակատը հանձնելով զորավար Հովսեփյանի պաշտպանության:

Դասալքությունը սարսափելի չափերի է հասնում: Գիշերները զինվորները հարյուրներով են փախչում: Զորքի բարոյական կորովը բավականին ընկած է. զորավարներից սկսած մինչեւ հասարակ զինվորը ոչ միայն դիմադրելու, առաջխաղալու հույս չունեն, այլեւ հավատացած են, որ այլեւս ամեն բան վերջացել է: Բաբելոնյան խառնակություն է տիրում: Մեր բանակը չի կռվում եւ օր առաջ շտապում է տուն հասնել, որպեսզի թշնամուն չպատահի:

## 2 Նոյեմբերի, Փիրվալի

Երեկ երեկոյան հասանք Փիրվալի, որ գտնվում է Ղարսաշայի ափին: Այս գյուղը քանդված է դեռ 1918 թվին, նույն այս թուրքերի ձեռքով: Սակայն երկու տարվա ընթացքում հայ շինականը կարողացել է վերաշինել իր նախկին քանդված օջախը: Գյուղի քառորդ մասըն է միայն բնակված, այն էլ այս անզամ ավերվեց: Բնակչությունը վաղուց փախել է. տներում միայն անտեր կատուներն են ապրում՝ կծկված սառը թոնրի վրա: Առհասարակ հայկական ոչ մի գյուղի չըհանդիպեցինք, որի ժողովուրդը դեռ մնացած լիներ:

Թեեւ կարծում էինք, որ այս տարի մեր ժողովուրդը կարող է դարձյալ սոված մնալ, բայց երեւում է, որ ամեն տուն ունեցել է իր

տարվա պաշարը: Գյուղերում հարյուրավոր փթերով թափված են զարի ու ցորեն: Խեղճերը նույնիսկ չեն վերցրել իրենց անհրաժեշտ իրերը: Թշվառ հայ ժողովուրդ, մինչեւ Ե՞րբ ոտնակոխ պիտի լինես:

Սեպուհը այժմ նշանակված է Ղարսի եւ Ալեքպոլի ընդհանուր ռեգերվի հրամանատար: Երեկ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը իր մի քանի սպաներով եւ ձիավորներով եկել էր Կիզիլ-Չախչախ կայարանը, որտեղից ժամանեց Փիրվալի՝ Սեպուհի մոտ: Նրա հետ եկել էին նաեւ պառամենտի անդամներ Արշակ Հովաննիսյանը եւ Ենոք Միրաքյանը: Զորական նախարարը մի քանի ժամ տեսակցություն ունեցավ Սեպուհի հետ եւ հետաքրքրվեց զորքի բարոյական կորովի եւ ռազմունակության մասին: Հրամանատարը մանրամասն նկարագրեց մեր կովել չցանկացող զորքի բարոյալքման մասին եւ կանգ առավ վերին հրամանատարության եւ սպայության ապիկարության վրա: Նախարարը ընկճված էր եւ քիչ էր խոսում: Հրամանատարի կարճ գեկուցումից ոչինչ լավ բան չէր կարելի եղակացնել: Չմոռանամ հիշատակել, որ Սեպուհը երկու դասալիքի անձամբ գնդակահարեց, որոնցից մեկը մեռավ, իսկ երկրորդը դարձյալ ողջ մնաց շնորհիվ այն բանի, որ երեք անգամ Սեպուհը կրակեց եւ երեք անգամ էլ կրակ չբացվեց մաուզերից:

Երբ մութը ընկավ, նախարարը մեկնեց Ալեքպոլ, վերջին անգամ ասելով. «ոչինչ, ես իույս ունեմ, որ ամեն բան լավ կանցնի, այս բոլորից հետո մի լավ բան պիտի տեսնենք»:

Ինչ ուզում է թող ասի ռազմական նախարարը, դրությունը չափազանց ծանր է եւ անհուսալի: Զորքը եւ ժողովուրդը քարավան կազմած քաշվում են դեպի Երեւան, Սանահին: Չգիտեմ ու՞ր է գընում մեր զորքը, մինչեւ որտեղ. փախչելու տեղ չունի, իսկ թշնամին երես առած առաջանում է:

#### 4 Նոյեմբերի

Այսօր հրաման ստացանք ամբողջ ռեգերվով անցնելու Վարդանլու գյուղը, այսինքն մեր աց թեւը, որտեղից թշնամին ուզում է գրավել Ալեքպոլը եւ շրջապատել մեր զորքը: Երեկոյան ժամը 4-ին դուրս եկանք Փիրվալուից եւ նույն օրը Երեկոյան 6-ին հասանք Ռիվնիս գյուղը, ուր կանգնած էր Հովսեփյանի զորամասը: Հովսեփյանը մի թեթեւ զորք ուներ Կիզիլ-Չախչախի ուղղությամբ. իր շտաբը տեղա-

Վորված էր վագոնում, ուր Սեպուի տեսնվեց նրա հետ։ Ծակատից վատլութեր են հասնում։ Զորքը մութը ընկնելուն պես տասնյակներով թռղնում է իր դիրքերը եւ փախչում Ալեքպոլ։ Եկան եւ Սմբատի ձիավորները ինքնակամ կերպով։

Տեր Աստված, փախչում է եւ ձիավոր, եւ հետեւակ, եւ թնդանոթաձիգ. մեծ, եւ փոքր, բոլորն ալ փախչում են։ Սրիկաներ։

Ուիվնիսում մի փոքր հանգստանալուց հետո շարժվեցինք դեպի Վարդանլու, ուր առաջուց գնացել էր մեր հետեւակ ռեզերվը եւ 4 թնդանոթ։

## 5 Նոյեմբերի

Առավոտյան ժամը 10-ին հասանք Վարդանլու, ուր թշնամին գյուղում չեր՝ հակառակ մեր ենթադրության։ Նա դիրք էր բռնել Ղմլիի ուղղությամբ Աղբաբայի լեռնաշղթան կռնակ ունենալով, մենք դաշտում էինք եւ աննպաստ դիրքերում։ Հրամանատարը գյուղ հասնելով, առաջին գործը եղավ ձիավոր հետախույզներ ուղարկել հակառակորդի ճիշտ դասավորումը, նպատակները եւ շարժումները երեւան հանելու համար։ Մեր այնտեղ ժամանելուց երկու ժամ հետո ուղարկված ձիավոր հետախույզները ճակատից հրացանաձգության բռնվեցին թշնամու հետ եւ ետ փախան անամոթաբար։ Հրամանատարը իսկույն կարգադրեց, որ գյուղում եղած բոլոր ուժերը դուրս գան առաջավոր դիրքերը փոխգնդապետ Բաղդասարյանի գլխավորությամբ, որը եւ կատարվեց։

Ոչ մի տեղ թշնամուն լուրջ դիմադրություն ցույց չտվող եւ հակառակորդի առաջին իսկ գնդակից փախչող հայ զինվորը նորից սկսեց ալեկոծվել եւ ետ նայել, բայց հրամանատար Սեպուի համբավը եւ նրա ներկայությունը նրանց ներշնչում էր դիմադրական ուժ եւ անվախություն։ Զորքը կանգնած էր իր դիրքերում ու սպասում նոր կարգադրության՝ թշնամու հարձակմանը դիմագրավելու։ Մարտկոցը, որ ծածկված էր Վարդանլու գյուղի վեր բլրի ետեւը, նույնպես հրաման ստացավ կազմ ու պատրաստ լինելու։ Սեպուի իր շտաբի սպաներով եւ մի քանի ձիավորներով շտապեց մարտկոցի մոտ, որն արդեն հեռադիտակով հետեւում էր թշնամու շարժումներին։

Այդտեղից պարզ երեւում էր, թե ինչպես թշնամու շորս կանոնավոր գորասյուներ մեկը մյուսի ետեւից առաջանում էին։ Կրիվը ըս-

կըսված էր արդեն, թշնամու կողմից մեր առաջավոր դիրքերի մոտ հանկարծ սկսեց գործել երկու գնդացիր: Սեպուհը հրաման տվեց մարտկոցին մասնակցել կռվին: Կյանքումս առաջին անգամ ականատես եղա, թե ինչպես իինզ վերստ ճակատ կազմող տարածության վրա իրար են խառնված հրացանային, գնդացրային եւ թնդանոթային համազարկերը: Կռվի տաք ժամանակ, ըստ թշնամու սովորության, հանկարծ մոտ երկու հարյուր սուարիներ Ղմլի գյուղի կողմից երեւացին դեպի Ալեքպոյ տանող սարերի լանջին՝ մեր ծայրագույն աջ թեվի վրա: Առանց շփոթվելու եւ հանկարծակի գալու Սեպուհը կարգադրեց իր Բրիգադայի ձիավոր հարյուրակի պետ Ստեփան Շաղիկյանին, որ նա հարյուրակի մնացած 15 ձիավորներով հարձակվի թշնամու վրա եւ զբաղեցնի նրան եւ եթե հնարավոր է ետ շպրտի նրան՝ ապահովելով մեր թիկունքը: Շաղիկյանը իր հետ վերցրեց 8-րդ գնդի մի տաս ձիավորների՝ վանեցի Արշակ անունով մի երիտասարդի զլխավորությամբ, որ հետախուզության ժամանակ կրակի բռնվեց թշնամու գնդացիրներից եւ ետ քաշվեց: Կես ժամից հետո Շաղիկյանի մի բուռն քաշերը հասան սուարիների բռնած սարալացերին եւ կռվի մտան: Մեր լեռնային երկու թնդանոթները ուղղված էին թշնամու հետեւակի վրա, իսկ մյուս երկուսը՝ սուարիների վրա: Կռիվը ավելի ու ավելի տարածվում էր ու կատաղի բնույթ կրում: Պարզ էր, որ թշնամու ուժը գերազանց էր, դրա համար էլ մեր կենտրոնը սկսեց ետ քաշվել, որ կարող էր վճռել ամբողջ կռվի բախտը ի վեհական մեզ: Հրամանատարը իսկույն ձի նստեց եւ շտապեց այնտեղ. դրությունը վերականգնվեց: Մեր թնդանոթները լավ էին խըփում. այդ երեւաց նրանից, որ թշնամու գնդացիրներին լուեցրին միաժամանակ: Ապա նրանք իրենց նոր եւ ապահով տեղեր գրավելով էին սկսեցին գնդակոծել մեր առաջին շարքերը:

Շաղիկյանից լուր չկար, միայն հեռադիտակով նկատվում էր, որ նա իր ձիավորներով խառնվեց թշնամուն, որի հետեւանքով մեր մի քանի ռումբեր պայթել էին հենց նրանց մեջ՝ առանց վնասելու: Ժամ ու կես կռվից հետո մեկ էլ էն տեսանք, որ Շաղիկյանի երկու ձիավորներ մեջտեղ շարած մի ուրիշ ձիավորի, բերին մարտկոցի տեղը, ուր գործում էր դաշտային շտաբը:

Ձիավորը Աղբաբայի մի թուրք էր կարճահասակ, շեկ մազերով, երկար փափախով եւ տեղական տարազով:

Հրամանատարի այն հարցին, թե որքա՞ն են թշնամու ուժերը եւ

ինչպես են դասավորված նրանք, նա ժխտեց եւ ասաց, որ թշնամին բաղկացած է ընդամենը մի քանի տասնյակ ձիավորներից, իսկ հետեւակ կանոնավոր ասկյար բոլորովին չկա: Թուրքի հայրենասիրական զաղտնապահությունը ակներեւ էր: Նրան փաղաքշեցին, կյանքը պարզեւելու խոստում տվին, ոչ մի տեղեկություն չտվեց: Սպառնաց հրամանատարը, սպառնացին մյուս սպաները, բայց թուրքը դարձյալ անդրդվելի մնաց: Նա չափազանց վախից ժպտում էր խելագարի նման եւ ուրախ էր մանկան պես: Երբ բոլորս թողինք նրանով հետաքրքրվելն ու հարցաքննելը, նա մի քիչ սիրտ առավ, իսկ երբ նըրան հանձնեցին մի զինվորի հսկողության, նա զգաց այն սարսափելիությունը եւ լրջացավ:

Նա անօգուտ տեղ սկսեց խնդրել, որ խնայվի իրեն, որովհետեւ ընտանիքի տեր է եւ երեխաներ ունի, որոնք որբ կմնան: Կռիվը դադարեց. թշնամին տեղի տվեց մեր համառ դիմադրության, շնորհիվ միմիայն Ստեփանի հերոսական քաջազործության: Մենք ունեինք մի քանի թեթեւ վիրավորներ, իսկ թշնամու կորուստը անհայտ մընաց: Այսքանը պարզ էր, որ այդ օրը երեկոյան դեմ, Վարդանլու գյուղի ավերակներից մեկում, թշնամու կողմից մի կյանք միայն խավարեց, որը դժբախտություն ուներ մեր ձեռքն ընկնելու: Եվ քանի քանիսը մեզանից թշնամու ձեռքով ընկել էին այդ ամբողջ ողբերգության եւ դժոխալի նահանջի ճանապարհին:

Օրագիրն ընդհատվում է:



Զորավար Սեպուհ



Համո  
Օհանջանեան



Ռուբեն Տեր-  
Մինասեան



Ավետիս Ահարոնեան



Լեւոն Շահնը




Դրու



Գեներալ  
Նազարբեկով

ԿԱՐՍԻ ՄԱՐԶ (1878-1917 թթ.)



UUCUUCUUC

Դիզանը թվականը առաջնահերթ 1914 թ.

Ըստ ամերիկական կուսակցության՝ Խանջանը պետք է առ բներդի

Следует учесть, что

Առաջին առ պահը՝ առ զանազան բի

## Մարդկան կենսագործություն

#### Եղանակը և հայութեց

Плантируем саженцы на расстоянии 1-1,5 м от куста и 1 м

© 2014

909

卷之三

• 8098

— 1 —

— 10 —

Digitized by srujanika@gmail.com

#### ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

10000, 100000, 1000000

12.5 0 125 25 375

Բաշտիքը առնվիճ, և ներկայութեա է 1979 թ. օգոստական  
Սույնակը է տպադութիւն 20. X. 1979





## Z U 3 U U S U N

(ԲՈԼՈՐ ՍՈՅԱՄՆԵՐՈՎ)

50 25 50 75 100 Հազ.


### ՀԱՅԱՍՏԱՆ

- Տարբեր տարրեր՝ գոյացնելու համար՝ սահմանագիծը և պատմական սահմանը կամ առաջնային աղբականացություն ունեցող լուսավորությունը
- ..... Տարբեր տարրեր՝ գոյացնելու համար՝ սահմանագիծը և պատմական սահմանը կամ առաջնային աղբականացություն ունեցող լուսավորությունը
- Տարբեր տարրեր՝ գոյացնելու համար՝ սահմանագիծը և պատմական սահմանը կամ առաջնային աղբականացություն ունեցող լուսավորությունը
- Տարբեր տարրեր՝ գոյացնելու համար՝ սահմանագիծը և պատմական սահմանը կամ առաջնային աղբականացություն ունեցող լուսավորությունը

S



Կարսի բերդը



Երկարուղին Լոռիում



Համազասպ



Զօր. Սիլիկեան



Զօր. Ք. Արարատեան



Արքայամ  
Գիւլխանդանեան



Արշակ  
Զամալեան



Գրիգոր Ամիրեան



Գնդ. Մազմանեան



Զօր. Հովսեփեան



Փոխգնդ. Տ.Բաղդասարեան

Other groups also have their place in  
the world of women's equality, including those who believe in  
the right of women to make their own choices.

Eight hours of work & bagging, though a barren year for bagging, nevertheless the few large specimens gathered were very thick to form a sufficient base for future permanent storage.

to design by government ministerial or executive  
and subsequently transferred to another state, will be regarded as  
merely foreign and incapable of being registered. It may, however,  
not be rejected if it is shown that the original grantee has  
been deprived of his rights by reason of the transfer.

Upward slope before wife was fit, with no signs of goutiness, especially after 1920 when she began to walk more easily, especially with help of a stick. After 1930 she was fit to walk, never having had a fit. Exhibited only one bout of diarrhea by patient 4-12 following her trip to New Zealand. Came to see myself about goutiness from the year 1920 until 1930, as far as I can

to the public. After many pre-empt rights were  
in action, it became clear that the right of first refusal  
should be eliminated. This would open the way  
economically to the purchase of houses without being  
subject to the liability of compensation if first right  
holders did not accept the offer. This would  
eliminate the right of first refusal entirely, and  
allow the sale of houses with the right retained to the last possessor  
as long as he desired it. The only modification  
in this business being that:

Առօրդնեալ Հայութ-Շահնշահին Երիբար ազատ Ալյուստիւնուր Տափեա Քու<sup>1</sup> Հայութ առինչ պայմանիւնքին արակ առասպեսնոր խախ պարփառա:

Քաշտակ էր առանանիւնքին Բաղնիկնուր մի պատշաճութեան ին անուրին Գլխացիուց իսկապարքունքին հիպեայն պաշտօնական զառքին անվան դա:

“ Հազարից ամենի համարներություն ,

Եսկամ շօրամասից անձ իւ պարբերով տեսաց և պատէ հիշութ-  
պատէ. Տօդու-կլսի": Առաստաղի այցելութան - Առաջնախաչի բարեր-  
շարի հայրապետական շօրտի միջ ընդհարութ առժամաց իշտափիւս համեր, առա-  
շարիստ է հայիսկան հրատակագործութեան, առաջապար. Տարիւ վերադիմութ-  
յա և զայտի հարաւ, հայտայ պարտութ տէսում, Առաստաղի հայրապետական  
սուրբութ է կատ շնչի ու առաջապար հայիսկան շօրամասի բարերշարի տեսացի:

Գալիքի շորտերը հրամանայր՝ վելիսաւ, Գալիքի նախագի արդյունաբար կողման  
մասուն, Յ զայլս  $\sqrt{2157}$

սիրած պատմությունները...

“ Անբարեկայ պես ո՞վ չկ գրավէ և ոչ մը շօրածու առնելոց կ անդէ ո՞վ ի՞ն  
ուն քրատէ ի՞ն քաղաքա-քաղաք ո՞ւ ո՞ւ ի՞ն առաջարկութիւն ու մէականու ի՞ն ո՞ւ  
զըդիրդ և ո՞վ այդ լոյց չի՞ն հարսչ թուշէ որովհետք առնելու պիծ անցան  
է այս զագալիք։ Անմանապատճի պա մակագրութ և Հայոց աշխարհ երացա  
նացարարթուն քառից համար պարագանեան և որ հայութանի եռարարթունը  
է այս Հայոց աշխարհուն պատճի պա մակագրութ և Հայոց աշխարհ յանապատճի  
պա մակագրութ պարագանեան ի՞ն առաջարկութիւն և այսու

Հայութեան հայութեան ապահովութէ և գիշե-թե-է:

# ՏԵՂԱՆՈՒՆՆԻ ՑԱՆԿ

Աբխազիա	38	Բաշքադիկլար	108, 109
Ագարակ	89	Բարդուս լեռ	81, 83
Ագիարա	83	Բասարգեչար	87
Ազունդիր	32, 83	Բարիսովկա, գյուղ	65
Աղբեջան		Բաքու	43, 67, 72, 80
Ազատ	104	Բեզլի-Ահմեդ, գյուղ	83, 84, 93
Ալեքսանդրապոլ	20, 60, 74, 79, 86, 87, 92, 95, 97, 104, 105, 107, 108, 109, 111, 112	Բեզիտ	83
Ալթան Բոլաղ, գյուղ	103	Բեկկել	32
Ակիա թափա	70	Բեյուք-Վենի	15, 22, 54, 56, 74
Ահմեդյուրդ	67	Բեռնա	83
Աղասի Բեկլու	54	Բերաջի, գյուղ	33
Աղբաբա	94, 95, 105-109, 111, 112	Բիշլիք, գյուղ	103
Աղստաֆա	38, 47, 66	Բոշ-Բարան լեռ	54
Ամերիկա	31, 89	Բուղդա թափա	70
Անատոլիա	60	Բուղանա	45
Անգեղակոթ	65, 69		
Անգելառտ	67	Գայլի-Դրունք	56, 57
Անգլիա	62, 63, 98	Գանձակ	47, 48, 49
Անի	105	Գեղամա լիճ	76
Աշասու	44	Գերմանիա	41
Ասիա	52	Գյաղուկ	70
Արարատ	16, 57, 76	Գյոլ-Բինտ	41
Արաքս	54, 57, 64	Գորիս	61, 69, 71
Արանլուխ	22	Գուլաբերդ, գյուղ	103
Արմուտչի	29	Գուղ, գյուղ	60
Արփա	70	Գուտառուտա	21
Աքսիբաբայի ձոր	79, 88		
Բագարշայ, գյուղ	65	Դաշ թափա	70
Բագարտուն	83	Դաշկայա	83
Բաթումի	13, 15, 63	Դարալագյազ	71
Բալկաններ	89	Դավալու	56
Բայազետ	57	Դեմուր	103
		Դիլիջան	
		Դիտիվանք	43
		Դորտ-Քիլիսի	32

Եայլա	103		77-79, 84, 89, 104
Ելենովկա	75	Իշեւան Նաեւ Բարվան-	
Եվլախ	50	սարա	
Եվրոպա	33, 52, 57, 63, 76, 92	Լալա քենդ	41, 43, 46
Երեւան	11, 14-16, 21, 66, 69, 71, 73, 74, 75, 77, 79, 80, 82, 84, 99, 104, 110	Լեհաստան	
Եօլ-Քեղմազ, գյուղ	89	Խաս-քեռ, գյուղ	103
Զանգեզուր	12, 16, 48, 49, 51, 53, 59, 61, 62, 64, 67, 68, 71, 72, 75, 77, 78	Խունգուրկատ, գետ	
Զանգիբասար	14-16, 20-22, 27, 29-31, 54, 56, 85	Կաղզվան	48, 83, 93, 104
Զարուշատ	89, 94, 95, 105, 106	Կայնըխ, սար	103
Զիարեթ	83	Կարա-Թառիս	103
Զիմովկա	42, 43	Կարախտամազ	83
Էան թափա	70	Կարառչի	41, 42
Էլիա թափա	70	Կարառդան, գյուղ	83, 93, 108
Էջմիածին	104	Կարմիր քար	43
Էրգերում	56	Կափախ թեփե, սար	103
Էրիմ թափա	67	Կափե գյուղ	103
Թաթլու, գյուղ	44, 47	Կեյնախ գշլուխ	49
Թավրիզ	52, 62	Կիզիլ-Չախչախ	108-110
Թարսա-շայ, կա- մուրջ	35, 38, 39	Կիլիկիա	74
Թառուզ-կալա (Բերդ)	39, 41, 47	Կլիշենդ	47
Թիֆլիս	12, 13, 59, 66, 72, 88, 99	Կոգնա-գշլուխ	49
Թուրքիա Նաեւ Տաճ- կաստան		Կողբ	14-16, 22, 57, 64, 79, 80, 85, 90
Իգդիր	11-13, 30, 57, 74,	Կոյքուն-Դաղ	103
		Կոնդուկուր	103
		Կոստր	82
		Կովկաս	17
		Կոտիքենդ	45
		Կոշավա	83
		Կորան դաղ	103
		Կսարաբա	103
		Կուլալի	41
		Կուլու սար	32
		Կուր	38
		Հախում	49
		Հայաստան	

Ղազախ	34-43, 45, 47-49, 51, 57-60, 63, 67, 73, 80, 85, 87	Յայլա-Ներանգակ բարձունք	103
Ղամարլու	54	Նախիչենան	66, 67, 69, 88, 89,
Ղարաբաղ	12, 42, 43, 48, 49, 51, 53, 54, 56, 59, 61, 62, 64, 72, 75, 77, 84, 94	Նաուր	71, 72, 76
Ղարաղայլե, Ճոր	14, 85	Նովո-Սելիմ	44
Ղարա-Ղայա, լեռ		Նոր Բայազետ	83, 86
Սիսիան	68		57, 75
Ղարա-Ղայա	41, 42, 44	Շամշադին	30, 34, 35, 37-
Ղար-Ղայլու	35		42, 44, 45, 47-51,
Ղարաղուրտ	83		57, 58, 60, 63,
Ղարա-Զար	33		67, 83, 85, 87,
Ղարաքիլիսէ	20, 23, 30, 74, 82, 83, 90	Շայթախտ	90
Ղարաքիլիսէ (Սի- սիան)	68	Շարուր-Նախիչենան	62, 72
Ղարս	32, 69, 75, 83- 87, 90, 92-95, 98, 99, 103-107, 110		22, 48, 51, 60,
Ղարսա շայ	35, 105, 108, 109, 111		62, 63, 66, 67,
Ղմի գյուղ	112		69, 72, 85
Մազրա, կայարան	105, 107	Շաքի, սար	103
Մալայա-Վարանցով- կա, գյուղ	106	Շաքի, գյուղ	103
Մակու	64	Շիրոքո, լեռ	82
Մանքենդ	70	Շուշի	48
Մասիս	78	Չախմախուր	47
Միխայլովկա	87	Չեմբարտակ	83
Մերտենեկ	32, 83,	Չինչին	43
Մոսկվա	18, 51, 52, 66, 76	Չորաթան	44
Մուզալ	103	Չուլլու, գյուղ	103
Մուշ	55	Չումուրլու, լեռ	83
Մուրգուզ	41	Պարսկաստան	52, 62
		Պոյլի Կամուրջ	59
		Պիսլինա կայարան	83
		Պուսթար	83
		Պրոխլադնոյե	100, 105, 106
		Զիլ	63, 64
		Զլառուզա	106
		Զուլֆա	22, 52, 57, 62,
			64, 71, 72, 106

Ռատինովկա	89, 100, 101, 103	Տաճկաստան	
Ռուսաստան		Տրապիզոն	89
Ռեազլու	41	Տրոցկի	107
Սաթըլմըղ, սար	80	Ուզունթալա	20, 21
Սաղանլուխ, լեռնա-		Ուզթայ	70
շղթա	83	Ուվնիս, գյուղ	110, 111
Սամավաթ	103, 105, 107	Ուզումանլու	20
Սանահին	88, 110		
Սան-Ռեմո	34	Փանչուրեթ լեռ-	
Սասուն	55	նանցք	32
Սարամ-Սախլու	41, 43	Փենեակ	82
Սարդարապատ	104	Փիրսադ	89
Սարիղամիշ	64, 75, 81-83, 89,	Փիրվակի	109, 110
	92, 104, 105	Փոթի	15
Սիսիան	65		
Սլաբոդիս	24	Քոթանլի Վերին Եւ	
Սոքատլու	89	Ներքին	83
Սուլո	83	Բսալֆալու	89
Սուխումի	21		
Սուրմալու	15, 89, 104	Օգերո, գյուղ	106
Սեւ ծով	12, 15	Օլթի	14-16, 22, 32, 48,
Սեւ քար գյուղ	39, 40, 44, 47	Օձաքար	58, 63, 80, 81
Սեւանա վանք	76	Օրշանկա	43, 45
			108
Վարանցովկա	106	Ֆավախ-թունիս լեռ	50
Վարդանլու, գյուղ	110, 111, 113	Ֆիոլենդ	29
Վերիշան գյուղ	83		
Վերսալ	34		
Վրաստան	12, 13, 21, 30,		
	38, 51, 64		

# ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբգար, կամավո-		տից նախարար	86, 87
րական խմբի պետ	83	Գրիգորյան-Հովհան-	
Ազիզյան	30	նիսյան Սողոմոն,	
Ալեքսանյան, փոխ-		Աղրբեշանի չեկա-	
գնդապետ	54	յի պետ	61
Ահարոնյան, փոխ-			
գնդապետ	87	Դեյչենկո	29, 41
Ամիրյան Գրիգոր	12, 23, 30, 38,	Դովլաթյան	73
	42, 79, 82, 100,	Դրո	53, 54, 64-69, 71,
	102		72, 89, 104
Ավդալյան, բժիշկ	106		
Ավագյան Ներսես,		Էֆենասեւ	49
պառամենտի ան-			
դամ	28	Թամրազյան Մու-	
Ավետիսյան	82, 108	շեղ (Թանատոս),	
Արարատյան, գին-		համիարգ	40-42, 46, 66,
վորական նախկին			74-77, 79, 82, 84,
նախարար	107		87, 90, 91, 93,
Արշակ, վանեցի	112		100, 102
Արտուշ-խան	84	Թարխանով	71
		Թոթովյան	82
		Թորոսյան	73
Բաբալյան, Խնա-			
ճատարության նա-		Իշխանյան, գնդա-	
խարար	72, 86, 107	պետ	28, 38, 39, 41,
Բաղդասարյան,			43, 45, 46, 92,
փոխգնդապետ	103, 106, 111		105, 107
Բեկզադյան, Թիֆ-			
լիսում ներկայա-			
ցուցիչ	59	Լեզրան, Ռուսաստա-	
Բեկ (Բեյ) Մամի-		նի ներկայացուցիչ	91, 92
կոնյան, գեներալ	29, 30	Լևին Վ. Ի.	51
Բերբերյան Անանիա	38, 44, 47	Լեւոն Բեկ	39
Բիբարյան Վահան,			
շտաբի գրագիր	102	Խալիլ Բեյ	23, 25, 64, 65,
			104
Գամառ-Քաթիպա	76	Խանկալամով, գե-	
Գյուլխանդանյան		ներալ	15, 16, 20, 22,
Աբրահամ, Ելեմը-			74, 82, 87, 90

Խաշտրյան, գնդա- պետ	28, 39, 41, 44, 46, 47, 49, 80, 82, 87	Ղասանբաշյան, գըն- դապետ	54
Խուղաբաշյան, գըն- դապետ	79	Մազմանյան, գըն- դապետ	104
Ծաղիկյան Ստեփան	15, 16, 18, 19, 20, 22-25, 27, 29, 38, 40, 42, 79, 100, 102, 112	Մանել, գնդապետ	38, 41, 42, 47, 50, 67, 87
Ծատուրյան Վասիլի	50	Մարտիրոսյան Թա- մարա, հերոսուհի	39, 44
Կատունյան Պետո, կարնետ	12, 13	Մարքս Կ.	52
Կարա Բերիր	32	Միրաքյան Ենոք, պառլամենտի ան- դամ	110
Կարելկով, գնդա- պետ	24	Մկրյան Մկրտիչ	102
Կիլիչ, կապիտան, թնդանոթաձիգ, Սար- դարապատի հերոսնե- րից	16, 17	Մսացականյան, գըն- դապետ	30, 44, 47
Կիրով Ա. Ա.	59	Մուրատ, կապիտան	29
Հակոբյան, գնդա- պետ	29, 41, 59, 68	Մուրադ-Խան	83
Հովհաննիսյան Ար- շակ, պառլամենտի անդամ	14-16, 18, 20-23, 28, 30, 65, 110	Մեթյան	
Հովհաննիսյան Ա- շոտ, Լեգրանի անձ- նական քարտուղար	91, 92	Նազարբեկյան, գեներալ	27, 28, 31, 70, 76, 90, 99, 100
Հովսեփյան, գեներալ	32, 93, 97, 107, 109, 110	Նալբանդյան Ա.	76
Հուսեյնով	91	Նժդեհ	64
Ղազարյան Գ., լու- սավորության նա- խարար	86	Նորիկ, գրագիր զին- վոր	102
		Շահմազյան, գնդա- պետ	84
		Շանթ Լեւոն	51, 72, 76
		Շուկին	68
		Չիլինգարյան, շտա- բի պետ	93
		Պալյան, փոխգնդա- պետ, շտաբի պետ	29, 66, 79, 82

Պապոյան Խոսրով,		Վրանգել	88
պառլամենտի ան-		Վրացյան, Երկրա-	
դամ	27	գործության նախա-	
		րար	86
Զամալյան, ճանա-			
պարիների եւ հա-			
ղորդակցության			
նախարար	72, 77, 86, 88	Տեր-Մինասյան Ռու-	
Զորշ Լոյդ	63	բեն, զորական նա-	
		խարար	18, 55, 77, 99,
			110
Սեպուհ		Տեր-Սարգսյան, Վոլխ-	
Սըրմաքեցյան, Գըն-		գնդապետ	47
դապետ	103	Րաֆֆի	76
Սիլիկով (Սիլիկյան)		Փիլոս	83
գեներալ լեյտենանտ	64, 84, 94, 95,	Փիրումյան	93, 97, 107
	96, 99, 109		
Սոսի, զինվոր	38, 39		
Վասիլենկո	68	Քամիլ Փաշա	18
Վելիկանով	49	Քեմալ Մուստաֆա	51, 60, 85, 89
Վերիլով, Գնդապետ,			
ընդիանուր շտաբի			
պետ	16, 27, 29, 38,	Օհաննիսյան	82
	79, 84, 107	Օհանջանյան Համո,	
Վիլսոն Հ.	30	Վարչապետ, նախա-	
		րարապետ	23, 77, 87, 95,
			96

# **«ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ»**

Ստորագրված է տպագրության 9.04.94թ.:  
Չափսը՝ 60x84 1/16: Տպագրության եղանակը՝ օֆսեթ:  
Տպագրական 8,5 լամուլ = 7,9 պայմանական մամուլի:  
Պատվեր՝ 131: Տպաքանակ՝ 10000 օրինակ:

«Միջայել Վարանդյան» հ/տ հայ-կանադական  
համատեղ ՍՊ ընկերություն  
Երեւան, Շոպրոնի փողոց, թիվ 21



Սարգիս Նարեմյունյանը ծնվել է Վրաստանի Ախղցիա քաղաքում։ Գերազանցությամբ ավարտելով Երեւանի համալսարանի պատմության ֆակուլտետը մեկնել է հայրենի քաղաք, հինգ տարի աշխատելով որպես ուսուցիչ, վարել աղքային բնույթի պրական-հասարակական բոռն գործոնեություն։ Չհանդուրժելով իշխանությունների հայակացած քաղաքականությունը վերաբարձել է Երեւան, աշխատել Պետևառառում որպես խմբագիր, ապա՝ Մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայի վարիչ, միաժամանակ ուսանելով համալսարանի ասսիրանուրբայում։ 1970-ին պաշտպանել է թեկնածուական թեզը։ 1966 թ-ից փիլիսոփայություն է դասավանդում համալսարանում։ 1962 թ. աղքային բնույթի պրականություն տարածելու համար հետապնդվել է ԿԳԲ-ի կողմից։ 1963 թ. հայտնաբերել է սույն օրագիրը, աշխատել ձեռապրի վերծանման վրա, պարուստել հրատարակման։ 1974 թ. ԿԳԲ-ի ցուցմոնքով համալսարանի կուսղեկավարությունը Գիտխորհրդում նրան հետեւյալ մեղադրանքն է հարուցում։ “Եթե ուսումնասիրում ենք քաղաքական սխալներ թույլ տված կամ աղանդավորական շարժմանը հարող ուսանողների շրջապատը եւ իմանում, թե որ դասախոսն է ավելի շատ շփվում նրանց հետ, զարմանում ենք, որ բոլոր թելերը տանում են դեպի Սարգիս Նարեմյունյանը։ Կարծում ենք, որ նման մարդկանց առկայությունը համալսարանում անհանդուրժելի է։



Մենք չենք կարող թույլ տալ, որ նրանք այլասերեն մեր երիտասարդությանը, թոնավորեն նրանց հոգին աղքայնական տրամադրություններով...”։ Նոյն թվականին ուսկուրատը նրան զրկում է դասախոսելու իրավունքից, ապա հեռացնում համալսարանից։ 1977 թ. նրան թույլատրվում է միայն ֆակուլտատիվ առարկաներ դասավանդել Պոլիտեխնիկ ինստիտուտում։ Այժմ աշխատում է Ճարտարապետա-շինարարական ինստիտուտում եւ Ճարտարապետական համապարանում։ Նեղինակ է չորս մենագրության եւ շորջ 100 հոդվածների։ Մինչ Նայաստանի մամուլը լույթ յամբ էր անցել այդ հրապարակումների կողքով, ՀՅԴ-ի “Նայրենիք”, “Ազգակ” պարբերականները ճափարուն հոդվածներով ժամանակին ներկայացրել են այդ աշխատությունները ոչառություն հրավիրելով ենթատեքստերի վրա։